


*Տպագրվում է «Ֆլորա ֆամիլի»
հիմնադրամի հովանավորությամբ
և «Հայաստան» համահայկական
հիմնադրամի օժանդակությամբ*

*This survey is published
by financial assistance
of the "Flora Family" fund and under sponsorship
of the "Hajastan" All Armenian fund*



**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАСКОПКИ В АРМЕНИИ

№ 20

**Д В И Н
II**

К.Г. КАФАДАРЯН, А.А. КАЛАНТАРЯН

ГОРОД ДВИН И ЕГО РАСКОПКИ

(1973-1980 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА

ЕРЕВАН 2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

№ 20

Դ Վ Ի Ն

II

Կ.Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, Ա.Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԴՎԻՆ ՔԱՂԱՔԸ ԵՎ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

(1973 - 1980 թթ.)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2002

ISSN 902/904
907163.4
71520

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

պ.գ.թ. Գ. Յ. Կարախանյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել՝ պ.գ.դ. Գ.Ա. Տիրացյանը
պ.գ.թ. Ն.Գ. Հակոբյանը

Ղ 520 *Ղաֆադարյան Կ.Գ., Քալանթարյան Ա.Ա.,* Դվին II, Դվին քաղաքը
և նրա պեղումները (1973-1980 թթ.) / Խմբ.՝ պ.գ.թ. Գ. Յ. Կարախանյան: - Եր.:
«Գիտություն» հրատ., 2002, 254 էջ + 7 էջ նկ.:

Աշխատանքում մանրամասն ներկայացված է Դվինի 1973-1980 թթ. պեղումների
պատմությունը և հարուստ նյութերի հիման վրա արված են ընդհանրացումներ
քաղաքաշինության, արհեստագործության, սոցիալական հարցերի շուրջ: Ձգալի տեղ
է հատկացված միջնադարյան քաղաքի շերտագրությանը և նյութական արտադրության
ուսումնասիրությանը: Առանձին գլխով ներկայացված է V դ. կաթողիկոսական պալատի
ճարտարապետությունը: Հավելվածում տրված է Դվինի դրամների ժողովածուն:

Նախատեսված է հնագետների, միջնադարյան Հայաստանի պատմության և
մշակույթի հարցերով հետաքրքրվողների համար:

Ղ $\frac{0504000000}{703(02)-2002}$ 2002

ԳՄԴ 63.4

ISBN 5-8080-0018-1

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2002
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Ե Ր Կ ՈՒ Խ Ո Ս Ք

Դվինի 1973-1980թթ. պեղումների արդյունքների վերաբերյալ ներկայացվող աշխատանքը հեղինակների կողմից սկսվել է շարադրվել 1975թ.: Հեղինակներից մեսի՝ Դվինի արշավախմբի ղեկավար, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի անժամանակ մահի չխանգարեց հաշվետվությունն ավարտելուն և ամբողջական վիճակով այն հրատարակության հանձնելուն: Սակայն 1985թ. հրատարակչությունում գտնվող գիրքը մեզնից անկախ պատճառներով չհրատարակվեց: Ի հարկե 20-ամյա վաղեմություն ունեցող գրքում առաջադրված որոշ հարցեր Դվինի հետագա տարիների պեղումների ընձեռած հնարավորություններով ճշտվել են, ավելի հրկվել: Սակայն ներկայացվող հնագիտական նյութը, հուշարձանի ժամանակագրության, շերտագրության հետ կապված խնդիրները, չեն կորցրել իրենց թարմությունը և բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում սիջնադարյան Հայաստանի նյութական մշակույթի, արհեստագործության, քաղաքաշինության, առևտրատնտեսական, հասարակական մի շարք կարևոր հարցերի ուսումնասիրության համար:

80-ական թվականներից հետո Դվենի մշակույթի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակվել: Այսպես դրանց մատենագիտությունը տեղ չի գտել ներկա աշխատությունում և կընդգրկվե պեղումներին նվիրված հաջորդ պրակներում: Նպատակահարմար ենք գտնում գիրքը ներկայացել մույն ձևով, ինչպես այն եղել է նախնական վիճակով, հրկու հեղինակների մտաբեղացմամբ:

Ա. Քալանթարյան

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք, վարչատնտեսական և մշակութային խոշոր կենտրոն Դվինը պարրերարար պեղվում է շուրջ 50 տարի (պեղումները սկսվել են 1937 թ.): Պեղումների արդյունքները հիմնականում ամփոփվել են արշավախմբի ղեկավար, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները», երկրատոր աշխատանքում, որի առաջին եատորը (Երևան, 1952թ.) ընդգրկում է 1937-1939 և 1946-1950թթ. ընթացքում կատարած պեղումները, երկրորդ հատորը՝ 1951-1972թթ. աշխատանքները (լույս է տեսել 1982թ.): Հրատարակվել են նաև Դվինի կենտրոնական թաղամասի 1964-1970թթ. պեղումների արդյունքները (*Քալանթարյան Ա.Ա.*, 1976): Ներկա աշխատությունը կազմում է մախորդների օրգանական շարունակությունը: Այստեղ հիմնականում տեղ են գտել Դվինի կենտրոնական թաղամասում վերջին տասնամյակում բացված V-VI դդ. պալատական շինության պեղումների արդյունքները: Համակողմանի քննարկվում են այդ տեղամասի 893թ. երկոաշարժի հետևանքով ավերված VIII-IX դդ. շինություններից եայտնարերված նյութերը: Ներկայացվում են նաև միջնարերդի ստորին հատվածում բացված, այսպես կոչված առևտրաարհեստավերական թաղամասի պեղումները, որոնք հսկայական նյութ են տալիս քաղաքի գոյության վերջին շրջանի վերաբերյալ, թե՛ ճարտարապետական (ժողովիղական ընկերի տներ) և թե՛ նյութական մշակույթի առումով: Հետաքրքիր պատկեր է բացվել միջնաբերդի եարավային ռուրգի շրջակայքում, որտեղ պեղվում է կոաշաղախ պատերով մոնումենտալ մի մեծ շինություն: Այս հատվածի պեղումները կարևոր են նաև քաղաքի միջնադարյան շերտագրությունը պարզելու համար:

Եվ վերջապես զգալի աշխատանքներ են տարվել Դվինի տարածքի եելլենիստական բնակավայրի ուսումնամիության ուղղությամբ: Գրքում մեծ տեղ է հատկացվում արհեստագործական տարրեր ճյուղերի արտադրանքի քննությանը, շերտագրական համոգիչ տվյալներով տրվում է այդ նյութերի թվագրությունը: ճարտարապետական և հնագիտական նյութերի քննարկումը ենարավերություն է ընծեռում եետաքրքիր դիտողություններ անել միջնադարյան քաղաքաշինության. քաղաքի սոցիալական պատկերի, արհեստագործության և այլ ընագավառների վերաբերյալ:

1975-1980 թվականներին արշավախմբի մասնակեցների կողմից հրատարակվել են ավելի քան երկու տասնյակ մենագրություններ և հոդվածներ*, որոնք վերաբերում են միջնադարյան Հայաստանի մշակույթի, մասնավերապես, Դվինի հնագիտական նյութերի տարբեր հարցերի ուսումնասիրությանը¹: Քաղաքի պեղումների արդյունքները լու-

* Նախորդ տարիներին ապված աշխատանքների ցանկը ներկայացված է Կ.Գ. Ղաֆադարյանի «Դվին քաղաքը և նրա պեղումները» մենագրության երկու հատորներում:

սաքանվել են հանրապետական, միութենական և միջազգային գիտաժողովներում:

Դվինի հնագիտական արշավախումբը 1973-1976թթ. ղեկավարել է պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանը, 1977-1980թթ.՝ պատմ. գիտ. թեկնածու Արամ Քալանթարյանը (1973-1976 թթ. պետի տեղակալ): Արշավախմբի աշխատանքներին մասնակցել են պատմ.գիտ. թեկնածուներ Զոհիփսիմե Ջանփոլադյանը (ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի ռաժանմունք, 1974-1980 թթ.), նույն ինստիտուտի աշխատակից Կարինե Քուչմարյովան (1973-1976 թթ.), ճարտարապետության թեկնածու Կորյուն Ղաֆադարյանը (արշավախմբի ճարտարապետ, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտ, 1978-1980թթ.), պատմ. գիտ.թեկնածուներ Նյուրա Հակոբյանը (1973-1980 թթ.,1978-1980 թթ. արշավախմբի պետի տեղակալ), Ֆրինա Բաբայանը (1973-1980 թթ.), Աղավնի Ժամկոչյանը (1973-1980թթ.), Հրաչ Ասմարյանը (Մանկավարժական ինստիտուտ, 1973թ.), կրտսեր գիտաշխատող Գայանե Քոչարյանը (1973-1980թթ.), Լաուրա Վարդանյանը (1973-1975թթ.), ճարտարապետ Գրիգոր Ղաֆադարյանը (Պոլիտեխնիկական ինս-

¹ *Սենագրություններ.*

1. *Ս. Ս. Քալանթարյան*, Դվին, I, Կենտրոնական թղթամասի պեղումները 1964- 1970 թթ., Երևան, 1976:
2. *К.Х. Кушнарєва*, Древнедшше памятнику Двина, Ереван, 1977.
3. *Ն.Գ. Հակոբյան*, Սիջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 10, Երևան, 1981:
4. *Ս.Ս., Ժամկոչյան*, Սիջնադարյան Հայաստանի հախճապակին IX-XIII դդ., «Հայաստանի հնագիտական հուշարձանները», 10, Երևան, 1981:
5. *Ֆ.Ա.Բաբայան*, Սիջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, Երևան, 1981:
6. *Կարո Ղաֆադարյան*, Դվին օտոաթո և նրա պեղումները, II, Երևան, 1982:
7. *Р.М. Джанполадян*, Сфєроконические сосуды Двина и Ани.- "Археологические памятнику Армении", 12, Ереван, 1982.
8. *А.А.Калантарян*, Раннесреднековые буллы Двина.- "Археологические памятнику Армении", 13, Ереван, 1982.
9. *Խ.Ա. Մուշեղյան*, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երևան, 1983:
Յոգվածներ
1. *Ս.Ս.Քալանթարյան*, Սաաանյան կնքադրոշմների և դրանց կիրառական որոշ կողմերի մասին.- ՊԲՀ, 1977, հ.3:
2. *К.А.Костанян, А.А.Калантарян*, Следы стекольного производства в раннесредневековом Двине.- ИФЖ, 1977, N 4.
3. *Ս.Ս.Ժամկոչյան*, Բնակելի շենքերի պեղումները Դվինի ստորին քերդում 1975թ. -ՊԲՀ, 1978, N 1:
4. *Կ.Ղաֆադարյան, Ս.Քալանթարյան*, Դվինի 1975-1976 թթ. պեղումները.- «Լրաբեր» 1978, N2:
5. *А.А.Калантарян*, Новые материалы о дворцах раннесредневековой Армении.- II Межд. симп. по арм. искусству, Ереван, 1978.
6. *Ֆ.Ա.Բաբայան*, Խեցեղենի թրծման ենոց Դվինից.- ՊԲՀ, 1979, N 1:
7. *Ս.Ս.Քալանթարյան*, Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքները 1977 թթ.-ՊԲՀ, 1979, N 7:
8. *Գ.Գ. Քոչարյան*, Դվինը անտիկ դարաշրջանում.- ՊԲՀ, 1979, N2:
9. *Ս.Ս.Քալանթարյան*, Ապակեգործությունը Հայաստանում V-VIII դդ.,- «Լրաբեր» 1980, N 7:
10. *Գ.Գ. Քոչարյան*, Հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտ Դվինում.- ՊԲՀ, 1980, N 2:
11. *Ս.Ս. Ժամկոչյան*, Դիմակազարդ անոթներ Դվինից և Անիից. - ՊԲՀ, 1981, N 4:
12. *Ս.Ս.Քալանթարյան*, Դվինի 1978-1979 թթ. պեղումները.- «Լրաբեր», 1982, N 2:
13. *Ս.Ս.Քալանթարյան*, Դվինի 1980թ. պեղումների հիմնական արդյունքները, - «Լրաբեր», 1982, N12:

ախտուտ, 1976 թ.), լաբորանտ Մկրտիչ Փիլթոյանը (1974թ.), ասայիրանտներ Արմեն Պարսամյանը (1973թ.), Վարդան Հարությունյանը (1976-1978թթ.), Համյետ Պետրոսյանը (1980 թթ.), լուսանկարիչներ Արտաշես Վրույրը (1973 թ.), Գրիգոր Ժամկոչյանը (1977թ.), Ռաֆիկ Հակոբյանը (1974-1975 թթ., 1979-1980թթ.), վերակազմողներ Վահրիճ Ղազարյանը (1973-1975, 1978-1980 թթ.), Ոոհսես Հովհաննիսյանը (1978 թ.), գծանկարիչ Նորայր Խանզադյանը (1977 թ.), ավտովարորդներ Ռազմիկ Լևոնյանը (1974-1975, 1978թթ.), Իշխան Աարտիրոսյանը (1973, 1977թթ.), ինչպես նաև մի շարք պրակտիկանտներ Երևանի պետական եամալսարանից:

Դվին են այցելել անսիկ հնագիտությանը և արվեստին նվիրված («էյրենե») սիմպոզիումի և Հայ արվեստին նվիրված միջազգային 2-րդ սիմպոզիումի մասնակիցների մեծ խումբ, ճարտարապետությամբ և հայագիտությամբ զրադվող արտասահմանյան մասնագետներ: Հայ միջնադարյան հնագիտության նվաճումներին ծանոթանալու և փորձի փոխանակման համար Դվին են հրավիրվել Մոսկվայի, Լենինգրադի, Միջին Ասիայի, Վրաստանի ռազմաթիվ մասնագետներ:

Գ Լ ՈՒ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն


1973-1980 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1973 թ. պեղումները. - Աշխատանքները տարվել են քաղաքի *կենտրոնական. քաղաքային* զոնայում, որտեղ դեռևս 1971թ. -c-18 քառակուսում հորը պեղելու ժամանակ, 3 մ խորության վրա ուրվագծվեց արևմուտքից-արևելք ձգվող (դեպի հյուսիս շեղումով) սպիտակ ավազաքարով շարված կանոնավոր պատի մի հատված: 1972 թվականին սույն պատի մյուս երեսը մաքրելու ժամանակ, պատից 1.4 մ հեռավորության վրա բացվեց կավե պնդացած հատակի վրա ամուր մատած մի զանգվածեղ խարիսխ (քառակուսի -e-18): Պարզ էր, որ այստեղ երևան էին գալիս մեծ շինության հետքեր, ուր ամենայն եավանականությամբ, պետք է լինեին պուրակաբարդ դասիլիճ (նկ. 1 աղ. II, 1): Պեղավայրում հատակագծային հստակ պատկեր ստեղծելու նպատակով, 1972-1973 թթ. այդ եատվածում պեղվեց շուրջ 350 քառ. մ տարածություն (-c-20, -d-17-20, -e-17-20, -f-18-21 քառակուսիները): Այդ տարածքում, անմիջապես VII դ. շերտի տակ, բացվեց մոխրաշերտի մեջ թաղված հսկա կառույցի մի հատված:

Երեք տարիների ընթացքում պեղվել է շինության կենտրոնական սյունազարդ դահլիճի, հյուսիսային ու հարավային սենյակների որոշ մասը (աղ. III, IV): Դահլիճն ունեցել է սվաղած կավապատ եատակ, պատերը (լայնությունը 1.5 մ) շարված են սպիտակ ավազաքարով և հում աղյուսով, որոնք երկու կողմից սվաղված են: Դահլիճի լայնությունը 12,2 մ է, երկարությունից առայժմ բացվել է մոտ 20,0 մ: Բացվել են նաև երկու մուտքեր: Փոքրը՝ արևմտյան պատի հարավային անկյունում և մեծը՝ հյուսիսային պատի անկյունային խարիսխի դիմաց: Պատի լայնությունը հետագայում փորված եորի եետևանքով հնարավոր չէ որոշել: Եթե ընդունենք, որ դահլիճի սյուների միջև եդած հեռավորությունները կայուն են, ապա նրա մոտավոր երկարությունը (4 -ական սյան դեպքում) կհասնի առնվազն 30 մ: Այս ենթադրությունը զուրկ չէ հավանականությունից, քանի որ այդ մասում դեռևս նախորդ տարիներին բացված մի մեծ հորի կտրվածքում, հստակ դիտվում է հատակը:

Կասկածից վեր է, որ դահլիճի ծածկը եենվել է եաստարուն տուֆե սյուների վրա, որոնք տեղում չեն սլահպանվել: Հետևաբար, ծածկի մասին առայժմ ոչինչ ասել չենք կարող, միայն կարելի է հավաստել, որ նրա մեջ մեծ տեղ են գտել եդեզը և կավը, որոնց մնացորդները նկատվում են: Հարավային պատից ուղղահայաց ձգվում են թավականին լավ տաշված, սպիտակ ավազաքարով շարված պատեր, որոնք, ակներևարար սյատկանում են այդ շինության սենյակներին: Հարավային թևի հետագա պեղումներին խանգարում է գուռի միջով ընթացող խճուղին: Հյուսիսային մասում, դեռևս

1970-1971 թթ. ըացվել են նույն քարերով շարված պատերի հետքեր, որոնք, անշուշտ, հյուսիսային թևի սենյակների մնացորդներ են (նկ. 1): Շինությունը ոչնչացել է հրդեհից. հատակը ծածկված է մոտ 30-40 սմ հաստության մոխրաշետով, այրված աղյուսների, փայտի մնացորդներով: Հրդեհից հետո շինությունը չի վերականգնվել:



Նկ. 1. V և IX դդ. շինությունների հատակագիծ և կտրվածք: 1972 թ. պեղումներ: Կենտրոնական թաղամաս:

Շինության շերտի V-VI դդ. թվագրությունը կասկած չի եարուցում: Գտնված նյութերը առայժմ քիչ են, սակայն խիստ հետաքրքիր և ընդորոշ վաղմիջնադարյան մշակույթի

համար: Այստեղ անմիջապես հաստակոն գտնվել են կլոր, փորագիր, տաշված բլթակներով հաստապատ ապակե թասերի բեկորներ, եռաթև և ձվաձև կտրվածք ունեցող երկաթե նետասլաքներ, կճուճների ակոսավոր շրթնամասեր, ջնարակած սափորի ղեկորներ և այլն (աղ. XXVIII, 6, 9): Այս թվագրությունն ավելի ևս հաստատվում է բուն շերտագրական պատկերով: Պալատական շինության մնացորդները ծածկված են տուֆի տաշվածքի հաստ շերտով, որի մեջ կան նաև կաթողիկե եկեղեցու խճանկար հատակի և հաբդարանքի առանձին բեկորներ: Ակներևաբար այդ շերտն առաջացել է VII դ. սկզբին՝ եկեղեցու վերականգնման աշխատանքների ժամանակ (շերտագրության հաբցերը մանրամասն քննության կառնվեն առանձին գլխում): VI դարի վերջերին պալատն արդեն ավերված էր և հրդեհված:

VII-VIII դարերի շերտը բավականին ցայտուն է և կերավայրի մի շարք հատվածներում: Եկեղեցու VII դ. սկզբի վերակառուցման ժամանակ առաջացած տուֆ քարի թափոնները և փուլ եկած նախորդ շինության մնացորդներից գոյացած շերտը, մեզ հիմնավոր կովաններ է տալիս այդ առումով: Այդ շերտում գտնվել է ընդգծված պսակներով կճուճների, վերադեք բուսական զարդերով փոքր կարասի ղեկորներ (ՀՊՊԾ 2614/33, աղ. XXVIII, 1,3), որոնք նման են խաղողի որթատունկի զարդով կարասի ղեկորին՝ գտնված կենտրոնական թաղամասից (*Ղաֆադայան Կ. Գ.*, 1952, էջ 194; *Քալանթարյան Ա.Ա.*, 1970, էջ 21): Շատ են ապակու խարամի, խտտան առաքկաների բեկորները, վանակատի կտորները: Այունագարդ դահլիճի հաբավային մասի -f-16 քառակուսում, երկրորդ խառսիսի մոտ, անմիջապես հատակի վրա բացվեցին թըծած աղյուսով շարված պատերի մնացորդներ, որոնք հավանաբար արտադրական կառույցի են պատկանում (աղ. XXVI, 1): Այդ պատերը VII դ. խճի տակ էին, հետևաբար կառույցը հիմնվել է պալատի ավերումից հետո և գոյատևել է մինչև VII դ. սկզբները: Առխարաշերտում գտնված նյութերը, կավե հալոցների բեկորները, ապակու մուգ դարչնագույն հարթ ու փոքր սալերը, այրված աղյուսները հավաստում են ապակեգործական արհեստանոցի առկայությունը:

Պեղվող հատվածի IX դարի ճարտարապետական կառույցները վատ են պահպանվել: Վերջիններին հատակագծի վերաբերյալ հնարավոր չէ ընդհանուր պատկերացում կազմել: IX դ. բոլոր շինությունների պատերը շարվել են հում աղյուսով (պատի լայնությունը տատանվում է 0.50-0.70 մ): Հնագիտական հարուստ նյութերը, որոնք մեծ մասամբ գտնվում են հորերից, հնարավորություն են ընձեռում մանրամասն քննել IX դ. մշակույթի և արհեստային արտադրանքի հետ կապված շատ հարցեր: Բացառիկ հարուստ է հասարակ, անջնարակ խեցեղենի ժողովածուն: Ձևերով ու շագրավ են պսակների վրա լայն ակոսներ ունեցող դեղնավուն կճուճները (աղ. XXXIII), շեփորած և վզով սափորները, թասերը: Անթ թիվ են կազմում փող հիշեցնող ելուստով ճրագները, ծորակով անոթները, ռազմաստիճան պսակով և հորիզոնական ունկերով կճուճները: Առկա են ջնարակած անոթները եռագույն նկարտգարդումով (դեղին, կանաչ և դարչնագույն), սլաքազարդերով, ինչպես նաև միագույն կանաչ անոթները: Ռոշակի քանակ են կազմում մերձավորարևելյան ծագում ունեցող կաթնավուն՝ կապարե խուլ ջնարակով անոթների ղեկորները: Նմանօրինակ խեցեղեն հայտնի է Դվինի նախորդ տարիների պեղումներից և անդրկովկասյան ժամանակամերձ այլ հուշարձաններից (*Ղաֆադայան Կ. Գ.*,

1952, էջ 209-210, նկ. 187, 189; *Քալանթարյան Ա.Ա.*, 1971, *Шелковников Б.А.*, 1940; *Якобсон А.А.*, 1959 և ուրիշներ):

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացում վերջին տարիների պեղումներից գտնված ապակե առարկաները, որոնք Դվինի IX դ. ապակեգործության, ապակու ռազմազան արտադրության առկայության խոստում վեաներ են: 1971-1973թթ. նյութերի մեջ մեծ թիվ են կազմում կանեյուրազարդ փոքր թասերը, տարրեր երանգներով ռջջավոր և հարթ պատերով ռաժակ-գավաթները, դամպարները, կոր պատերով լայն փոված թասերը (աղ. I.II): Դվինի ապակուն ընդհանուր է երկոչափական և ռուսական գարդերով, արարատառ գրերի ընդօրինակությամբ նկարուն գավաթ-րաժակները: Լկոպիմի ռաժակի մի ռեկոր գտնվել է -f-18 քառակուսում (նկ. 17₁, աղ. L, 9): Ուշագրավ է մոզայիկ ապակե թամի ռեկորի գյուտը IXդ. հորում: Նման թասեր եայտնի են Մերձավոր Արևելքում (*Lamm C. J.*, 1941, աղ. XIIIa; *Smith W.R.*, 1956, N 484): Մոզայիկ թամի մեկ օրինակ հայտնի է Դվինի միջնարեդի նախորդ տարիների պեղումներից (*Ջանփոլադյան Գ.Մ.*, 1974, էջ 58, նկ. 10):

Կարևոր գյուտերից պետք է եամարել -d-18 քառակուսու հորերից մեկում կավե երեք կնքադրոշմների հայտնարերումը, որոնք պատկանում են արարական շրջանին: Եթե մինչև այժմ կնքադրոշմներ հայտնի էին Ասսանյան և նախորդ դարաշրջաններից (Դվինում գտնվել են ուշ Ասսանյան շրջանի մի քանի տասնյակ կնքադրոշմներ), (*Калантарян А.А.*, 1982), ապա արարական կնքադրոշմներն ընդհանրապես առաջին անգամ են հանդիպում:

Ձգալի թիվ են կազմում մետաղե առարկաները: Ձենքը՝ գերազանցապես քառակող, պոչուկով երկաթե նետասլաքներ են, ետ ծալված ծայրերով միասայր դաշույններ: Ձարդերի մեծ մասը պղնձից է՝ օղեր, մատանիներ, շքասեղներ և այլն: Գտնվել են նաև արարական դրամներ:

Պեղվող հատվածի վերին շերտերը և շինությունները, որոնք թվագրվում են X-XIII դարերով, լսաթարվել են ուշ շրջանի ռավակամին խիտ թաղումներով: Կենտրոնական թաղամասը 893թ. երկոչաբժից հետո շատ թիչ է կառուցապատվել: Նկատվում են կավաշեն պատերով շինությունների հետքեր, առանձին հատակներ և հորեր:

Ուշագրավ է -d-17 քառակուսում 0,7 մ խորության վրա ռացված թոնիր ու հոր ունեցող փոքր շինությունը: Կենտրոնական թաղամասի ուշ շերտերում բացված հորերին ընդհանուր են թրծած աղյուսով շարված ռերանները: Դրանք մեծ մասամբ օգտագործվել են ջրահեռացման նպատակներով: Լկո երրերում հնագիտական նյութեր գրեթե չեն հանդիպում:

Շերտում հայտնարերված նյութերի մեջ ուրույն տեղ են գրավում մուգ կանաչ միագույն ջնարակով փորագիր վարդյակներով թասերը, կապտավուն ապակուց եարթ ապարանջանները, եորիզոնական կլոր կանթերով հասարակ կճուճները, կափարիչների ռեկորները, երկանքի վրայի քարի շատ հնքնատիպ օրինակո, ապակե ռարակ պատերով սրվակների առանձին ռեկորներ, որոնցից մեկի եատակոն դրոշմված է սիրամարգի պատկեր (աղ. L, 8):

Քաղաքի վաղ շրջանի պատմության և հնագիտական ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցան VII դ. կաթողիկոսարանի և միանավ ռազիլիկ եկեղե-

ցու միջև ընկած տարածքի պեղումները: Նախորդ տարիներին այդ հատվածում ռացվել էին ամենաուշը VII դարում թվագրվող շինություններ և շատ հետաքրքիր էր այդ խորությունից շերտի հետագուս խորացումը: Պեղվող հատվածը ռաժանվեց 6 ըջիջների (3,0x3,0 մ), որոնցից մեկը գտնվում է պալատի հարավարևելյան սենյակում (2-րդ ըջիջ): Այստեղ, անմիջապես սենյակի տակ, մոտ 20 սմ խորությունից սկսեց ռացվել սափտակ ավազաքարի տաշվածքի շերտ (աղ. VII, 1), որն, անշուշտ, առաջացել էր եռանավ ռազիլիկ եկեղեցու կառուցման ժամանակ IV-V դդ.²: Այդ խճաշերտն ավարտելուց հետո 70-80 սմ խորությունից սկսվում է մոխրով և օրգանական նյութերով հագեցած մի շերտ, որը հելլենիստական շրջանի շերտ է՝ հարուստ խեցեղենի ռավականին հետաքրքիր նմուշներով³: Բացի խեցեղենից պահպանվել են պատերի առանձին հետքեր, որոնցով, սակայն, ամբողջական պատկեր չի ստեղծում:

1,30-1,50 մ խորությունից դուրս են գալիս սև փայլեցրած խեցեղենի ռեկորներ, ռացվում են կանոնավոր պատեր, որոնք մտնում են անմիջական կաթողիկոսարանի ու միանավ ռազիլիկի տակ: Սակայն ուշ շրջանի մոնումենտալ շենքերի առկայությունը հնարավորություն չտվեց պատերը ամբողջացնել և լուծել կառույցների հատակագծման հարցերը: Այդ շերտը Դվինի միջնաբերդում և մյուս տեղամասերում հանդիպող եանրահայտ՝ մ.թ.ա. IX-VIII դդ. շերտն է, որ տալիս է շատ հարուստ նյութեր կապված արտադրության ոլորտի, մշակույթի և պաշտամունքի տարրեր ընդհանրության հետ: N 3 ըջիջում ամենանշանավոր ատրուշանի հայտնաբերումն է: Այն եենված էր պատերից մեկին, ուներ քառակուսի հիմք: Ատրուշանի առջև դրված էր պաշտամունքային անոթ, իսկ քիչ հեռու գտնվեց կավե կուռքի ռեկիր (*Кушнарева К.Х.*, 1977, с. 36-37, ՅՊՊԹ 2614/8, նկ. 48):

Շերտագրական առումով, հատկապես կաթողիկե եկեղեցուց հյուսիս տեղադրված կաթողիկոսական պալատի կառուցման ժամանակը ճշտելու առնչությամբ հետաքրքիր պատկեր ռացվեց № 6 ըջիջում: Այն իր մեջ ընդգրկում է կաթողիկոսարանի հյուսիսարևելյան հատվածը (աղ. VII 2): Մաքրվեց պալատի արևելյան պատի մի հատվածը: Անմիջապես պատի տակ ռացվեցին ուռուցիկ եղևնաձև զարդագոտիներով կարասներ, որոնք շատ են հանդիպում ինչպես Դվինի, այնպես էլ Այգեվանի, Հացավանի (*Տիրացյան Գ.Ա.*, 1963) և այլ վաղ միջնադարյան հուշարձանների IV-VI դդ. շերտերում: Տեղում պահպանվել էր կարասներից մեկի կավե կափարիչը, որի վրա փորագրված է «*Գրիգոր*» անունը (ՅՊՊԹ 2614/59, աղ. XXVIII, 4): Ամենայն հավանականությամբ IV-V դդ., երբ կառուցվել է եռանավ ռազիլիկ եկեղեցին, այստեղ եղել են ինչ որ տնտեսական շինություններ: Այս կապակցությամբ և հարակից այլ նյութերով վերստին վերականգնվում է կաթողիկոսարանի թվագրությունը⁴: Եթե առաջ ուսումնասիրողների մի մասը Սայր տաճարից հյուսիս տեղադրված կաթողիկոսական պալատը անվերապահորեն համարում էր V դ. 70-ական թվականների կառույց, ապա այժմ նրա VII դ. սկզբին կառուցված


² Խճի այդ շերտը դիտվում է եկեղեցուն հարող տարածքի ողջ հատվածում և հայտնի էր արդեն 60-ական թվականների պեղումներից:

³ Տե՛ս Գ.Քոչարյանի 1973թ. ծրագիրը: Պատկեր է Դվինի Խնազիտական հանգրվանում:

⁴ VII դ. կաթողիկոսարանի թվագրության հարցերը կքննարկվեն այլ գլխում, V դարի պալատի քննության առնչությամբ:

լինելու հանգամանքը կասկած չի առաջացնում: Հետաքրքրի է արձանագրության հատվածի գյուղը այդ շերտում: Ինչքան մեզ հայտնի է, դա կիրառական արվեստի առարկաների վրա հանդիպող արձանագրություններից վստահություն է և այս առումով ռացառիկ նշանակություն ունի:

Տևական ընդմիջումից հետո 1971 թվականից պեղումները վերսկսվեցին Դվինի միջնաբերդի արևմտյան հատվածում, անմիջապես պարսապալիին կից: Նախորդ տարիներին այստեղ բացվել էին ոչ սրրատաշ քարե իմքերի վրա հում աղյուսե պատերով շինություններ, շատ եետաքրքիր կառույցներ՝ XI-XIII դդ. հարուստ նյութերով (Ղաֆաղարյան Կ.Գ., 1982, էջ 21): Շինությունների այդ շարքում իի ուրույն տեղն ունի փոքր առանձնասենյակը, տուֆ քարից պատրաստված պատրիանով, որի մեջ ներդրված էին ջնարակած և եախճապակե իիանալի անոթներ: 1972 թ. միջնաբերդի արևմտյան լանջում, որը պայմանական անվանվում է ստորին բերդ, ռացվեց թրձած աղյուսով կառուցած մի հետաքրքիր շինություն՝ կոր պատերով և աղյուսաշար հատակով⁵: Գտնված նյութերը թույլ են տալիս ենթադրել, որ այստեղ կարող են լինել բաղնիքի շինության մնացորդներ (Նկ. 2, աղ. X, 1, XVI, 2):



Նկ. 2. Թրձած աղյուսե պատերով շինության (բաղնիքի) հաասակագիծը: 1972 թ. պեղումներ: Ստորին բերդ:

⁵ Տես սնդավնի ժամկոչյանի 1972 թ. օրագիրը. պաիպանվում է Դվինի հնագիտական հանգրվանում:

1973 թ. պեղումները կատարվել են -g -22, -h- 22-24, -i -25-28 քառակուսիներում: Պեղվող հատվածների կտրտվածությունը հնարավորություն չի տալիս պարզել շենքերի հասակագծային պատկերը, չնայած տեղ-տեղ բացվում էին նույն տեխնիկայով շարված պատերի հատվածներ: Հիշատակության է արժանի -i -26, - 27 քառակուսիներում բացված արևելքից-արևմուտք ձգվող 5,5 մետր երկարության պատը (0,8 մ լայնությամբ), որը պատկանում է միջնաբերդի պարսաի մոտ կառուցված XI դարի շինություններին: Կարևոր է նշել, որ այդ շինությունները բավականին մեծ են եղել և ունեցել են նաև արտադրական ու տնտեսական բաժանմունքներ: Նույն եատվածում երևան է գալիս մեծ քանակությամբ երկաթի խարամ: Առկա է բավականին թանձր մոխրաշերտ: Գտնվել են նաև թրծած աղյուսներով շարված օջախի հետքեր, որոնք, հավանաբար, դաբրնի քուրայի մնացորդներ են: Հայտնաբերվել են նաև դանակի շեղբեր, գամեր, դռան փակեր, օղեր, զենք և այլն: Հատկապես կարելի է նշել սրի շեղուի, պատյանի քայքայված բեկորները, դաշույնի դաստապանակի մասերը, որոնք շատ հազվադեպ են գտնվում միջնադարյան շերտերում:

Առանձնապես ուշագրավ են պարսաի մոսից գտնված կավե ջրատար խողովակների բեկորները: Հայտնի է, որ կենտրոնական թաղամաս ջրատարը անցել է խրամատի վրա գցած կամիջի տակով: Հետևաբար պատահական չպետք է համարել խողովակների հայտնաբերումի ստորին բերդում: Դեռևս 1899թ. Ն.Ասող պեղումներ է կատարել պարսաի այդ հատվածում և պատկանված օղազույց եղևում է, որ պարսաի տակով անցել են ջրատար խողովակներ (Արստ, 1899, շ. 31,32): Մյուս կողմից որոշ ջրատարներ կապված են եղել նաև արտադրության հետ, հատկապես պարսաի մոտ եղած արհեստանոցների կարիքները հոգալու և ջուրը հեռացնելու համար: Այս երևույթը նկատելի է ինչպես Դվոնում, այնպես և միջնադարյան այլ քաղաքներում:


Ատորին բերդում շատ են խեցեղեն նյութերը, հատկապես XI-XIII դդ. ջնարակած խեցեղենը: Դրանք փորագիր երկոաչափակաև ու բուսական միագույն և բազմագույն զարդերով թասեր են, իտհանոցային հասարակ սպասքը, լուսավորության միջոցները, սնուկամանների բեկորները, հախճապակի, այդ թվում դիմակազարդ անոթներ: Գտնվել են նաև հայերեն արձանագրությամբ մեծ կարասի բեկորներ (ՀՊՊԹ 2614/31, աղ. XXIX, 1,4):

Միջնաբերդի գագաթին աշխատանքները տարվել են նախորդ տարիներին պեղված -f, - g, - h, - i, -5, - i -8, 9 քառակուսիների հատվածում, ինչպես նաև -k -6, -8 և -10 քառակուսիներում:

Պեղումները հիմնականում կենտրոնացված էին ստորին շերտերում, որտեղ 5,0-6,0 մ խորության վրա բացվում են վաղ երկաթի ժամանակաշրջանի կառույցների մնացորդներ⁶: Ամբողջ շերտում նկատվում է ուժեղ հրդեհի հետք, որը հավանաբար

⁶ Տե՛ս Կարինե Քուչնարյուվայի 1973 թ. օրագիրը:


տեղի է ունեցել մ.թ.ա. I եազարամյակի սկզբներին Արարատյան դաշտի բնակավայրերը նվաճելու ժամանակ (Նկ. 3, աղ. XIII, 2):



Նկ. 3. Վաղ երկաթի ժամանակաշրջանի շինությունների հատակագիծ:
1972 թ. պեղումներ: Սիջնաբերդ:

Գտնվել են շատ հետաքրքիր նյութեր, որոնք առավելապես գործիքներ են (զարդա-

րուն գլանաձև քարե դրոշմ, զանգակաձև ծեծիչ, քարե դուրգ, բրոնզե սակր (Անդրկովկասյան տիպի), ուլունքներ և բրոնզից այլ առարկան, նկ. 4_{1,3,5,6,9}):



Նկ. 4. Նյութեր վաղ երկաթի ժամանակաշրջանի շերտից:

Այս նյութերի մեծ մասը նախորդ տարիներին Մույն հատվածում թացված արհեստանոցի արտադրանքին են պատկանում: Հյուսիսային հատվածում բացվել են կլոր հատակագծով մետաղամշակման հնոցի մնացորդներ, մոխրի և այրված փայտի հետքեր (Кушнарева К.Х., 1977, с. 29, рис. 40):

Աղանից արևելք - 5 գծի, -ի, - ց, - հ, - օ քառակուսիներում, մոտ 2,0 մետր խորությամբ վրա պեղվել է վաղ միջնադարյան շերտը: Այստեղ գետաքարերից և հույժապարտերից հատվածները խաթարված են. պատկերը խառնաշփոթ է: Հատվածի փոքրությունը հնարավորություն չի ընձեռում պարզել կառույցների հատակագծերը: Այդուհանդերձ շերտագրական որոշ հստակություն մտցվեց: Վաղ միջնադարյան պատերը հեռացնելուց հետո, հայտնաբերվեցին անախկ գունազարդ խեցեղենի բեկորներ: Կտրված հորերի մեջ գտնվում են միագույն կանաչ և բազմագույն երանգներով XI-XIII դդ. ջնարակած անոթների բեկորներ:

Պեղումներ են կատարվել նաև -k- 6 քառակուսում: Գտնված նյութերից ուշագրավ են մաքրու պատկերով և արաբատառ արձանագրությամբ ջնարակած թասի բեկորները (ՀՊՊԹ 2614/9, աղ. XLIV, 1), ջնարակած այլ կավե թասերի բեկորները, ինչպես նաև ապակե անոթի բեկորը արծվի փորագիր զարդով:

1974 թ. պեղումները: Կենտրոնական թաղամասում պեղվեցին - e, - f -16 և -21 քառակուսիները:

Աշխատանքները հիմնականում կենտրոնացել էին սյունազարդ դահլիճից հարավ-արևմուտք ընկած հատվածում (աղ. VI, 1): Պալատի հարավային թևում բացվեցին սենյակների հիմնապատերի հետքերը: Անյակների մեկի անկյունում հայտնաբերվեց մի շատ հետաքրքիր խաբիսխ, որն, ըստ երևույթին, տեղում չէ. և կարող է ավելի վաղ շինության պատկանել: Այս շերտերում գրեթե նյութեր չկան, եթե չհաշվենք ապակու արհեստանոցի մոտից գտնված խոտանը և եալոցի բեկորները: Գտնվել են նաև ջնարակած անոթի բեկորներ և եռաթև նետասլաք: Իհարկե, հիմնական ուշադրությունը բևեռված էր IX դարի շերտի ուսումնասիրությանը: Եթե տարածված խճի և IX դարի քանդված շինությունների միջև շերտը տալիս է եիմնականում խեցեղեն, ապա բուն IX դարի շերտերից նյութերը բազմազան են: Տեղում գտնվել է ամբողջական մի կարաս՝ խոհանոցային խեցեղենի հետ միասին և մետաղե ճրագ, որն իր ձևով շատ նման է XI-XIII դդ. կավե ճրագներին (ՀՊՊԹ 2623/ 51, աղ. LIX, 8):

Քառակուսիներից -e, - f- 16- ում շարունակվում են գտնվել ապակե անոթների խոտանի, հալոցների բեկորներ և թափոն: Կան բեկորներ, որոնց վրա նկատվում են ապակին փչելու համար օգտագործվող խողովակի հետքերը: Գտնվել են նաև վանակատի ամնշակ կտորներ, որոնք ապակու բաղադրամաս են կազմել:

Քաղաքի կենտրոնական թաղամասում պեղումները շարունակվեցին նաև VII դարի պալատական դահլիճի հյուսիսարևելյան մասում: Տնտեսական շինության մեջ շարունակվում են դարձյալ բացվել կարասներ (պահպանված են իրանի ստորին մասերը), որոնք iV-VI դդ. են: Այս ետավածը, որը պայմանական N 1 բջիջ ենք անվանում (4 x 5), պեղվել է մոտ 1,4 մ խորությամբ և իր մեջ ընդգրկում է վաղմիջնադարյան և հելլենիստական շրջանի շերտեր: Վաղ միջնադարյան շերտը, բացի վերոհիշյալ կարասներից և կավե պատերի հատվածաբար մնացորդներից, այլ նյութեր գրեթե չի պարունակում: Ատորին՝ հելլենիստական շերտը բավականին թանձր է, սլաբունակում է գունազարդ խեցեղեն, ինչպես նաև խոհանոցային տարբեր անոթների բեկորներ: Հետաքրքիր գյուտերից մեկը տուֆե դուրզի բեկորն է, որը եզակի օրինակներից է հելլենիստական նյութերում (*Քոչարյան, Գ.Գ., 1980, էջ 79-82*):

Ստորին բերդում 1974-ին պեղվել են -g-22-24, -f-22, -h-23-25, -i-23-26 քառակուսիները:

Հարավային մասում, միջնաբերդի պարսպապատի տակ րացվել են անմշակ քարերով շարված պատերի հետքեր, հատակների մնացորդներ թոնիրներով: Այդ շինությունները դեռևս 50-ական թվականների նույն հատվածում րացված շենքերի ընկած շարունակությունն են: Ցավոք, պատկերը լրիվ չէ և պատերի կտրտվածությունը հատկազոտրեն չի ամրոջանում: Պեղավայրի հյուսիսային կողմում -f և -g գծերի ուղղությամբ րացվում են խոշոր տծև քարերով շարված պանոնավոր պատերի հետքեր: Ըստ երևույթին այստեղ ինչ որ մեծ շինություն է: Աննյակներից մեկի պատերի անկյունում րացվեց ուղղանկյուն, թրծած աղյուսներով շարված, մոտ 1մ խորությամբ հոր (աղ. XV, 1), որը լեցուն էր հարուստ նյութերով (կապույտ հախճապակե րազմանիստ անոթի, դրոշմազարդ կարասի ռեկորներ, սնդկաման, ջնարակած անոթների մնացորդներ և այլն): Նույն տեղում գտնվել է հաստ, կոպիտ գործվածքի մեջ փաթաթված դրամների գանձ: Դրամների ընդհանուր թիվը 42 էր, որից 31ը՝ ելտկուզյան և կտրված են սուլթան Արսլան իրն Տուրքիլի (1136-1172), Աթարեկ Կզըլ Արսլան և սուլթան Աինջար իրն Աուլեյմանի (1186-1191), ինչպես նաև Արու Բաքր իրն Մուհամմադի (1191-1210) կողմից, իսկ 11-ը՝ վրացական դրամներ են 420 քրոնիկոնի (1200 թիվ), Թամար-Դավիթ մակագրությամբ⁷: Դրամները ստույգ թվագրում և հիմնավորում են պեղվող շերտի ժամանակագրական պատկերը:

Պեղվող հատվածում գտնվել են նաև մետաղե որոշ իրեր, որոնց մեջ հետաքրքիր է նշել աղնձե մատանին, ամրորչական դանակո և այլ նյութեր (ՀՊՊԹ 2623/56,57, նկ. 25₁₃, 28₂₄): Հանդիպում է դարրնոցային խարամ, ջնարակած խեցեղենի իտտանված ռեկորներ, որոնք ենթադրել են տալիս մոտակայքում դարրնոցների և հնոցների առկայությունը: Ջնարակած խեցեղենը և հասարակ խոհանոցային անոթները ընդհանրապես XII-XIII դդ:

1975թ. պեղումները- Աշխատանքները կենտրոնացվել են կենտրոնական թաղամասում և քաղաքի միջնաբերդի արևմտյան ստորին հատվածում, անմիջապես պարսպապատին կից: Մասնակի պեղումներ են կատարվել միջնաբերդի զագաթին և հետախուզական քաղաքի տարածքի արևելյան մասում:

Միջնաբերդից արևելք (մոտ 300 մ հեռավորության վրա) Ներքին Դվեն գյուղի տնտեսության դաշտերում, եողերի հարթեցման աշխատանքների ժամանակ գտնվել են տուֆե երկու արծան, ուղղահայաց խորը կանելյուրներով քարե պան գլան, խեցեղեն: Քաղաքի այդ հատվածում թեև պարրերարար պեղումներ չեն կատարվել, սակայն տարրեր տարիներ, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ երևան են եկել նյութեր, որոնք իսիստ արժեքավոր են Հայաստանի մ.թ.ա. I հազարամյակի մոնումենտալ քանդակագործության և պաշտամունքի առանձին եարցերի ուսումնասիրության եամար: Դեռևս 1969թ. եողային աշխատանքների ժամանակ, նույն հատվածից քիչ հյուսիս, րավականին մեծ տարածքում րացվել են կոոմլեխներ, րազմաթիվ արծանների առկայությամբ: Հրատարակվել է այդ նյութերի մի մար (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1974, էջ 35-43): Բոլոր արծանների գլուխները կտրտված են, որը կարող էր տեղի ունենալ հավանարար քրիստոնեությունը հաստատվելու շրջանում: Ուստի, պատահական չպետք է եա-

⁷ Դրամների որոշումը՝ պատմ. օտո. դոկտոր իս. Ա. Մուշեղյանի:

մարել այն փաստը, որ Դվենի վաղմիջնադարյան շինությունների պատերի մեջ նույնպես հանդիպում են այդ արձանների գլուխներից, որոնք օգտագործվել են որպես շինաքար:

1975թ. գտնված արձաններն իրենց կատարման տեխնիկայով ունենալով նույնպես են և հարդարանքի ու իրանի մանրամասներով տարրերով են նախորդ տարիների հայտնաբերվածներից (աղ. XXIV, 1,2): Մեկը զինվորի արձան է, որի մեջքը, ուսերը և ձեռքերը քանդակված են ամենայն հստակությամբ: Իրանով շուրջանակր անցնում է լայն գոտին, որի ծախ մասում կախված է երկար սուրը, աջում՝ կարճ դաշույն: Արձանի կրծքի մասում և գոտուց ներքև նկատելի են զարդերի հետքեր: Քանդակագործը ուղղահայաց և հորիզոնական գծերով ստեղծել է զգեստի պատրանք:

Մյուս արձանը վերարտադրում է կնոջ պատկեր: Վզից կախված է երկար ուլունքաշար: Ընդգծված են ստիքները, թույլ գծերով ներկայացված է տարազը: Նման արձանիկների ստորին վերջույթների մասերը մշակված չեն: Նմանօրինակ արձանները կանգնեցվել են պաշտամունքային վայրերում և հավանաբար կապված են առաջին հերթին պտղաբերության պաշտամունքի հետ:

Հայաստանի տարածքում նույն ոճով կրտսված արձանները հազվադեպ են հանդիպում: Առայժմ շուրջ 20 նմուշ է (մանրամասներով) հայտնի Դվինից, մեկը հայտնաբերվել է Արտաշատ քաղաքի գերեզմանոցում (ցուցադրվում է Խոր Վիրապի թանգարանում), մյուսը՝ Մեծամորում: 1975թ. այդօրինակ ամբողջական արձան գտնվել է Շամբրանում (Գ.Արեշյանի պեղումները): Նյութերի մանրակրկիտ քննությունը ցույց է տալիս, որ արձանների հավանական ժամանակը մ.թ.ա. IX-VIII դդ. են, որը և եամընկնում է Դվինի վաղ ընկավայրի շերտի թվագրությանը:

Հետաքրքիր և կարևոր է անսիկ շրջանի սյան գլանի (տրամագիծը 50 սմ) գտածոն այդ տեղամասում (աղ. V, 3): Լկն, որ Դվենն ունեցել է հարուստ և յուրօրինակ անսիկ մշակույթ, այլևս կասկած չի հարուցում: Հայտնի են Դվինից գտնված այդ ժամանակաշրջանի գունազարդ շքեղ խեցեղենը, այլ նյութեր: Պատահական չպետք է համարել նաև պան, ինչես նաև ծածկր քարե սալիկր և խարիսխների գոյությունը, որը մտածել է տալիս Դվինում անսիկ շրջանում ինչ-որ մոնումենտալ շինության, թերևս շինությունների առկայության մասին:

Կենտրոնական թաղամասում պեղումները շարունակվել են սյունագարդ դահլիճում, նրա կենտրոնական և արևելյան մասերում: Աշխատանքները կատարվել են նախորդ տարվանից թերավարտ - d -17, - e -17 և - f - 17 քառակուսիներում, ինչպես նաև նոր սկսած - f - g- 15 և - f - 14 քառակուսիների տարածքում: - e- 15 քառակուսում 2, 0 մ խորության վիս հայտնաբերվեց դահլիճի հարավային շարքի ծայր արևելյան խարիսխը: Այն թեքված է կողքի և ժամանակրն փորձ են արել կրսել մեջտեղից: Կրակր մեջ գտնվելու հետևանքով խարիսխը ճաքճքվել է: Այս հատվածում հատակը քիչ ռարժրանում է, որի պատճառը դեռևս չի պարզված: Բացվել են նաև հյուսիսային թկր երկրորդ և երրորդ խարիսխները: Հրդեհի պատկերը դահլիճում նույնն է, ինչ նախորդ տարիներին: Լևբողջ հատակր, խարիսխները ծածկված են մոխրի ստվար շերտով: Այրված գերանների մեծ կուտակումներ առավելապես նկատելի են խարիսխների մոտ: Հավանաբար դրանք փլված հազարաշեն ծածկր մնացորդներ են: Կան նաև ծածկր կավաշաղախ մասեր, որոնց մեջ նկատելի են այրված եղեգի մնացորդներ: Շերտագրական պատկեր-



րը հստակ է: Վերին՝ X-XIII դդ. շինությունները գրեթե ամբողջովին ավերվել են ավելի ուշ շրջանի թաղումներով: IX դ. աղյուսաշեն պատերը պահպանվել են մեջընդմեջ, որը նույնպես որոշակե պատկեր չի ստեղծում: Լավ են պահպանվել IX դարի հորերը, որոնք հագեցված են հարուստ հնագիտական նյութերով: Այդ առումով առանձնակի կարելի է նշել -c-17 քառակուսու հորը անմիջապես հյուսիսային երրորդ իարսիսի մոտ, որը տվեց ապակե անոթների նոր ձևեր և ջնարակած ինքեղեն: Հետաքրքիր է սնդկամանի գյուտը, որը նույնատիպ անոթների ամենավաղ թվագրվող նմուշներից է:

Ուշագրավ նյութերով է հագեցած անմիջապես իարսիսիաների մակարդակով փոված VII դ. սկզբների խճի շերտը: Այն առաջացրել է եկեղեցու VII դ. սկզբի վերականգնման ժամանակ: Գտնվել են կացիններ, որոնք օգտագործվել են քարգործների կողմից ինչպես կտրելու, այնպես և սաշելու համար (ՀՊՊԹ 2660/114, 115, նկ. 24^թ, աղ. LVIII, 1,4): Խեցեղենը, հատկապես կճուճներն աչքի են զարնում խորը ակոսավոր պսակով, որը հատուկ է միայն այդ շրջանի նյութերին: Նման ինքեղեն գտնվել է Դվինին մոտիկ հարևանությամբ Այգեվան բնակավայրում: Խճի միջից հայտնաբերվել են նաև թաս հիշեցնող ճրագներ և ապակե: Այս շերտում ևս հանդիպում են ջնարակած անոթների թեկորներ, որը իրոսում է արտադրության մեջ նրա անընդհատության մասին:

Տուֆի տաշվածքի շերտերում հաճախ են հանդիպում V-VI դդ. եռանավ բազիլիկ եկեղեցու ճարտարապետական թեկորներ, քանդակազարդ քարեր (իաչեր), խճանկարի գույնզգույն քարե հատիկներ և այլն (աղ. XXV): Դրանց առկայությունը բացատրվում է նրանով: որ VII դ. վերակառուցման ժամանակ, ավերված նախորդ եկեղեցին մաքրվել է փլատակներից, որը փռվել է շրջապատում համահարթեցման աշխատանքների ընթացքում: Բուն պալատի շերտը ընդգրկել է շուրջ մեկ հարյուրամյա ժամանակաշրջան՝ V դ. 70-ականներից մինչև VI դ. 70-ական թվականները: Այդ շերտում գտնված նյութերը սահմանափակ են, սակայն շատ կարևոր վստիջնադարյան նյութական մշակույթի համար: Խեցեղեն անոթների ձևերի ուսումնասիրության առնչությամբ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ամբողջական կճուճը (ՀՊՊԹ 2660/41, աղ. XXXI, 1), որի ձևը հրդեհի մեջ ընկնելով խաթարվել է: Կճուճի իրանը գրեթե գնդաձև է, հատակը՝ կլոր, կարճ վզի վիա դրված պսակը ետ է ծալված: Անոթը դոսից և ներսից պատվել է սպիտակ անգորով: Բերանի և հատակի տրամագծերը նույն չափի են: Այն նման է Այգեվանի նույն շրջանի նյութերին և թվագրվում է V-VI դդ.: Նման անոթներ հայտնի են ուշ անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում, մասնավորապես Արտաշատի վերին շերտերից եայտնաբերված նյութերում:

Վաղ նյութերի մեջ հատկապես պետք է շեշտել ջնարակած անոթների առկայության փաստը: Դահիլիճի հատակին գտնվել են կապտականաչավուն ջնարակով հախճապակե անոթի, թասերի թեկորներ: Նման անոթները մեծ քանակությամբ հանդիպում են Հայաստանում մ.թ.ա. I հազարամյակի և հատկապես անտիկ շրջանի հուշարձաններում: Վաղ միջնադարում ջնարակած անոթների արտադրությունը մեզ հայտնի պատճառներով զգալի նվազում է և դրանց գյուտերը Դվինում մեծ կարևորություն են ներկայացնում: Ուշագրավ են կլոր նստուկով մուգ կանաչավուն ապակուց գավաթի թեկորը, տափակ կոճակները, որոնք մեծ քանակությամբ հանդիպում են Հյուսիսային Կովեասի ժամանակամերձ դամբարաններում:

Պեղումները շարունակվեցին նաև *ստորին բերդում* -g,-h,-i-23 և -i-24 քառակուսի-



Սկ. 5. ա. Հատմագլի՛տ ստորին բ՛նոլի արհեստավորմա՛մ թաղամա՛սի: 1973-1978 թթ. պեղումնե՛ր: Միջնաբերդ: XI-XIII դդ.:
 բ. Հատմագլի՛տ հարավային բուրձի պեղմա՛յլի: 1977-1978 թթ. պեղումնե՛ր: Միջնաբերդ, XII-XIII դդ.:

ներում (*Ժամկոչյան Ա.Ս.*, 1978, էջ 275-282): 1975 թ. ռացվել է փողոցի մի հատված, որի երկու կողմերում կառուցված շինությունների մեջ զգացվում են համաչափության ինչ-որ սկզբունքներ և ընդգծվում է ուլիդ գծի ու փողոցի վրա կառուցված շենքերի ճակատամասերի գաղափարը (նկ. 5 ^ա):

Առաջին մեծ համալիրը ընկերի շենք է և կազմում է մոտ 100 քմ տարածություն (գունավոր ներդիր N 1, աղ. VIII): Շենքն ունի 8 սենյակ. չորսը հավսմարար օգտագործվել են ընկերության համար, մեկը հացատուն, իսկ երեքը տնտեսական սենյակներ են: Քանի որ շինությունը կռել է նորոգման հետքեր (աղ. IX, 1, 2), ապա հնարավոր է, որ ժամանակը ընթացքում սենյակների ֆունկցիոնալ նշանակությունը փոխվել է: Բոլոր ընկերի սենյակներն ունեն թոնիրներ (աղ. XIV): Եթե ընդունենք, որ Դվրում ռավակա-նաչափ լայն տարածում ունեն չորս սյուների վրա հենված հազարաչեն ծածկով տները, ապա այստեղ ականատես ենք հարթ ծածկով և երդեկով տների մի ձև, որը կարելի համարել Դվրնի ժողովրդական տների երկորդ հիմնական աիպը: Շրջապատում առածին կանգնած արտադրական կառույցների առկայությունը կարող է հուշել, որ հիշյալ տունը պասկանել է արհեստավորական ընտանիքի, որն աչքի է ընկել ռավականին համեստ արտադրանքով: Այդ են հավստում քարե սրածայր տափակ գործիքները, որոնցով խեցեղեն անոթների պատրաստման ժամանակ, թաց վրձակում արվել են փորագիր գարդեր (ՅՊՊԹ 2660/ 108, աղ. LXI, 12): Հանդիպում են նաև առանձին պիտույքներ, որոնք օգտագործվել են խեցեղենի թծման ժամանակ (գլաններ, եռտանի-ներ և այլն): Այդ հատվածից հայտնի են նաև կշեռքի երկաթե նժարներ (ՅՊՊԹ 2660/ 118, նկ. 26₁₇): Ուշագրավ են կենցաղում օգտագործված անոթները: Խիստ սահմանափակ է եղել հախճապակե անոթների օգտագործումը, առավելապես ներմուծվածը: Տեղական միագույն կապույտ հախճապակե անոթները ներկայացված են մի քանի մուշ-ներով: Դրան հակառակ շատ են հասարակ և ջնարակած անոթները, որոնք աչքի են ընկնում իրենց գեղարվեստական կատարմամբ: Ի՞նչն է ընդունել այդ անոթներին:

Ձնարակած անոթները կրում են ռուսական ոճավորված գարդեր, որոնք ընդունել են XII-XIII դարերին: Անոթների հատակներին կան փորագիր հստակ ընդգծված գարդեր: Բավականաչափ տարածված են միագույն կապույտ ջնարակած թասերը, որոնք ընդունել են քաղաքի վերջին շրջանի արտադրությանը: Հասարակ թասերն աչքի են ընկնում դուրս ընդգծված պսակներով և ռարծր կոունկածն նստուկներով: Վերջիններիս մի մասի վրա կան վարպետների նշաններ, որոնք ընդեանըապես քիչ են հանդիպում Դվրում (ՅՊՊԹ 2660/ 51, աղ. XXXII, 1):

Ուշագրավ են կարմիրափայլ դրոշմագարդ կարասների գյուտերը հիշյալ շինություն-նից: Դրոշմագարդ կարասների առկայությունը ասում է այն մասին, որ դրանք օգտագործվել են նաև միջին իսավերի կենցաղում (*Պաֆադարյան Կ.Գ.*, 1952, էջ 188: *Առաքելյան Բ.Ն.*, 1958, էջ 226 և ուրիշներ):

Աակավաթիվ են մետաղից գտնված իրերը՝ գամեր, դանակե շեղրեր, տարրեր օղեր, շեղանկյուն տափակ նետասլաքներ: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մի կողմից ուռուցիկ, մյուս կողմից՝ հարթ մակերեսով կանաչավուն ապակուց կնիքը «գործ Աս-Սադեկ իբն Ալիի» արարատառ մակագրությամբ: Վերջինս հավանարար եղել է վարպետ և պատրաստի արտադրանքի վրա կնիքով դրոշմել է իր անունը:

Միջնարերդի գագաթին այեղումները շարունակվել են -f, -g, -h, -i, -5 քառակուսիների


շրջանում: Դա մի հատված է, որն ընկնում է նախորդ տարիներին բացված մ.թ.ա. I հազարամյակի սկզբի պաշտամունքային շինություններից արևելք և որի ստորին շերտերը հագեցված են սև, թուխ գույնի խեցեղեն հարուստ նյութերով: Այստեղից գտնվել են վաղմիջնադարյան նյութեր՝ փորագիր ապակիներ, բյուզանդական ապակե էքզագիոններ, ինչպես նաև հելլենիստական շրջանի գունազարդ և հասարակ խեցեղեն: Պատերը հիմքերի խճողված պատկերը որոշակիություն չի մտցնում շերտագրության մեջ: Պեղվող հատվածը մակերեսից 2,7-3,0 մ խորության վրա է: Այդ խորության վրա նկատվում է ուժեղ հիդեհի հետք, որը հավանաբար I դ. 50-ական թվականների Կորբուլոնի արշավանքների եետևանք է: Մոխրաշերտում գտնվել են հելլենիստական գունազարդ խեցեղենի բեկորներ: Հնարավոր է, որ -ի -5 քառակուսում բացված հում աղյուսե պատի պահպանված հատվածը պահպանել է անտիկ շերտին: Լյդ պատի մեջ բացվել է մի խորշ, որի միջից զգալի քանակությամբ անտիկ խեցեղեն է գտնվել: Նույն պատի տակից հայտնաբերվել է նաև դարձնագույն ապակուց մատանի (վաղմիջնադարյան): Պեղումների ժամանակ դուրս են գալիս նաև ավելի ուշ շրջանի նյութեր, որոնք հավանաբար պահպանվել են վերին շերտի ետերի հատակին: Հիշատակության է արժանի ամբողջական սնդկամանր արծանագրությամբ (XI-XII դդ.): Ստորին շերտում հայտնաբերվել է մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվել բրոնզե գավազանի գլուխ սրածայր ելուստներով (ՀՊՊԹ 2660/ 126, աղ. XXI, 7):

1976 թ. պեղումները - Կենտրոնական քաղամասում. պեղումները շարունակվեցին V դ. պալատի արևելյան թևում՝ - c-14, -15, -16 և - d-14 քառակուսիների շրջանում և ավարտվեցին պալատի կենտրոնական պուճազարդ դահլիճի պեղումները: Լկն ուղղանկյուն սրահ է 22,0 x 12,0 մ չափսի և ունեցել է ոչ թե ութ, այլ վեց պուճ, որոնց խարիսխները պահպանվել են տեղում: Վաղմիջնադարյան նման դահլիճների հետ համեմատած Դվենի դահլիճի միջայունային թռիչքները ամենամեծն են: Դահլիճի պատերը հիմքում ունեն անմշակ մեծ և ճեղքված ավազաքարեր, որոնց վրա բարձրանում է եռու աղյուսե շարվածքը: Պատերը ներսից և դրսից սփռված են կավով: Ողորկ մակերեսները վերկի հատվածներում ներկված են եղել: Գտնվել է վերկից թափված ծեփի մի բեկոր՝ կարմիր ներկո հետքերով: Դահլիճը մուտքերով կապված է եղել կոց սենյակների հետ:

Պեղումների շնորհիվ լուծվեց նաև դահլիճի արևելյան կողմի հարթակե առեղծվածը: Այդ հատվածը լրիվ պեղելուց հետո պարզվեց, որ այն ձևավոր կտրվածքով եարթակ է մոտ 15-20 սմ դահլիճի հատակոց բարձր և ընկնող է կատարել: Բեմը կազմել է հանյիսավոր մասը, ուր ժողովների և նման այլ արարողությունների ժամանակ նստել են եղևոր և աշխարհիկ բարձր աստիճանավորներ (նկ. 6):

Սկսվեցին դահլիճին կոց արևելյան երկու սենյակների պեղումները, որոնց հատակները ավելի բարձր են դահլիճի հատակոց, իսկ կենտրոնական միջնորմը երկու կողմից ունի կավե սվառ: Այստեղ նկատելի են վերափոխությունների հետքեր: Հատակները կոկնակե են, որոնց միջև լցված են IV-V դդ. կղմինդրների բեկորներ: Շատ հավանական է, որ դրանք եռանավ եկեղեցու ծածկե կղմինդրներն են, որոնք VII դ. սկզբներին արտաքին սյունաարահր հեռացնելու ժամանակ հանվել են վերանորոգված ծածկեց: Կիսաբոլոր կղմինդրներն ավել փոկված են ստորին մասում և ունեն փոքր ուռուցիկ ելուստներ (ինչպես հայտնի է VII դ. կղմինդրներն ունեն բարձր գոտի): Հարթ կղմինդրները դատելով պահպանված բեկորներից, թավականին լայն են (եզրի բարձրությունը՝ 5, հաստու-

թյունը 2 սմ է): Կղմինդրները վառ կարմիր գույնի են, պատրաստվել են խոշորհատիկ կավից և վատ են թրծվել:



Նկ. 6. Հատակագիծ կաթողիկոսական պալատի: 1972-1978 թթ. պեղումներ:
V-VI դդ.: Կենտրոնական թաղամաս:

Աշխատանքներ են տարվել -d - 19 և -20 քառակուսիների շրջանում, որտեղ արտաքուստ մաքրվեց պունագարդ դսիլիճի հյուսիսարևմտյան անկյունը: Պարզվեց, որ պատը դրսից շարվել է ճեղքված ավազաքարով և չունի սվաղի հետքեր:

Պեղվել են մի շարք հորեր, որոնց նյութը թվագրվում է IX դարով: Դսիլիճի հյուսիսարևելյան պան մոտի հորը պարունակում էր ապակե և խեցեղեն հետաքրքիր նյութեր: Առաջին անգամ հանդիպում են օղակաձև նստուկով ապակե բաժակներ (աղ. LIII, 4), ասնձաձև իրանով խոշոր անոթ, հետաքրքիր են երեքնուկաձև ռերանով սև փայլուն

սահորի վերին մասը կանթով, ունկած կանթով միջակ մեծությամբ միապատ կճուճներ և այլն: Հորի ստորին մասերից գտնվել են մ.թ.ա. IX-VIII դդ. խեցեղեն անոթների բեկորներ փորագիր զարդերով (աղ. XXI, 1-4):

Ստորին բերդում սլեղումները կատարվել են -e, -f, -g, -22-24, -h-26 և -i-23 քառակուսիներում: Այստեղ նախորդ տարիներին բացված փողոցի վրա նույն գծում դրված երկրորդ համալիրը զուտ արտադրական բնույթի շինություն է: խեցեղենի թրծման հնոցով: Պատկանում է նույն ժամանակաշրջանին (XII-XIII դդ.):

Թրծման հնոցի մնացորդների գյուղը Դվնի բնակավայրում, ցավոք, եզակի երևույթ է, իսկ ստ ուշագրավ միջնադարյան արտադրության կազմակերպման հարցերի ուսումնասիրության համար:

Շինության միջից երևան են գալիս մեծ քանակությամբ անգործաման սալտակ զանգվածի կտորներ, եռոտանի, թրծման գլանների բեկորներ, խոտանված ջնարակած թասեր և այլն: Հնոցին կոց բացվել է մի երկար փոս, որն իր մեջ ուներ կավե մեծ գնդեր: Հավանաբար այդտեղ էր պահվել հումքը:

Արհեստանոցի պեղումներից և նրա շրջապատից գտնված երկաթե խառամի և իրերն ու առարկաները ցույց են տալիս, որ այստեղ եղել է նաև դարբնոց, արտադրական լայն հնարավորություններով:

Նույն հատվածում երրորդ շինությունը դրվել է արհեստանոցից հյուսիս և նրանից բաժանվել է նեղ միջանցքով: Այդ շենքը, որի պեղումները կատարվել են դեռևս 1952 թվականին, բնակելի է. սլեղումները չեն ավարտվել և առայժմ դժվար է խուսել նրա ֆունկցիոնալ նշանակության մասին (նկ. 5^ա):

1977 թ. պեղումները - Քաղաքի կենտրոնական թաղամասում շարունակվել են պեղումները V դ. կաթողիկեսական պալատի հատվածում (- c, -d, -e 13 քառակուսիներ): Պալատի արևելյան մասում անմիջապես սյունազարդ դահլիճին կից պեղվել է նախորդ տարվանից սկսված երկու մեծ սրահ 6 x 6 մ չափսի: Պատերը իսկոտ քայքայված էին: Կավե սվաղը պահպանվել է տեղ-տեղ 0,7 մ բարձրությամբ: Արահներից մեկում գտնվել են փուլ եկած պատի սվաղի փորագիր բեկորներ փորագիր զարդերով, ակներևաբար կիոնական թեմաներով (ՀՊՊԹ 2670/10, աղ. LXI, 13): Պալատի հարավային սենյակներից մեկի պեղումների ժամանակ գտնվել են VI դ. ապակե երկու անոթ՝ մեկը գնդաձև իրանով սրվակ է (աղ. L, 7), մյուսը՝ քիչ դեղնավուն հաստ ապակուց բաժակ: Կարծիք կա այն մասին, որ գնդաձև սրվակների նման տիպերը լցվել են նավթով և օգտագործել որպես «ոռմբ» երդեհ առաջացնելու նպատակով: Պեղվող պալատում, մոխրի հաստ շերտի տակ արդեն երկրորդ դեպքն է նման գնդաձև ապակե «ռմբերի» բեկորների հայտնաբերվելը:

Դվնի IX դարի մշակույթը կենտրոնական թաղամասում ներկայացված է բացառիկ եարուստ նյութերով: Այդ նյութերի մեջ մեծ թիվ են կազմում ջնարակած, մասնավորապես միագույն կանաչ անոթները, մերձավորարևելյան կենտրոններից ներմուծված շողյուն խեցեղենը, ապակին: Հայտնաբերված նյութերի մեջ մեծ արժեք է ներկայացնում ապակե իրերի ժողովածուն: Կենտրոնական թաղամասից գտնված ապակին բազմապիսի է: Այստեղ հանդես է եկել մատնեքներով թաա-դամապարներ, որոնք դրվել են Մայր տաճարի շքեղ ջահերի վրա, կան գունագեղ բարակ պատերով հիանալի բաժակ-

զավաթներ, որոնք պատրաստվել են ազատ փչելու եղանակով և լրացուցիչ մշակման են ենթարկվել: Բավականին նուրբ են պատրաստված սլացիկ իրանով սրվակները:

Դվինի IX դարի ապակու ժողովածուին բնորոշ են հաստ սլատերով և փորագիր զարդերով մեծ բաժակները, որոնք հաճախ են հանդիպում: Այս բաժակները, նրանց վրա հանդիպող զարդերը բոլորն էլ փչվել են զարդարուն կաղապարներում և հետագա մշակման են ենթարկվել: Բացառված չէ, որ բաժակների մի մասի զարդերն արվել են տաշելու եղանակով (Նկ. 20_{1,3}, 21-22):

Դվինի IX դարի ապակու ժողովածուում բացառիկ տեղ են գրավում գունազարդ ապակիները: Այդ նույն տեղամասից դեռ նախորդ տարիներից հայտնի են բարակ պատերով բաժակները արաբատառ արծանագրությամբ, որոնք արվել են մուգ դարչնագույնով: 1977 թ. գտնվել է կապույտ գույնի մի փոքր սրվակ, զրեթե ուղիղ պատերով և փոքր կարծ վզով: Սրվակի իրանի վերին մասում, կապույտ ֆոնի վրա մուգ դարչնագույնով պատկերված է արծիվ, որն իր մագիլներում բռնել է զոհին (Նկ. 23): Սրվակի վերին մասերն ունեն նույն դարչնագույնով գրված արաբերեն արծանագրություն: Նման պատկերագարող անոթների սակավությունը ցույց է տալիս, որ դրանք ամենայն հավանականության բերվել են դրսից և մերձավորարևելյան ապակեգործական արհեստանոցների արգասիք են:

Դվին քաղաքի գոյության վերջին երկու եարյուրամյակներում, *միջնաբերդի* ստորին հատվածները անմիջապես պարիսպների հարևանությամբ, խիստ կառուցապատվել են: Դրա խոսույն վեալությունն են պեղումների ժամանակ արևմտյան հատվածում բացված բնակելի և տնտեսական շինությունները, արտադրական համալիրները:

Շերաագրական մանրագնին դիտարկումները, գտնված մեծաքանակ դրամները և նյութական մշակույթին մնացողները տալիս են բացվող շինությունների՝ XII դ. 50-ականներից-XIII դ. 30-ական թվականներին պատկանելու ժամանակագրական սահմանները:

1977թ. պեղումները շարունակվել են փողոցի ելուսիսային (-e, -f -25-26) հատվածում, մոտ 100 քառ. մ տարածությամբ, փողոցի արևմտյան թևում: Այստեղ կանոնավոր շինության ոչ մի հետք չի պահպանվել, սակայն նկատելի են փուլ եկած աղյուսե պատերի մնացորդներ և հատակների հատվածներ (ադ. XII, 1):

Տեղում փաստագրված է կիկեակի օգտագործված վաղմիջնադարյան մի խարիսխ: Պեղավայրում բացված աղյուսաշար փոքր միատիպ օջախները, երկաթե իրերի և խառամի բազմաթիվ մնացորդները, մոխրի և ածուխի մեծ կուտակումները ենթադրել են տալիս, որ այստեղ գոյություն է ունեցել երկաթի մշակման հետ կապված արտադրություն, ակեբեաբար բազմատեսակ տրսադրությամբ դարձնող: Օջախներից մեկին կից բացվել է երկարավուն մի փոս (1,2 x 0,5 x 0,5 մ), որի միջից գտնվել են 14 պղնձե դրամներ, վերադիր դիմակներով հախճապակե բազմանիստ անոթ, ներքուստ կանաչ ջնարակով պատած լայն ծորակով փոքր սափոր և այլ նյութեր:

Ատորին բերդում գտնված իրերի մեջ իր գեղարվիստական կատարելությամբ առանձնանում է մարդանց և կենդանիների վիրադիր դիմակներով բազմանիստ անոթը (գունավոր ներդիր N 6): Դիմակներով եախճապակե անոթների արտադրությունը միջնադարյան Հայաստանում լայն տարածում ունեցել է: Դրանց արտադրության հիմնական կենտրոններն էին Դվինն ու Անին: Որոշ նյութեր հայտնի են նաև Վրաստանում և Ադրբե-

ջանում, որոնք կարող էին տարվել հայկական արտադրական կենտրոններից: Անոթների հարդարման նման տեխնիկան սկզբնավորվում XII դ. կեսերից:

Պեղավայրից գտնվել է այդ ժամանակաշրջանին ընդհանուր ջնարակած խեցեղեն: Դրանք հիմնականում երկրաչափական և բուսական փորագիր զարդերով, կանաչ ջնարակով պատած անոթների թեկորներ են, որոնք հատուկ են արտադրվել են մասսայական սպառման համար և ռավարարել են շուկայական պահանջները:

Իր տեսակի մեջ եզակի է ռացված խարիսխը: Այն կարմիր տուֆից է, ունի կոկնակի քառակուսի բուն, որի անկյունում արված են եղևնաձև փորվածքներով եռանկյունի ելուստներ, որը հատուկ է IV-V դդ. խարիսխների հարդարանքին: Վերնասալը արտահայտված է շատ թույլ, տրամագիծը մեծ է: որը մտածել է տալիս փայտե սյան մասին: խարիսխը զարդարել է քաղաքի վաղմիջնադարյան ինչ որ կառույց և հետագայում է թերվել այստեղ:

1977-ին առաջին անգամ սկսվեցին աշխատանքներ տարվել միջնաբերդի հարավային մասում, մեծ աշտարակի(բուրգ) մոտ՝ ներքուստ: Դվինի միջնաբերդի հզոր աշտարակների ներքին կառուցվածքային հարցերը մինչև այժմ որոշված չեն: Պարիսպների և կից շինությունների փոխհարարության հարցերը, որոնք շատ կարևոր են պաշտպանական տեսակետից, ներկայումս արշավախմբի կարևոր նպատակներից մեկն է: Այս տեղամասում առայժմ պեղվում են քաղաքի ամենավերին շերտերը, որոնք դրամներով և շինարարական մնացորդներով որոշակի թվագրվում են XIII դ. սկզբով: Պեղվող հատվածում ակնհայտ են րնակելի և տնտեսական շինությունները առանձին մասեր, որոնց հատակագծերը ղեռնա լրիվ պարզ չեն, տեղ-տեղ խիստ խճողված, պատերի ռազմաթիվ վերանորոգումները և կցոնների հետևանքով (աղ. XVII, 1,2): Թեև ճարտարապետական մնացորդներն առայժմ չեն պատասխանում առաջադրված խնդիրներին, սակայն նյութական մշակույթի մնացորդները շատ կարևոր են XIII դ. արտադրության որոշ կողմերի պարզարամման առումով: Հետաքրքիր նյութեր են հայտնաբերվել XIII դ. ջնարակած խեցեղենի արտադրության վերաբերյալ:

Պեղումների ժամանակ գտնվել են ռազմագույն ջնարակապած թասեր, որոնց հստակ զարդերը արված են լայն գծերով և փորագիր զարդին համապատասխան: Ջնարակած անոթների այս խումբը քիչ է հանդիպում Դվինի տարածքում: Նրա արտադրությունը հատուկ է եղել վերջին շրջանին և դադարել է քուրաքի կործանման հետ միասին:

Հիշյալ հատվածում շատ են չորս և ութ թերթանի վարդյակ-զարդերով ջնարակած անոթները, որոնք XII- XIIIդդ. Դվինի խեցեգործ-արհեստավորների սիրված մոտիվներից էին և լայն տարածում ունեին անդրկովկասյան աղտադրական այլ կենտրոններում: Քաղաքի գոյության վերջին շրջանի խեցեղենի արտադրությանը ընդհանուր են նաև քիչ տափակ, ուռուցիկ իրանով, լայն ընդհանով և ընթակավոր կանթերով կճուճները: Վերջիններս խիստ մրապատ են և խոհանոցային սպասքի հիմնական ձևերից մեկն են կազմել: Ուշադրության արժանի է նաև զգալի չափերով լայնարերան փոքր ծորակով և հորիզոնական չորս կեղծ կանթերով անոթը (ՀԴՊԹ 2670/ 9 աղ. XXIX, 3): Անոթն իր կարմրաներկ մավերեսով, փայլեցումով և պատրաստման տեխնիկայով մոտենում է դրոշմազարդ կարասներին, որոնց առակայությունը հիշյալ շերտում ակնհայտ է:

Հնագիտական նյութերը հիմնականում հայտնաբերվում են հորերում, որոնք րավականին առատ են: Հորերի շուրջն արված է թրծած աղյուսներով սալահատակ: Հորերն, ի տարբերություն միջնաբերդի գագաթին բացվածներից, խորը չեն, ունեն լայն տրամագիծ, որը տեղանքին հարմարվելու հետևանք է:

Դվինի արշավախմբի 1977 թ. կարևոր գյուտերից մեկը քաղաքի կենտրոնական թաղամասից մոտ 60 մ դեպի հարավ դրամների մեծ գանձի հայտնաբերումն է: Այդ գանձի մեջ մտնում են ուշ սասանյան և արաբական արծաթե դրամներ կտրտված վիճակում: Գանձը գտնվել է Հնաբերդ գյուղի դաշտերում, գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ: Տեղում կատարված պեղումները շերտագրական առումով ոչ մի շոշափելի արդյունք չտվեցին: Երկարամյա գյուղատնտեսական աշխատանքները և հողերի հարթեցումները այդ հատվածում զգալի վնաս են հասցրել կառույցներին: Այնուհանդերձ որոշակի է, որ այդ գանձը պահպանվել կավանոթի մեջ, կտրտվելու հետևանքով սփռվել է մոտ 100 քառ. մետր տարածության վրա: Ենթացում են հայտնի մասնագետներին: Դրանք մեծ մասամբ պատահական գյուտեր են, հատկապես Ռուսաստանի և Մերձբալթիկային տարածքից:


Հայաստանում դրանք հանդիպել են Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղում միջնադարյան Կոթ ավանի տեղում և շրջկենտրոնում (*Խաչատրյան Ժ. Դ., Քալանթարյան Ա. Ա.*, 1972 էջ 66, *Մուշեղյան Խ. Ա.*, 1983, էջ 192): Կտրտված արծաթե դրամների մասին գոյություն ունեն թափափված տեսակետներ: Մի մասն այն կապում են արծաթե ճգնաժամի հետ: Ըստ Ա. Լ. Մոնգալտի, կտրտված դրամները օգտագործվել են դիրհեմի օրինական քաշը պահպանելու համար (2, 97 գ), քանի որ X-XI դդ. դրամական գործարքները կատարվել են քաշով (*Монраум А. А.*, 1947, с. 67-68):

1978 թ. պեղումները.- Կենտրոնական թաղամասում աշխատանքները հիմնականում կենտրոնացվել էին V դ. պալատի արևմտյան թևում (-f, -g, -h -19-20 քառակուսիներ): Պալատի պեղումները ցույց են տալիս, որ նրա սյունազարդ դահլիճը համալիրի կենտրոնական առանցքն է կազմել և շրջապատված է եղել սենյակներով: Պալատի արևմտյան կողմում դահլիճին կից բացվեց սենյակներից մեկի հիմնապատի մի ետավածոր ուղղաձիգը (նկ. 6): Ըստ երևույթին, այստեղ եղել է թաղակապ շինություն: Եթե պալատի մյուս հատվածներում չի նկատվում հետագա օգտագործման ոչ մի հետք, ապա այս մասում IX դ. կատարվել են որոշակի ձևափոխումներ: Բացվել է հուն աղյուսե պատերով շինության մի հատվածը, տեղում պահպանված փայտե սյան քարե փոքր խորհուխով:

Լյս տեղամասում հայտնաբերված IX դ. ջնարակած իւեցեղենը լավ հայտնի է նախորդ տարիների պեղումներից: Այն հիմնականում ներկայացված է ոչ խորը թասերով, քիչ ներս թեքված շուրթերով և ցածր օղակաձև ոտքով: Թասերի այս տիպերը որոշակի տարածում ունենին ոչ միայն Հայաստանում, այլև անդրկովկասյան, միջինասիական և մերձավորարևելյան երկրներում:

Գտնված նյութերի մեջ հետաքրքիր են միագույն կանաչ ջնարակով պատած անոթները: Դրանք կրկնակի ծորակով, ձևավոր կանթերով կճուճներ են և մերձենում են սասանյան շրջանի միագույն կանաչ ջնարակով անոթների ձևերին, որպիսիք հայտնի են նաև նախորդ տարիների պեղումներից (*Քալանթարյան Ա. Ա.*, 1976, էջ 78-79):

Պեղավայրից պատահական գտնվել են նաև մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվող սև փայլ-



Նկ. 7. Խփի բեկոր ձկան փորագիր զարդով:
Կենտրոնական թաղամաս, մ.թ.ա. IX-VIII դդ.:

եցրած խեցանոթների բեկորներ, որոնք իբեցնց վրա ունեն կարմիր օխրայով քսված փոռագիր զարդեր: Վաղ խեցեղենի այս տեսակը հայտնի է միայն Դվինից և առայժմ չի հանդիպում և ոչ մի հուշարձանում: Խեցեղենի հարուստ մեջ Դվինի վարպետները թերևս ունեցել են իրենց անհատական մոտեցումը և ստեղծել են իրենց ձևերը: Այս խեցեղենի մեջ ուշադրության է արժանի իսի մի բեկոր, որի վրա ռեալիստորեն պատկերված է թռչնի գլուխ, ձուկը կտուցին (ՀՊՊԹ 2753/44, նկ 7):

Կենտրոնական թաղամասում հետախուզական պեղումներ են կատարվել միանավ բազիլիկի և կաթողիկե եկեղեցու միջև ընկած տեղամասում: Եկեղեցու շրջակայքի պեղումները հետաքրքիր պատկեր են տալիս բնակավայրի հելլենիստական շրջանի շերտերի և մշակույթի վերաբերյալ: Հելլենիստական շերտն այս հատվածում շատ որոշակի ուրվագծվում է և գտնվում է երկու լավ թվագրվող հորիզոնների միջև: Վերին սահմանը կաթողիկե կառուցման ժամանակ սպիտակ ավազաքարի տաշվածքից առաջացած շերտն է, որը հորիզոնական ուղիղ գծով դիտվում է եկեղեցու շրջակայքում: Ստորին սահմանը՝ մ.թ.ա. IX-VIII դդ. շինությունների հիմնապատերն են: Շերտը, որի հորություն հասնում է տեղ-տեղ մինչև 0,5-0,7 մ, տալիս է բացարձակապես մ.թ.ա. II- մ.թ. I դդ. խեցեղեն՝ կարմիր փայլեցրած և գունազարդ թասերի, տափաշների, փխալաների այլ տիպի անոթների թեկորներ, հելլենիստական շրջանի համար ընդորշ մշակում ունեցող հասարակ խեցեղենի մնացորդներ և այլն: Այս նույն շերտում թացվել է կարասային թաղում հետաքրքիր խեցեղեն նյութերով (աղ, XXII, 2, XXIII, 1,2): Բազիլիկ եկեղեցու պեղավայրում կան նաև IX դ. հորեր, որոնք պարունակում են ապակե անոթների և հասարակ խեցեղենի բեկորներ:

Միջնաբերդի արևմտյան լանջում՝ ստորին բերդում շարունակվել են արհեստավորական թաղամասի պեղումները: Այստեղ, մոտ 300 քառ. մ տարածքում (-ե, - Կ-24-25, - Ե- Բ-25-26 քառակուսիներ) շարունակվում են փողոցի նոր շինությունների բացումը: Փողոցի հյուսիսային հատվածն ունի լավ պնդացած կավե հատակ, որի մեջ նկատվում են կավանոթների թեկորներ և երկաթ իրերի, առարկաների թեկորներ: Ըստ երևույթին երկու կողմերում տեղադրված արեստանոցների և արհեստավորական տների աղբը տարբեր մնացորդներով հանվել և լցվել է փուլոցում, հետագայում այն ծածկվել է կավե զանգվածով: 1952թ. պեղված, թվել երրորդ մեծ համալիրի հյուսիսային մասում թացվում են թոմիրներով, երկու-երեք հատակներով սենյակներ: Այդ հատվածը մյուսներից բաժանվել է ներլ միջանցքով: 1978-ից բացվում է չորրորդ շինությունը, որը նախորդ համալիր-

ների հետ փողոցի աջ մասում միևնույն գծի վրա է դրված: Վերջինս ունի թեթաքարով շարված ընդհանուր պատեր (բացվել է 8 մ երկարությամբ, 0,7 մ բարձրությամբ, լայնությունը՝ 0,8 մ), մի քանի անգամ նորոգված հատակ, որի հետևանքով հստակ նկատվում են տասնամյակների ընթացքում շենքի ներսում կատարված փոփոխությունները: Պեղումների ընթացքում բացվել է մի մեծ սենյակ և մյուս սենյակների պատերի հատվածները: -b-24 քառակուսում նկատելի է հում աղյուսե պատի փուլ եկած մի մեծ շերտ: Ժամանակով այս շինությունը համապատասխանում է նախորդներին:

Ջնարակած խեցեղենն աչքի է ընկնում միագույն և բազմագույն օրինակներով: Կան ամբողջական թասեր: Շատ տարածված է միագույն կանաչ ջնարակը (կենդանակերպ կանթեր, առյուծագուլիս): Խռհանոցային խեցեղենը ներկայացված է կարմիր փայլեցրած սափորներով, քրեղաններով, տարբեր չափերի կճուճներով, որոնցից հետաքրքիր է քառականթ, փորագիր զարդերով, ցածրադիր մրապատ անոթը: Կան նաև դրոշմազարդ կարասների բեկորներ: Այս բազմաձև խեցեղենի ուսումնասիրությունը կարևոր է Դվինի և Հայաստանի ժամանակամերձ խեցեղենի թվագրությունը, տեսակների դասակարգման և անոթների կիրառական նշանակությունը պարզելու առումով:

Բավականին հարուստ են մետաղե իրերը: Գտնվել են լավ պահպանված երկաթե մի մկռատ (որն իր ձևով գրեթե չի տարբերվում ժամանակակից նման գործիքներից), քառակուսի բերանով և կլոր անցք ունեցող կոթառով փայտատ (նկ. 24_{4,5}), սրածայր գործիքների բեկորներ, զարդեր և դարբնոցային խարամի մնացորդներ:

Պեղավայրում գտնվել են ջնարակած անոթների խոտանված բեկորներ, թրծման հնոցի կավե գլաններ, եռոտանի, որը ևս մեկ անգամ ապացուցում է տեղում արտադրության կազմակերպման վիաստը և հաստատում բացվող թաղամասի կերպարը (աղ. XLVI):

Դվինի ստորին բերդի արհեստավորական թաղամասի պեղումները կարևոր են քաղաքի սոցիալական պատկերը պարզելու նպատակով: Այս առումով հետազու պեղումները կարող են հետաքրքիր նյութեր տալ:

Ստորին բերդից հայտնի են նաև օբսիդիանե փոքրիկ նետասլաք, մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվող, փորագիր զարդերով սև խեցեղենի բեկորներ:

Դվինի գարգացած միջնադարի մշակույթի մի ամբողջ հատվածի (XI-XIII դդ.) հստակ շերտագրության համար անգնահատելի նյութեր են տվել *հարավային բուրգի* հատվածում կատարված պեղումները (*ժամկոչյան Ա.Ա.*, 1979, էջ 31):

Պեղավայրում, դեպի հյուսիս տարածվող մասում բացվել են նախորդ տարվա շինությունների օրգանական մասը կազմող նեղ միջանցքով երկու փոքր սենյակներ(նկ. 5⁹): Պատերը շարվել են ճեղքված քարերով (հիմքում գետաքար, վերին մասում՝ հում աղյուսներ): Անյակնիզի մեջ կան փոքր թոնիրներ և օջախներ:

Այս հատվածում գտնված նյութերը, մասնավորապես ջնարակած խեցեղենը, որի զուգահեռները հանդիպում են նաև Անիի և վրացական ինցեգործական կենտրոնների համապատասխան նյութերում, թվագրվում են XII դարի վերջով և XIII դարի առաջին կեսով: Այս տեղամասում աշտարակեն անմիջապես կից, շինությունների միջից դուրս են գալիս կավե մեծ զանգվածներ: Ենթադրվում է, որ դրանք փուլ եկած բուրգի մնացորդներ են, որոնք իրենց տակ թաղել են կացարանները Դվինի վերջին զրավումների ժամանակ:

Պեղվող բնակավայրի շերտագրական ցայտուն պատկերը հաստատվում է ստույգ

թվագրվող դրամներով⁸ և նյութերով: Ձնարակած իւեցեղենը աչքի է ընկնում պատրաստման ենարների բազմազանությամբ, գունային բազմերանգությամբ, զարդերի և ձևերի առատությամբ, փորագիր զարդերով: զարդերի և գույների խճողվածությամբ:

Այս երևույթը նկատել են նաև ջնարակած իւեցեղենի գիտականեր Ա.Յակոբսոնը, Բ.Շելկովնիկովը և ուրիշները: Շատ են տարբեր տեսակի ցանցերը, շեղանկյունիները, հաստ գոտիով հյուսագաղղերը, տարբեր մեղալյունները և այլն: Ձարդերի համար հատկանշական են վաղդյակների սկզբունքը, չորս, վեց և ութ ուղղություններով:

XI դ. իւեցեղենի եարդարանքում գերիշխող է դառնում ոչ փորագիր զարդը, անգորած մակերեսի վրա տարբեր գույնի ներկերով արված հստակ պատկերներով: Թասերի հատակները ավելի լայն են, իսկ պսակները՝ քիչ ներս ճկված:

Հարավային թուրգի պեղավայրից գտնված հասարակ, անջնարակ իւեցեղենը վերստին հաստատում է ժամանակագրական այս պատկերը: Հասարակ իւեցեղենի ձևերը ջնարակի համեմատությամբ XI-XIII դդ. քիչ թե շատ մնայուն են: Այդուհանդերձ, եարդարման մեջ նկատվում են որոշ մանրամասներ, որոնք ընդհանրապես տվյալ ժամանակահատվածին:

Գտնված առարկաների մեջ ուշադրության արժանի են երկաթե իրերը, հասկապես աշխատանքային գործիքները: Իր տեսքով բավականին հետաքրքիր է սյուպես կոչված հոտոցը, կարճ կոթառով: քիչ երկար շեղքով, որի ծայրը կորանում է (ՀՊՊԹ 2753/ 72, աղ. LVIII, 3, նկ. 24₁₂): Այդպիսի կացիները եանդեպում են Հայաստանի որոշակի ազգագրական շրջաններում և լայն տարածում են ունեցել (*Բրոյան* Վ. 7., 1972, էջ 100, տախտ. XLVIII): Գտնվել է նաև նույնատիպ երկոտրդ ետոցը քիչ ավելի լայն շեղքով: Չնայած կացարաններն անմիջապես կոց են միջնարերդի պարսպապատին, սակայն քիչ են գեներների գյուտերը: Երկու տարվա աշխատանքների ընթացքում եայտնի է ընդամենը մեկ նետասլաք կլոր հողիմվածքով: Ձարդերը գրեթե բացակայում են, գտնվել է մեկ գույգ զանգակաձև պղնձե կախիկ:

Պեղումներից հայտնաբերված նյութերը ցայտուն վեայում են սոցիալական այն վիճակը, որը տիրում էր Դվինի ընակչության մեջ: Եթե միջնարերդի արևմտյան եատվածում XII-XIII դդ. բնակվել են արհեստավորները, որոնց կենցաղում և բնակարանների ձևերում նկատելի է որոշակի տարբերություն, ապա այս հատվածում գեղագանցապես կենտրոնացված են եղել ստորին իավերի հյուղակները: Ըստ երևույթին այստեղ ապրողները իրենց առօրյա օգտագործման պիտույքներով նկատելի զատվել են կոց թաղամասի ընակչներից:


Սոցիալական այս շերտավերումը, որը հստակ նկատելի է նյութական մշակույթի հուշարձաններում, էլ ավելի խորացրել է քաղաքում տիրող անհավասար վիճակը, որն ի վերջո արտաքին ակտիվ միջամտությամբ հասցրել է քաղաքի անկմանը:

Հարավային թուրգի վերին շերտը պեղելու ժամանակ գտնվել է երեք փոքրիկ գեղեզմանաքաղ: Մեկն ունի եոանկյունի հատվածք, մյուս երկուսը՝ ուղղանկյունաձև են: Մեկը ճակատային մասի փորվածքի մեջ՝ «ԱՅՍ Է ՀԱՆԳ/ԻՍՏ ԶՈՅՐԿԱ Դ/ԱՏԵՐ ԱԻԾՈՎԻ ԵՒ ԱՄՈՒ/ՍՆԻ ԱՈՒԻԾ/ Ի ՅԻՇԵՅԵ Ի / ՔՍ, ԱՂԱԶԵԱ» արձանագրությունն է (նկ 8):

⁸ Դրամները թվագրվում են XII դ. 70-ական թվականներից սկսած մինչև XIII դ. սկզբները: Որոշումը՝ պատմ. գիտ. դոկտոր Խ.Սուշեյանի:

Քարի եզրամասերում նույնպես եղել է արծանագրություն, որը վնասված է: Հավանաբար այդ տեղում պետք է լիներ արծանագրության թվականը:

Դվենից այնքան քիչ արծանագրություններ են հայտնի, որ յուրաքանչյուր արծանագրված քար ընկալվում է յուրովի: Ելնելով տառածներից արծանագրությունը կարելի է թվագրել XIII դ: Գերեզմանաքարերը պատրաստվել են տեղում, բայց ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել տեղադրել շիրիմների վրա:



Նկ. 8. Արծանագրված գերեզմանաքար հարավային բուրգի պեղավայրից: Միջնաբերդ, XII-XIII դդ.:

Արշավախումբը ծեռք է բերել քաղաքի տարածքում գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ գտնված մի շարք նյութեր, որոնց մեջ մեծ թիվ են կազմում արաբական, թյուրքազանական, սելջուկյան, վրացական արծաթե և պղնձե դրամները: Առաջին անգամ է հանդիպում Շեղդադյան ամիրա Ջալիլ իրն ալ-Ֆալիի IX դ. արծաթե դրամը, որը նոր տվյալ է Շեղդադյանների մասին և առնչվում է Հայաստանի և Աղվանքի քաղաքական պատմության հետ (*Մուշեղյան Խ.Ա.*, 1979,

1979, էջ 28): Հազվագյուտ է Օրդուքյան է միրությունում եատված աղնձե դրամի առկայությունը ժողովածուում: Վերջիններս շատ սակավ հանդիպել են նաև Դվենի նախորդ պեղումների ժամանակ (աղ. LXXII, 1):


XI-XIII դարերի շատ հեաաքքիթր քարե կնիք է գտնվել Հնաբերդ գյուղի դաշտում: Կնիքը չորս կողմից ունի ճիւղաարդեր, վերին և ստորին մասերում փորագրված է արաբատառ արծանագրություն, որի ընթերցումը նախնական է և հետագա ճշգրտման կարիք ունի (աղ. LXXI, 1):

1979 թ. պեղումները. – *Կենտրոնական քաղաքում* աշխատանքները տարվել են V դարի պալատի արևմտյան թևում, նախորդ տարում կիսատ թողած -g, -h-20 քառակուսիների տարածքում, ինչպես նաև -e-20, -d, -f, - g-21 քառակուսիներում: Կարևոր էր պարզել թաղակապ շինության առկայությունը, քանի որ նախորդ տարվա պեղումների ժամանակ բացվել էր որմնախարիսիւներով պատի հատված:

Թաղակապ հարկաբաժնի առկայության փաստը պալատի արևմտյան մասում V-VI դդ. կարելի է միայն ենթադրել: Սյունազարդ դառնիճի արևմտյան պատի արտաքին երեսը բավականին լավ է պահպանված. շուրջ 3-4 շարք ճեղքված ավազաքարերից է բացակայում է կավե սվաղը: Սյուս կողմից պարզ դարձավ, որ պալատի արևմտյան թևի կառույցները հետագայում են կցվել դահլիճին, եավանարար VI դ. կեսերին:

Գետնի մակերեսից 2,0-2,20 մ խորության վրա բացվեց պինդ հաաակ, որի վրա դուրս են գալիս IX դարի ջնարակած խեցեղենի և ապակու բեկորներ: Լկստել IX դարում եղել է ինչ որ շինություն, որի առանձին եատվածներն են պահպանվել: Բացվեց այդ շինության նկուղային մասը: Նկուղը քառակուսի եատակագծով մի կառույց է, 2,5 մ խորությամբ, եավանաբար թրծած աղուսե հատակով: Պատերը ամուր կավից են: Նկուղ իջել են վեց աստիճաններով (0,7 մ լայնությամբ), որոնք իրենց հիմքում ունեն ամրացված կավ

և երեսապատված են եղել աղյուսներով (նկ. 9): Առանձնապես հարուստ են նկուղից գտնված նյութերը՝ խեցեղենը, ապակին և մետաղը: Գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում շողյուն թասը (ՀՊՊԹ 2754/ 8, աղ. /XLVIII, 1, գունավոր ներդիր N 5), որը ներմուծված է Մերձավոր Արևելքից և նրա պատրաստման հավանական կենտրոնը եղել է Լևանտան՝ Խալիֆաթի մայրաքաղաքը IX դարում: Թասի վրա ներքուստ (պահպանվել է կիսով) մեդալիոնների մեջ արված են քարայծների պատկերներ, մեկը միջին արու և էգ: Ողջ թասը երկու կիղմից պատած է դարչնագույն կետերով: Հատակի վրա պահպանվել է արձանագրության մի հատված, որը թողել է պատրաստող վարպետը:



Նկ. 9. IX դ. շինության նկուղի հասակագիծը և կտրվածքը: 1979թ. պեղումներ: Կենտրոնական թաղամաս:

Դվրնն այն հուշարձաններից է, որի նյութերով կարելի է որոշակի հետևությունների հանգել միջնադարյան արհեստային արտադրության տարբեր ընագավառների վերա-

բերյալ: Այդ տեսակետից ուշագրավ է կենտրոնական թաղամասի մուտքի մոտ բացված կիր մաբելու վառարանը (նկ. 14): Վերջինս փորված է թաղամասի պարսպապատի մեջ:

Անտիկ դարաշրջանի մշակույթի վերաբերյալ հետաքրքիր նյութեր են տալիս Կաթողիկե և միանավ բազիլիկ եկեղեցիների միջև ընկած տարածքի այեղումները: Այստեղ շերտագրական պատկերը շատ հստակ է, իսկ գտնված խեցեղենը որոշակի թվագրվում է մ.թ.ա. II - մ.թ. I դդ.: Ցավոք, պեղավայրում չեն նկատվում շինությունների մնացորդներ, սակայն վերին շերտերի պատերի մեջ առկա ճարտարապետական մանրամասները վեայում են դրանց գոյության փաստը: Այդ նույն հատվածում բացվել են նաև միջնադարյան հետաքրքիր գերեզմաններ, շարված 893թ. երկոաշարժի ժամանակ փուլ եկած եկեղեցու սրբատաշ քարերով (մեկի վրա կա վարպետ նշան): Այստեղ թաղվել են հոգևորականներ. լավ պահպանված կմախքի վրա կան սև քղամիդի մնացորդներ:

Դվինի կենտրոնական թաղամասը հելլենիստական շրջանում եղել է նաև դամբարանադաշտ, որտեղ մինչև այժմ հայտնի են շուրջ երկու տասնյակ կարասային թաղումներ: Կարասային երկու թաղում ուղեկցվող նյութերով (խեցեղեն և բրոնզե զարդեր) բացվել են կաթողիկեից հարավ այեղվող հելլենիստական շերտում (աղ. XXII, 1, XXIV, 3,4): Գործող բնակավայրում թաղումներ կատարելը կապված է եղել թաղման ծեսի հետ և այդ երևույթը նկատելի է նաև մայրաքաղաք Արտաշատում, ինչպես նաև վերջին տարիներս Ախուրյանի ջրամբարի տարածքում պեղված Շիրակական անվանվող խոշոր բնակավայրում:

Անտիկ շերտի վրա անմիջապես նստած են վաղմիջնադարյան պատերի մնացորդներ սպիտակ ճեղքված ավազաքարերից, կան ուղղահայաց կանգնեցրած V-VI դդ. կարասներ եղևնածև զարդերով, կոմիդորների բեկերներ, բացվել է ջրատար խողովակների մի հատված (երկու շարք), որը հավանաբար անցկացվել է VII դարի սկզբներին (նկ. 31): Այս նյութերը Կաթողիկեի հարավային մասում ենթադրում են ինչ որ շինության գոյությունը:

Ստորին բերդի արհեստավորական թաղամասում մասնակի պեղումներ կատարվեցին նախորդ տարում բացված չորրորդ շինության հատվածում՝ a-24 և b - 24 քառակուսիների շրջանում: Բացվեց մեծ սենյակներից մեկը վերին հատակը (աղ. XIII, 1), որոշակե ճշտվեց փողոցի վրա բացվող պատի ուղվագիծը: Կան ջնարակած և եասարակ խեցեղենի բազմաթիվ բեկորներ, խփեր, ապարանջաններ: Դետաքրքիր են սև և կարմիր ներկով գունագարդված սպիտակախեցի անոթների բեկորները (ՉՊՊԹ 2754/39): Դրանք իրենց կատարումով շատ մոտ են հելլենիստական նույնատիպ խեցեղենին: Այսպես նյութի մանրագնահի քննությունից պարզվեց, որ այդ տիպի խեցեղենն ակներևաբար վրացական ծագում ունի և մեծ քանակությամբ հայտնի է Ռուսթավեի և Ժինվալիի պեղումներից: Ստորին բերդում գտնված նյութերի մեջ կարելի է հիշատակել նաև դաշույնը, դռան փակե օղերը և այլ իրեր:

Չարավային բուրգի շրջանում պեղումները շարունակվել են նրա արևելյան հատվածում: Այստեղ բացվել է ամենավերին շերտի հում աղյուսե, անմշակ քարերով շարված, թրծած աղյուսե և հողե հատակներով շինությունների մի խճուղված պատկեր: Թվում է, որ այս շինությունները կարող էին վերականգնված կամ մոր կառուցված լինել անմիջապես 1225 թ. Ջալալ էդ-Դինի արշավանքներից հետո, երբ Դվին քաղաքին ահավոր ավերածություններ պատճառվեց: Սակայն կյանքը Դվենում շարունակել է նաև հետա-

գայում: Պատմիչների մոտ վեայություն կա այն մասին, որ 1228 թ. մեծ իշխան Պռոշ խաղբակյանը հարձակվում է Դվրնի վրա և վրիժառու լինելով կրտորում է մահմեդական զանգվածին (*Մանանադյան* 7., 1977, էջ 202):

Այս հատվածի երրորդ հորիզոնում, 2,5 մ խորության վրա բացվեց կրաշաղախ ողորկ սվաղով պատի մի անկյուն: Մեծացնելով պեղավայրը արշավախմբին հաջողվեց մաքրել այդ պատի արտաքին մակերեսը 26 մ երկարությամբ և տեղ-տեղ 4 մ խորությամբ: Տեղի մանրագնին քննությունը ցույց տվեց, որ այստեղ անմիջապես պարսպի հարևանությամբ կարող է լինել իր հատակագծային յուժուժով եզակր կառույց: Կառույցի արտաքին պատը շարունակվում է երկարությամբ և խորությամբ և կրացվր հաջորդ տարիների: Շինության արտաքին պատը բացելու ժամանակ, նրա արևմայան հատվածում փաստորեն կտրվեց բուրգի մի անկյունը և պարսպապատի մի հատվածը: Ըստ երևույթին այստեղ շինությունն ավերվելուց հետո, վերանորոգվել է միջնաբերդի պարիսպը, որը լայնությամբ իր տակ է առել կառույցի հարավային մասերը: Անհավսանական չէ, որի հին պարիսպը կարող է լինել քիչ ավելի դուրս: Դեռ 1962 թ. այստեղ երբ պեղվում էր պարսպի և աշտարակի արտաքին հատվածը, հողային մեծ աշխատանքների ծավալը թույլ չտվեց պարզել դրանց փոխհարաբերության հանգույցը և պարսպի վերանորոգման փուլերը:


Պեղավայրից գտնված նյութերի մեջ շատ են միսագույն և բազմագույն ջնարակված անոթները (Ըկ. 34.), որոնք բնորոշ են Դվրնի XI-XIII դ. մասսայական արտադրությունը: Հայտնաբերվել է դիմակագարդ հախճապակե անոթի կանթ (ՀՊՊԹ 27 54/ 20, աղ. XLVIII, 2), մեծ չափի սնդկամանի բեկրը, որն առաջին անգամ է հանդիպում: Վերջինս ուշագրավ է նրանով, որ Դվրնի սնդկամաններին բնորոշ են փոքր տարողությունները, հակառակ Անիի արտադրանքին: Բացառված չէ, որ սնդկամանը կարող է բերված լինել Անիից: Ուշագրավ են հախճապակե ուլունքները, լուսամուղի սկավստակածև ապակու բեկրոները, մետաղե գործիքները և այլն:

Հասարակ խեցեղենի մեջ ուշագրավ են կաղապարի մեջ սեղմված զարդով երկել սափորի բեկրոները: Ձարդը պատկերում է բուսական գոտիների մեջ կենդանիներին հետապնդելու տեսաբան: Նման տեխնիկայով այստրաստված սափոբների գյուտերը Դվենի և Հայաստանի միջնադարյան եուշաբձաններում շատ քիչ են: Այս սափորների մի մասը ներմուծվել է հավանաբար Իրանից կամ Միջին Ասիայից: Ասփորների խեցին իր որակով տարբերվում տեղական արտադրանքից (ՀՊՊԹ 2754/ 34, աղ. XXXIV, 3,4):

Նշանակալից թիվ են կազմում Դվինի տարածքում գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ գնտված նյութերը՝ ապակե անոթները, զարդեր, մետաղե իրեր, կենդանազարդ ոսկրե հերուններ և այլն: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում սասանյան թվով երեք կեիքները (աղ. LXI, 2-4): Կնիքները պատրաստված են քարից, կրսալուսնաձև են և ունեն լայն անցքեր, թելով կապելու համար: Մեկի վրա պատկերված է վազող եղջերու, որի վրա նստած է թևատարած արծիվը: Այս մոտիվը լայն տարածում ունի սասանյան օլիատիկայում և բազմիցս հանդիպում է տարբեր ժողովածուներում (*Göbl R.*, 1973, աղ. 29): Մյուսի վրա փորագրված է եղջերուի գլուխ, եզրերի ժապավենազարդով: Երրորդ կեիքի վրա պատկերված է «*նշան*», մի սիմվոլ, որը նույնպես լայն տարածում ուներ սասանյան նման հուշարձաններում, դրամների վրա, քանդակագործության մեջ և այլն: Նշանների վերաբերյալ կան բազմաթիվ տեսակետներ, որոնք ի մի



Նկ.34. 1. Ջնարակած միագույն կանաչ խեցեղենի թեկորներ: Հարավային ռուրզ, XI-XIII դդ.: 2. Տեղական ջնարակած խեցեղենի թեկորներ: Կենտրոնական թաղամաս, IX դ.:



Նկ. 35. Ձնարսևած ռազմագույն խեցեղեն փորագիր զարդերով: Հարավային ռուրդ, XI-XIII դդ.:

են բերված Ա.Բորիսովի և Վ.Լուկոնիցի գրքում (*Борисов А.Я., Луконин В.Г., 1963. с. 39-41*): Կնիքն այդ մասում ունի արձանագրություն՝ Is' [ty] «արդարություն»⁹, մշանի վերին մահիկը մեջ կա մի փոքրիկ խաչ, հետաքրքիր երևույթ, որը ցույց է տալիս կնիքը զրադաշտական միջավայրում ստեղծելու հանգամանքը և որ այն պատկանել է ոչ քրիստոնյայի, հետագայում անցնելով քրիստոնյայի ձեռքը, վրան լրացուցիչ փորագրվել է խաչանշան ոչնչացնելով կնիքի զրադաշտական բովանդակությունը (*Борисов А.Я., 1939, с. 235*): Սասանյան այս կնիքները անձնական են. թվագրվում են V-VI դարերով:

Պատահական գտնված իրերի մեջ բացառիկ արժեք է ներկայացնում բրոնզե թասը, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է խնկաման անունով: Թասն ունեցել է փղակերպ երեք ոտք (պահպանվել է մեկը): Ներսը և փռված պսակը ճոխ հարդարված են և կրում են արձանագրությունների կրկնվող հատվածներ: Արտաքուստ շուրջանակի գնում է արաբատառ արձանագրություն:

Նման խնկամանները լայն տարածում են ունեցել Մերձավոր Արևելքում և Միջին Ասիայում: Թասի նախնական քննությունը ենթադրել է տալիս, որ այն կարող է պատրաստված լինել տեղում (ՀՊՊԹ 2754 / 79, աղ. LX, գունավոր ներդիր N 11):

1980 թ. պեղումները. - Կենտրոնական բաղամասում աշխատանքները շարունակվել են պալատի արևմտյան թևում, անմիջապես սյունազարդ դահլիճին կրց պեղվալրում: Բացվել են նաև IX դ. շինությունների կավակերտ պատերի առանձին հատվածներ, որոնք ամբողջական հատակագծային պատկերներ չեն ստեղծում: Շինությունների հատակին, հորերում գտնվել են կոբալտով նկարագրված ներմուծված հախճապակե անոթների բեկորներ, ջնարակած տեղական խեցեղեն (նկ. 34₂), ապակե բարձրարվեստ անոթներ, հասարակ խեցեղեն և այլն:

Ներմուծված հախճապակին միջագետքյան է և հավանորեն բերվել է Սամառայից (*Sarre F., 1925, էջ 44-49, աղ. XVIII*): Հախճապակին բաղկացած է Դվինում հանդիպող փռված պսակներով և օղակավոր լայն նստուկներով հանրածանոթ անոթներից (*Ղաֆադարյան Կ.Գ., 1952, նկ. 206: Քսուլանթարյան Ա.Ա., 1976, էջ 81, 83, աղ. XXX, 4-6, ժամկոչյան Ա.Ա., 1981, էջ 89-91*): Սակայն կան նաև անոթների նոր աիպեր, որոնք Դվինում և ընդհանրապես Մերձավոր Արևելքում հանդիպում են առաջին անգամ և այդ առումով լուրջ հետաքրքրություն են ներկայացնում: Բավականին ստված խումր են կազմում հասարակ անոթները, որոնք հիմնականում կրկնում են նախորդ տարիների պեղումներից գտնված հանրահայտ ձևերը: Առանձին անոթներ իրենց արտաքին հարդարանքով, պրոֆիլացված մասերով և կանթերով առաջին անգամ են հանդիպում Դվինի IX դ. նյութերի մեջ:

Հետաքրքիր խումբ են կազմում մեծ տրամագծով խոր քրեղանները: Դրանք աչքի են ընկնում պսակների բազմազանությամբ և հատակների կրությամբ: Շինություններից մեկի հորերում 1980 թ. գտնվել է նման 10 քրեղան, որից 7-ը՝ ամբողջական: Քրեղաններն աչքի են ընկնում կատարյալ մշակմամբ և հավանաբար օգտագործվել են տնտեսական նպատակներով: Անոթներից մեկը հատակին թռծելուց հետո արվել է խաչածև զարդ:

Հայաստանի միջնադարյան խեցեղենի ուսումնասիրության համար մեծ եետա-

⁹ Արձանագրությունը ընթերցել է պատմական գիտությունների դոկտոր Վ.Լուկոնիցին:

քրեություն են ներկայացնում զարդարուն կաղսպարի մեջ պատրաստված IX դ. անոթների գյուտերը Դվենում: Ընդհանրապես այդ խեցեղենը շատ սակավ է հանդիպում անդրկովկասյան հուշարձաններում, իսկ Մերձավոր Արևելքում, հասկապես Իրանում հիշյալ տեխնիկան երևան է գալիս VIII-IX դդ.: 1980 թ. գտնվել է ման հաղդարանքով մի թաս (հաշվով երկոտորը): Այս և նախորդ տարիների հայտնի գյուտերը թույլ են առաջ եզրակացնել, որ Դվենում IX դ. եղել է կաղսպարի օգնությամբ զարդարված անոթների արտադրություն: Բացառված չէ, որ կենտրոնական թաղամասում գտնված անոթները պատրաստվել են նույն արեեստանոցում, միևնույն վարպետի կողմից, քանի որ կիում են միևնույն զարդամոտիվը (ՀՊՊԹ 2765/4 ադ. XXXIV, 1, գունավոր ներդիր N 2):

Հասարակ խեցեղենի ժողովածուն աչքի է ընկնում նաև այլ առարկաներով (խիեր, ճրագներ և այլն): Հետաքրքիր են հենակներով գավաթները, որոնց մի մասը՝ ճրագներ են:

Գտնվել են նաև մեծ քանակությամբ ապակե անոթներ: Ապակե դամպարներն աչքի են ընկնում մեծ արամագձով, կանթերով և մատնեքավեր զարդերով: Այն հմտությամբ են պատրաստված թասերը, դրանցից մեկը կապտականաչավուն թափանցիկ ապակուց է, ունի ուղղահայաց իջնող ուռուցիկ մասեր, որոնք առանձին շքեղություն են հաղորդում անոթին: Բոլորովին նոր ձև է ապակուց կլոր թարծր մատուկ - հենակով գավաթը: Անոթի վրա արված են կենաց ծառ եիշեցնող իրար հաջորդող զարդեր: Բոլոր անոթները պատրաստված են ազատ փչման եղանակով (ՀՊՊԹ 2765/9, ադ. LV, գունավոր ներդիր N 9):

Գտնված ապակե առարկաների մեջ գեղարվեստորեն իրիստ արժեքավոր են նկարազարդ անոթները, որոնք սակավ են հանդիպում Դվենում (*Ջանիոլադյան Հ.Ս.*, 1974, ադ. 70) և ամենայն հավանականությամբ, ըբրվել են մերձավորարևելյան կենտրոններից (ՀՊՊԹ 2765/10-12, գունավոր ներդիր N 8):

Նկարազարդ ապակիները ներկայացված են երեք ռաժակներով: Մեկի զարդը ութ անգամ անընդմեջ կրկնվող քառաթև վարդյակների ռավականին ռարդ պատկեր է, մյուսը, որը պահպանվել է շատ վատ և զարդը վերականգնելն անենարին է, նույնպես ռուսական է: Երրորդ անոթի զարդը կատարման սկզբունքով քիչ ասորերվում է առաջին երկուսից: Այստեղ նկատելի է շատ ռարդ ռուսական զարդի վերարտադրությունը, որի ֆոնի վրա արված է ինչ որ կենդանու սիմվոլիկ նկար: Երեք ռաժակների պսակների վրա շուրջանակի կա արարեղեն արձանագրություն (մեկը՝ ամրողջական, մյուսը՝ կիսով չավ, երրորդը՝ մեկ հատվածով պսեպանված): Արձանագրություններն ամրողջովեն չեն վերծանված. նախնական ընթերցումների ցույց են ավել, որ դրանք մաղթանքներ են:

Պալաական դահլիճի արևմտյան թևի սառին շերտերի պեղումները շաա հետաքրքիր նյութեր են տալիս վաղմիջնադարյան Դվինի մշակույթի վերաբերյալ: Սյունագարդ դաեղիճին կից շինությունն օրգանապես մանում է պալատի հատակագծային սխեմայի մեջ: Սակայն պստեղ հստակ նկատվում է շինարարական մի երրորդ շրջան, որի ժամանակագրական սահմանները մոտավորապես ընդգրկում են VI դ. 50-70-ական թվականները: 572 թվականի ապստամբության ժամանակ, պալատի հրդիման հետ միասին, դադարել է գոյություն ունենալ նաև այս եաավածը (*Калантарян А.А.*, 1978, с. 6-7):

Սյունագարդ դահլիճի հատակի մակարդակից մոտ 0,7 մ ռարծր ռացվել է պնդաց-

րած ամուր կավից մի նոր հատակ, կենտրոնական մասում տուֆե երեք մեծ քարերից պատրաստված քառակուսի հարթակով, ծածկված մոխրի շերտով (էջ 44): Շերտը բավականին խորն է. նկատելի է հատակների երեք մակարդակ: Փոքր սենյակներից մեկում բացվել է մեծ թոնիր, որն օգտագործվել է որպես թրծման հնոց (աղ. XV, 2): Այստեղ գտնվել է ջնարակած խեցեղենի արտադրական խոտան: Նման մեծ թոնիրների հետքեր նկատվել են նաև մյուս շինություններում: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր համալիրում եղել է արհեստագործական բաժին իր հնոցով, դսզգոսիով և այլ պարագուսներով: Թաղամասի բոլոր համալիրները բնորոշվում են նման առանձնահատկություններով: Գտնված նյութերը հարուստ չեն, սակայն շատ հասկանալի են XII-XIII դդ. նյութական մշակույթին: Շատ է խոհանոցային հասարակ խեցեղենը: Ջնարակած խեցեղենը կրկնում է նախորդ տարիների պեղումներից հայտնի սլիպերը՝ առատ են միագույն կանաչ և երկնագույն ջնարակով անոթները: Բազմագույն խեցեղենն աչքի է ընկնում փորագիր հստակ զարդերով: Խեցեղենի վրա նկատելի է մասսայական արտադրության դրոշմը: րացակայում են շքել ջնարակած անոթները: Գրեթե չի հանդիպում ներմուծված պարսկական հախճապակի:

Հաղավային բուրգի մոտ հիմնական ուշադրությունը կենտրոնացվել էր գիպսե սվաղով պատի բացման աշխատանքների վրա (աղ. XX): Հետաքրքիրն այն է, որ մոտ 22-23 մ երկարությամբ այդ եաստահեղույս պատը պարսպին և աշտարակին գրեթե զուգահեռ լինելով, անկյուն տալով շարունակվում է դեպի հյուսիս: Այստեղ բացվել է պասի մոտ 10 մ երկարությամբ վստ պահպանված հատվածը: Ակներևաբար, հետագա կառուցումների ժամանակ լքված շենքի վերին մասերը լրիվ քանդել են, իսկ այն հատվածը, որը մնացել է պարսպի և աշտարակի տակ՝ պահպանվել է մի քանի մետր րարծրությամբ: Պատի արևմտյան մասը և անկյունը նույնպես ունեն խաթարումներ: Որոշվել է պատի հաստությունը՝ 2,5 մ, որոշ տեղերում րացվել են ներքին մակերեսները: Առայժմ դժվար է պարզել շինության ֆունկցիոնալ նշանակությունը և ստույգ թվագրությունը:

Ելնելով շինաընթացական տեխնիկայի որոշ առանձնահատկություններից՝ շերտագրական որոշ դիտարկումներ հիմք են տալիս ենթադրելու, որ այդ մոնումենտալ կառույցը հիմնադրվել է վաղ միջնադարում և իր գոյությունը պահպանել է մինչև XI դարը:

Պեղավայրում գտնված X-XI դդ. ջնարակած խեցեղենը հիմնականում անգործազարդ է, տարրեր երանգներով և զարդամոտիվներով: Այդ շերտում բացակայում է փորագրման տեխնիկայով եարդարված ջնտրակած խեցեղենը, որը սկսում է երևան գալ միայն XI դ. և հետագայում լայն տարածում է ստանում: Դվինի կենտրոնական թաղամասում նման խեցեղենը բացակայում է: Ողջ տարածքի վերին՝ XI-XIII դդ. շերտերում, երևան է գալիս հարդարմտն նորտոճ ենարներով այլ տիպի խեցեղեն: Այսպիսով ջնարակած խեցեղենը հուշարձանի ժամանակագրական պասակերը ներկայացնելու եիմնական չափտնիշն է:

Հարավային բուրգի հատվածում գտնվել են նաև հասարակ, խոհանոցային խեցեղեն, շատ քիչ հախճապակե, զարդեր, երկաթե գործիքներ և զենքեր:

Պեղման աշխատանքները կենտրոնական թաղամասում ղեկավարել է պ.գ.թ. Ն. Հակոբյանը, Ստորին բերդում՝ պ.գ.թ. Ֆ. Բաբայանը, Հարավային բուրգի շրջանում՝ պ.գ.թ. Ա. Ժամկոչյանը: Բոլոր չափագրական աշխատանքները կատարել է ծարտ. թեկնածու Կորյուն. Ղաֆաղարյանը: Լուսանկարները՝ Ռ. Հովհաննիսյանի, Ա. Համայանի, Գ. Ժամկոչյանի և հեղինակի:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Շ Ե Ր Տ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Դվինում վեոթին տարիների պեղումների ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ են կատարվել քաղաքի շերտագրական պատկերը հիմնավիրելու համար: Այս նպատակով ծրագրված է եղել պեղումներ կատարել նիջնաբերդի և քաղաքային թաղամասերի տարբեր հատվածներում: Միջնաբերդի և կենտրոնական թաղամասի մ.թ.ա. I հազարամյանի սկզբի շերտագրությունը հստակ ներկայացվել է Կ.Քուչնարյովայի կողմից (*Кушнарєва К.Х., 1977, с. 5-39*), որը շուրջ մեկ տասնամյակ պեղումներ է կատարել Դվինում և տվիլ է այդ շերտի համակողմանի հիմնավորումը: Այդ պատճառով նպատակահարմար ենք գտել քաղաքի շերտագրական պատկերը վերջին տարիների պեղումների արդյունքներով ներկայացնել՝ սկսած մ.թ.ա II դարից, երբ Դվինում կապված կրտաշատ մայրաքաղաքի հիմնադրման հետ, առաջանում է անտին դարաշրջանի բավականին մեծ բնակավայր:

Դվին բնակավայրի անտին շերտը նկատելի է պեղվող բոլոր հատվածների ստորին մասերում: Եթե նախորդ տարիներին այդ շրջանի նյութական մշակույթի գյուտերը կոում էին սոսկ դիպվածային բնույթ, ինկ կարասային թաղումների պեղումները կապվում էին հիմնականում վաղմիջնադարյան ճարտարապետական հուշարձանները բացելու հետ, ապա 1973 թ. սկսած հելլենիստական մշակույթի քննությունը ղուռնում է ավիլի նպատակասլաց, որն արտահայտվում էր բուն շերտի հպտնաբերումով, թվագրումով, սահմանները որոշիլով և նյութական արտադրության բազմաբովանդակ ուտումնասիությանը (*Кочарян Г.Г., 1984*):

Կենտրոնական թաղամասում այդ շերտը¹⁰ առնված է եստակ ընդգծված հրկու սահմանների մեջ: Ստորինը՝ մ.թ.ա. VIII դարի հիղեհված շինությունների հորիզոնն է, իսկ վիղին սահմանը՝ IV դարի վիղջում և V դարի սկզբներին կառուցված Դվինի հոանավ բազիլիկ եկեղեցու շինարարությունից առաջացած սպիտակ ավազաքարի մնացորդների մոտ 30 սմ հաստությամբ շերտն է, որն հի տակ ամփոփել է հելլենիստական կացարանների մնացորդները (աղ. VII, 1,2): Շերտի խորությունը տարբեր կետերում տատանվում է գետնի մակերևույթից 2,5-3,5 մ միջև, հաստությունը՝ մինչև 1,0 մ է: Շերտերից դուրս են գալիս զգուլի քանակությամբ գունազարդ և խոհանոցային խեցեղեն, տարբեր կենդանիների ոսկերներ, որմերի առանձին եատվածներ, որոնք հատակագծային ոչ մի պատկեր չեն տալիս: Այդ թաղամասում է գտնվիւմ անտիկ դամբանադաշտը, որը ներկայացված է զուտ կարասային թաղումներով, 1973-1980 թթ. կենտրոնական թաղա-

¹⁰ Պեղումները կատարվել են միանավ բազիլիկ եկեղեցու և VII դարի կաթողեկոսարանի միջև ընկած եստվածում, կաթողիկե եկեղեցու հյուսիսային և հարավարևելյան մասում:

մասում բացվել է հինգ կարասային թաղում, ոչ այնքան հարուստ նյութերով (երկու մեծ տաշտ, մեկ գնդաձև տափաշիշ, երկու փոքր կճուճ, կարմրափայլ թաս, բուն թաղման անոթները կոտրված վիճակում): Շերտում գտնված նյութերի և կարասային թաղումների քննությունը ցույց է տվել, որ դրանք վերաբերում են մ.թ.ա. II-մ.թ.- I դարերին (*Քննարկյան Գ.Գ.*, 1980, 277-285):

Միջնաբերդի զագաթի հարավային հատվածի ստորին հորիզոններում, մոտ 5,0 մ խորության վրա, բացվել են անտիկ շրջանի պատի մնացորդներ, գտնվել են խեցեղեն նյութեր. Այս հատվածում նույնպես հելլենիստական շերտը բավականին հստակ է թվագրվում, ստորին մասում ունենալով մ.թ.ա. IX-VIIIդդ. պաշտամունքային, արտադրական և ընակելի շինությունների սահմանը:

Բոլորովին այլ է վերին հորիզոնի պատկերը: Որոշակի նկատելի են հիդեեի հետքեր, որին անմիջապես հաջորդում են վաղմիջնադարյան կառույցները: Ենթադրվում է, Դվինի հելլենիստական բնակավայր մ.թ. 59 թվականին հիդեեի վել է Կորբուլունի կողմից, Արտաշատը թողնելուց հետո (*Քալանթարյան Ա.Ա.*, 1970, էջ 10):

Այսպիսով, մ.թ.ա. VIII սկսած մինչև մ.թ. IVդ. 30-ական թվականները, երբ խոսքով Բ Կոտակ թագավորը Արտաշատից Դվին է տեղավորվում արքունիքը, ժամանակագրական տեսակետից մենք ունենք երկու մեծ ընդհատում:

Մ.թ.ա. VIII դարից մինչև մ.թ.ա. IIդ. Դվինի տարածքում ոչ մի մշակութային շերտ առայժմ չի նկատվում: Ըստ երևույթին բնակավայրը, հավանաբար ուրարտացիների կողմից ստացած ուժեղ հարվածից հետո, այլևս չի վերականգնվել: Դա դիտվում է պեղվող բոլոր հատվածներում: Այսպես, VII դարի կաթողիկոսարանից արևելք, հելլենիստական շերտի տակ անմիջապես բացվում են հեթանոսական մեհյանի մնացորդներ, որոնք հստակ թվագրվում են IX-VIII: Նույն պատկորը նկատվում է նաև միջնաբերդում: Մ.թ.ա. II դարում Դվինի տարածքում հիմնադրված բնակավայրը նույն կարգավեճակն ուներ, ինչ որ այլ բնակավայրերը, որոնք ստեղծվել էին Արտաշատի ետո միասին, վերջինիս շրջակայքում: Ըստ երևույթին նման բնակավայրերը Արտաշատին մատակարարում էին գյուղատնտեսական մթերքներ, թեև բացառված չէր, որ որոշ արտադրական միավորումները՝ ասենք խեցեղենի արտադրության առանձին արհեստանոցներ, կենտրոնացված լինեին նաև նման բնակավայրերում:

Սկսած մ.թ. I դարից մինչև IV դարը պեղվող հատվածներում մշակութային շերտերը նույնպես բացակայում են, որը խոսում է բնակավայրի ժամանակավոր լքված լինելու մասին: Քաղաքի տարածքից գտնված առաջին դարերի սակավաթիվ նյութերը պատահական են և առայժմ չեն կարող հիմք ծառայել բնակավայրի գոյության համար հիշյալ դարերում:

Դվենի միջնադարյան շերտագրական պատկերը բավականին բարդ է և խճողված: Հագարամյա գոյության շրջանում քաղաքը բազմիցս ավերվել է օտար նվաճողների կողմից և նորից վերակառուցվել: Դվենն ապրել է բնական երկու մեծ աղետ՝ 863 և 893 թվականների երկրաշարժերը, որոնք պատմիչների վկայությամբ, ահավոր ավերածության են ենթարկել քաղաքը:

Այս ամենը ստեղծել է բարդ իրավեճակ և մեծ ջանքեր է պահանջում վերականգնել տարբեր դարաշրջանների հատակագծային-կառուցողական պատկերը, տալ ենագիտական նյութի և ճարտարապետական հուշարձանների ժամանակագրական ճշգրիտ

սանդղակը: Հուշարձանի շերտագրությունը ամրոջացնելու նպատակով, ընդգրկված են մատենագրական և հարակից այլ նյութեր, որոնք մեծապես օգնում են ժամանակագրական տախտակե վերականգնմանը: Մասնավորապես կարևոր են Դվինի տարածքից գտնված սասանյան, բյուզանդական, արաբական, սելջուկյան և վոսցական արժաթե և պղնձե դրամները, որոնք վորստին հաստատում են տվյալ շերտերի թվագրությունը:


Քաղաքի միջնադարյան ամրոջ շերտը ժամանակագրական առումով դիտվում է տարբեր մասերում կատարված պեղումների արդյունքներով, այն տրոհվում է մի շարք հատվածների:

Միջնադարյան վաղ շերտեր բացվում են քաղաքի կենտրոնական թաղամասում: Այստեղ պեղումները կենտրոնացվել են կաթողիկե եկեղեցու շրջակայքում: Դրանից հարավ-արևմուտք պեղվում է կենտրոնական սյունազարդ դահլիճով պալատական մի նոր շինություն (նկ. 10, աղ. I-IV): Շերտի խորությունը տեղ-տեղ հասնում է մինչև 3,5 մ: Մոտ 2,0 հազար քառ. մ տարածքով այդ հսկայածավալ շինությունը թաղված էր մոխրի և շինարարական մնացորդների մոտ 1,0 մ խորությամբ շերտի տակ: Ավելի քան տասը տարի տևած պեղումները բացել են պալատի հիմնական մասը և տվել ժամանակագրական և շերտագրական եետաքրքիր պատկեր: Պալատի սյույնազարդ դահլիճի և սենյակների հատակին գտնված նյութերը ցույց են տալիս, որ դրանք վերաբերում են V-VI դդ.: Այդ առումով հետաքրքիր են օվալաձև և կլոր բլթակներով տաշված հաստ պատերով ապակե թասերի ռեկորները, եռաթև նետասլաքների գյուտերը, որոնք ստույգ թվագրվում են հիշյալ ժամանակահատվածով (*Տիրացյան Գ.*, 1963, էջ 109-110: 1968, էջ 287-290, *Քալանթարյան Ա.Ա.*, 1970, էջ 17-18, 26), կապտականաչավուն ջնարակով սասանյան տիպի անոթների ռեկորները, եղենազարդ գոտիներով կարասների բեկորները և այլ նյութեր: Շերտի թվագրության համար կարևոր է դահլիճի մեծ խարխսխների հարդարանքը, եզրերում՝ եռանկյունաձև ելուստներով, որոնք բնորոշ են միայն V-VI դարերին (աղ. V, 2):

Պալատը VII դ. սկզբներին ավերված է եղել, քանի որ հիղեհված շինությունը ծածկվել է 608-619 թթ. կաթողիկե եկեղեցու վերականգնման ժամանակ առաջացած տուֆի շարվածքի և եկեղեցու նախորդ շինության քանդված ռեկորների մոտ 0,5-0,7 մ եաստությամբ շերտով: Այսպիսով, պալատի տեղում դիտվում է երկու շերտագրական հորիզոններ, մեկը՝ ընդ պալատին է վորաբերում, թվագրվում է V-VI դդ. և հազեցած է մոխրի ստվար շերտով, երկրորդը՝ անմիջապես եաջորդում է դրան, առաջացել է շինարարական մնացորդներից և թվագրվում է VI դարի 70-ական թվականից մինչև VII դարի 20 -թվականները, շուրջ 50 տարի (աղ. VI, 1):

Շերտագրական այս պատկերը լրացվում և եաստատվում է նաև գրավոր աղբյուրներով: Հանրահայտ է, որ V դ. 70-ական թվականներին՝ Գյուտ կաթողիկոսի օրոք Վաղարշապատից Դվին է տեղափոխվում Հայոք հոգևոր կենտրոնը՝ կաթողիկոսաբանը: Բնականարար եարց է առաջանում կաթողիկոսական պալատի կառուցման մասին, անմիջապես Դվինի Մբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցու մոտ: Դժվար չէ կոահել, որ կաթողիկոսական պալատի շենքը կարող էր լինել եիշյալ կառույցը: Պալատի հատակագծային առանձնահատկությունները և համեմատությունը Դվինի և Ջվարթնոցի VII դարի կաթողիկոսարանների հետ, հատկապես ըեմը, իստում են այդ վարկածի օգտին: VI դարի

Նկ. 10. Կաթողիստական պալատի և կից շինությունների հատակագծեր: 1972-1980 թթ. պեղումներ: V-VI դդ.: Կենտրոնական բաղամաս:



կեսերին դահլիճին կից եարկաբաժիններում նկատելի են լուրջ փոփոխություններ, եստակների բարձրացում: Հետաքրքրականը գրադաշտական ատրուշանի բացվելն էր պալատի արևմտյան թևում (աղ. V, 1): Այդ մեկանը պալատի սյունազարդ դահլիճին անմիջապես կից կառույց է: Նրա հատակը բարձր է, պալատի դահլիճի հատակեց մոտ 0,7 մ, մեկանի միակ պահպանված խարիսխը շատ մնաց է դահլիճի խարիսխներին, փոքր ինչ շեղումներով: Ատրուշանի կողքին կանգնեցված կարասն ունի եղևնազարդ գոտի, որը բնորոշ է V-VI դարերին: Պարզ նկատելի է, որ կոակապաշտական մեկանը հետագա վերափոխությունների արդյունք է: Ակներևաբար, VI դ. 60-ական թվականներին Մուրեմն մարզպանի կոոնական անհանդուրժողական քաղաքականության ժամանակ, պալատը կորցնում է իր նախկին նշանակությունը և վերածվում սասանյան տեղական իշխանության համար ինչ որ պաշտոնական նստոցի, ուր կառուցվում է մեկան: Անտարակիսյ է, որ պալատն իր վուլոխություններով հանդերձ ոչնչանում է 572 թ. ապստամբության ժամանակ, որը հաստատվել է նաև գրավոր վեայություններով: Պալատի ներսում վերափոխության հետքեր են նկատվում նաև արևելյան թևի սենյակներում: Այստեղ շատ եստակ նկատվում է երկու հատակ: Ընդ որում ստորինը շատ մնաց է կենտրոնական սյունազարդ դահլիճի եստակին: Հետագայում այն լցվել է խճով և կոմինդրի բեկորներով: որի վրա արվել է նոր հատակը 20 սմ բարձրությամբ: Դժվար է ասել, թե այդ վուլոխությունը երբ է կատարվել, հնարավոր է, որ այն նույնպես արված լիներ VI դ. 60-ական թվականներին, երբ պալատը զրկվում է իր հոգևոր նշանակությունից: Այսպիսով մենք ունենք V դարի 70-ական թվականներին հաջորդող շուրջ մեկ դար կազմող մի շերտ, որը շատ եետաքրքիր նյութեր է տալիս այդ ժամանակահատվածի վերաբերյալ: Խեցեղեն արտադրանքում նկատելի են որոշ ընդհանրություններ կապված անտիկ շրջանի խեցեղենի հետ (*Խաչատրյան ժ.Դ., Կանեցյան Ա.Գ., 1974, N 9*): Նույնը կարելի է ասել ապակու և զենքի վերաբերյալ:

Պալատի վրա առկա խճի շերտը ստույգ թվագրվում է և այս առումով հետաքրքիր է նրա մեջ գտնված նյութերի քննությունը: Խճի շերտում գտնված ամենահետաքրքիր գյուտը ապակեգործական արհեստանոցի մնացորդների հայտնաբերումն է (աղ. XXVI-XXVII), խոտանի, հումքի և խարամի բազմաթիվ մնացորդներով (*Костанян К.А., Калантарян А.А., 1977*): Այդ արհեստանոցում պատրաստվել են դամպարներ, խճանկարի ապակե խորանարդիկներ, լուսամուտի ապակի և այլ առարկաներ, որոնք օգտագործվել են VII դարի սկզբում վերակառուցված կաթոլիկեի և կաթոլեկոսարանի նոր շենքի ներքին եարդարանքում: Այստեղի մատնեքավոր թասիկաձև դամպարները իրենց ձևով մնաց են IX դարում հանդիպող նույն կիրառությունն ունեցող անոթներին, մի հանգամանք, որը չի ժխտվում նաև մերձավորարևելյան զուգահեռներով:

Այդ շերտում շատ են եանդիպում բեկորներ, որոնք վերաբերում են կաթոլիկե եկեղեցու V-VI դդ. շինությանը: Դրանք քանդակազարդ քարեր են խաչանշան զարդերով, իջանկար հատակի առանձին բեկորներ (աղ. XXV), կոմինդրներ, որոնք պատկանել են եկեղեցու մախորդ ծածկին: Վերջիններս իրենց ձևով և չափերով տարբերվում են Դվինում մեծ քանակությամբ գտնված VII դարի կոմինդրներից: Հայտնի են Զվարթնոցում և այլ եուշարձաններում:

Հետաքրքիր են բուն շերտում գտնված և նույն ժամանակաշրջանով թվագրվող նյութերը: Խեցեղենին, հատկապես կճուճներին ընդհանրապես են ներձկված լայն ակոսներով ե-

ոաստրոճան և քառաստիճան պսակները, բաց դեղնավուն գույնը, ուռուցիկ, փոքր ինչ տանձաձև իրանները, լայն հատակները: Նման խեցեղեն նախորդ շերտերում չի հանդիպում, իսկ IX դ. նյութերում դրանք եզակի են: Ըստ երևույթին, այդօրինակ անոթների արտադրությունը տարածված է եղել VII-VIII դդ.: Խճի մեջ շատ են ճրագները, ինչպես բեկորներով, այնպես էլ ամբողջական: ճրագների մեծ մասը թասի ձև ունեն, մրապատ են, փոքր ելուստներով: Հանդիպում են նաև հենակով ճրագներ, որոնք բնորոշ են և հայտնի ավելի վաղ ժամանակներից (աղ. XXXVII, 2): Հիշյալ շերտում պատերի մնացորդները իսպառ թացակայում են: Իսպառակայում է այդ հատվածը արտադրական հրապարակ լինելու իրողությամբ, ուր գիշեր ու գոր աշխատել են քարտաշ վարպետները: Այդ է վկայում ճրագների ամատությունը, ինչպես նաև վարպետներին պատկանող քար տաշելու երկու կացիների հայտնաբերումը:


Վաղ միջնադարյան շերտագրության համոզիչ պատկեր է բացվում նաև կաթոդիկե տաճարից հյուսիս և հարավ ընկած պեղավայրում: Այստեղ առկա է նախորդ տաբիններից բացված մի մակարդակ, որի վրա են գտնվում VII դ. կաթոդիկոսարանը, V դ. միանավ եկեղեցին և այլ կառույցների մնացորդներ:

Անմիջապես այդ մակարդակից սկսվում է V-VI դդ. շերտը, որը ստորին մասում սահմանագծված է եռանավ բազիլիկ եկեղեցու կառուցման ժամանակ սալտակ ավազաքարի ջարդվածքից առաջացած, տեղ-տեղ մոտ 0,30 մ հաստությամբ շերտով (աղ. VII, 1,2): Վերջինս, ինչպես նշեցինք, հստակ սահմանագատում է անտիկ և միջնադարյան շերտերը: Խճի այդ հորիզոնը նկատելի է եկեղեցու շրջակա ողջ տարածքում: Այս հատվածի պեղումները վերստին հաստատեցին, որ կաթոդիկե եկեղեցուց հյուսիս գտնվող պալատը կառուցվել է եկեղեցու վերաշինման ժամանակ՝ VII դ. սկզբներին և ոչ թե V դարում, ինչպես ընդունված էր ուսումնասիրողների մի խմբի կողմից (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1952, էջ 118; *Հայրությունյան Վ.Ս.*, 1950, *Халлахчьян О.Х.*, 1971, с. 93 և ուրիշներ): Պալատի հատակի և պատերի տակ բացվել են կառույցի մնացորդներ, կարասների շաղքերով (աղ. VI, 2): Ըստ երևույթին այստեղ եղել է տնտեսական շինություն, որն սպասարկել է եկեղեցուն: Շինությունը թվագրվում է V-VI դդ., որը ճշտվում է նաև եղևնագարդ գոտիներ ունեցող կաբասների առկայությամբ: Որպես պարտադիր կանոն կարասները ծածկված են եղել քարե կլոր սալերով: Կաբասներից մեկն ունեցել է ողորկ մակերեսով կավե հաստ կավարիչ: Դրա բեկորի վրա մանր նուրբորով փորագրված է. «Գըիգոր» անունը: Այս արձանագրությունը ամենահինագույնն է նման իբերի վրա և վիճաբանական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Դժվար է ասել, այդ անունը որևէ կապ ունի՞ եկեղեցու Աբ Գրիգորի անվան հետ, թե ուղղակի վարպետի անունն է (աղ. XXVIII, 4):

Շերտագրական առումով հետաքրքիր է կաթոդիկե եկեղեցու հարավարևելյան մասում պեղվող ետավածը (նկ. 11): Այստեղ անմիջապես Vդ. սկզբի խճից հետո բացվում են 3,20 մ լայնքով կառուցված անմշակ խոշոր որձաքարերով մեծ պատի մնացորդներ: Առայժմ դժվար է որոշել այդ պատի, թեևս պարսպի ֆունկցիոնալ դերը¹¹: Բացվել են

¹¹ 1983 թ. V դ. պալատի հարավային սենյակի արտաքին պատերը մաքրելու ժամանակ բացվել են նույն լայնությամբ և նույնպիսի քարերով պատի հետքեր, որոնք պալատի արտաքին պատի դեբ են կատարել: Թե ինչ կապ կարող էր լինել այս երկու ետավածների միջև, դժվար է ասել: Ըստ երևույթին այն կարող էր լինել կրոնական թաղամասը գոտևորող պաշտպանական պարսպի մի հատված, որին կից, գուցե և միաժամանակ կառուցվել է պալատը:


Մասնավոր թաղամասեր, որտեղ ամփոփված են եղել հոգևորականների աճյունները: Գտնվել են կարմիր ներկով պատած և լավ հարդարված թևավոր խաչերի թեկորներ: Շերտերի



Նկ. 11. Հատակագիծ կաթողիկե եկեղեցուց հարավ ընկած պեղավայրի: Մ.թ.ա. II-մ.թ. I դդ. և V-VI դդ.: Կենտրոնական թաղամաս:

վերին հատվածում ձգվում է բավականին երկար կավե խողովակաշար (նկ. 31), որը ծայր է առնում թաղամասը միջնաբերդի ետև կապող մուտքի մոտից: Այստեղ դեռ նախորդ պեղումներից եայտնի էր զույգ խողովակաշար, որը անցել է խրամատի վրա զգված կամուրջի տակով և ճյուղավորվում էր թաղամասում: Տվյալ շերտի մեջ պահպանված առանձին հորիզոնները ցույց են տալիս, որ թևավոր խաչերը գոյություն են ունեցել մինչև VI դարը, թերևս ավերվել են 572 թ. դեպքերի ժամանակ՝ պարսիկների կողմից: Ջրամատակաբարձան համակարգը ըստ երևույթին անցկացվել է VII դարի սկզբներին, Սմբատ Բագրատունի մարզպանի կողմից կատարված ռարեկարգման աշխատանքների ժամանակ:

Այսպիսով եկեղեցու շրջակա տարածքում V-VII դդ. մենք ունենք վաղմիջնադարյան շերտագրության շատ ստույգ պատկեր: Այս տեղամասում շինարարական այլ գործունեություն VII դ. 20-ական թվականներից հետո, մինչև VIII դարի վերջը նկատելի չէ: Հավանաբար եկեղեցիների և պալատների շրջակա տարածքը եղել է հրապարակ, որտեղ միայն թաղումներ են կատարվել: Կան գերեզմաններ և հուշակոթողների վերգետնյա



Նկ. 31. Ջրատար խողովակաշար կաթողիկե եկեղեցու հարավարևելյան հատվածում: VII դ. սկիզբ:

կառույցների առանձին մանրամասներ (հարթակների, խարիսխների և թևավոր խաչերի ընկորներ): Այն, որ եկեղեցու շրջակայքը եղել է հրապարակ, վեայված է նաև Փարպեցու մոտ, կապված 485 թ. Վահան Մամիկոնյանի մարզպան կարգելու արաըրության հետ (*Ղազար Փարպեցի*, 1907, էջ 393-394):

VIII դարի վերջում կամ IX դարի սկզբներից կառուցապատվում է կաթողիկե եկեղեցու շրջակա ոչ հեռու ազատ տարածքը: Կավակերտ այդ շինությունների մի մասը խաթարվել է XV-XVII դդ. խիտ թաղումների հետևանքով (աղ. II,2): Բացի այդ, երկու երկուշարժերը խիստ ավերվել են դրանք, այնպես որ, երբեմն շինությունների հատակագծա-

յին ամբողջական պատկերն իսկ դժվար է վերականգնել: Այդուհանդերձ, 893 թ. երկրաշարժը իր ավերածություններով մի սահման է, որով շատ ճշգրիտ թվագրվում է շերտը: Ամբողջ հարցն այն է, որ լավ պահպանվել են շինությունների հատակներն իրենց հորերով, որոնք տալիս են ջնարակած տեղական և ներմուծված խեցեղենի շքեղ օրինակներ, ապակե սպասքի բազմաթիվ նմուշներ, մետաղ և այլն: Հարկ է նշել, որ այդ նյութերը ստույգ թվագրվում են և՛ շերտով և՛ մերձավորարևելյան զուգահեռներով, IX դարի շերտի թվագրությունը ավելի ոյուրին է դառնում շերտում գտնված արաբական արժաթե և պղնձե դրամներով, որոնց մի մասն արդեն VIII դարից «Դաբիլ» մակագրությամբ հատվում էր Դվինում: Տեղանքի առանձնահատկություններով պայմանավորված այդ շերտը ռացվում է 1,3-1,5 մ խորությունից և ունի մոտ 1,0-1,2 մ հաստություն:

IX դարի նյութական մշակույթը երկրի տնտեսական զարգացման մոր շրջանի ծնունդ է, որը սկսվում է երկորը արաբական լծից ազատագրվելու հետո: Այդ շրջափուլում է, որ արիեստագործությունը և առևտուրն անջատվում են գյուղատնտեսությունից և կենտրոնացվում են քաղաքներում (*Առաքելյան Բ.Ն.*, 1958, էջ 59): Առաջանում են սպառման լայն շուկաներ և արիեստային արտադրանքը դառնում է մասսայական, ներքին ու արտաքին շուկաների համար: Վերելք է ապրում քաղաքային կյանքը: Արիեստագործության մեջ առաջանում են երևույթներ, որ կապված էին զուտ քաղաքային կյանքի զարգացման հետ: Դա առաջին հերթին միջնադարում ջնարակած խեցեղեղնի երևան գալն ու մասսայական արտադրությունն էր (*Якобсон А.А.*, 1978, с. 148-150), որը Դվինում մեծ վերելք է ապրում: Նույն ժամանակ դիտվում է նաև ապակեգործության և մյուս արիեստներում:

Աշխարհիկ շինությունները, որոնք բացվում են Դվենի կենտրոնական թաղամասում, կառուցվել են հում աղյուսից, որոնք իրենց չափերով համապատասխան են թրժվածներին (16-20x 16-20x 5 սմ): Որպես կանոն պատերն իրենց հիմքում քարաշար չեն: Ըստ երևույթին դա կառուցողական մի եղանակ էր, որ խորթ էր հայկական ճարտարապետությանը: Կառուցողական այդ ձևի տարրերը զգալի են Դվենում (VIII դ. արաբ ոստիկանների պալատի շինությունը Դվենի միջնաբերդում): Բնակելի տների հատակագծերում տեղ է գտել հազարաշենը: Այդ են ապացուցում տեղում գտնված սյան խարիսխները, որոնց մի մասը կրկեակր են օգտագործվել:

Մեծ թիվ են կազմում հորերը, որոնք օգտագործվել են կրմունալ նպատակներով և թափոնների հեռացման համար: Այդ խորը հորերից երևան են գալիս մեծ քանակությամբ ապակե անոթների և խեցեղենի բեկորներ, որոնք կազմում են հնագիտական նյութի հիմնական զանգվածը:

IX դարի առևտրատնտեսական հարաբերությունների ուսումնասիրման առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում եորերից մեկում գտնված կավե կեքադրոշմները (Նկ. 36), որոնք իրենց վրա կրում են հիմնականում արաբերեն անուններով կնիքների դրոշմներ (*Калантарян А.А.*, 1982, 31): Այդ կնքադրոշմները կուլտուր-պատմական մեծ նշանակություն են ձեռք բերում այն առումով, որ ընդհանրապես հանդիպում են առաջին անգամ ողջ Արևելքում և մեկ անգամ ևս վաղ ապացույց են արարների կողմից սասանյան ավանդույթների շարունակելու մասին: Կնքադրոշմները օգտագործվել են առևտրական եակեր կնքելու համար: Անտարակույս դրանք վավերացնող անձնավո-

րությունների մի մասը տեղացիներ են և պատկանել են Դվինի հոգևոր և առևտրական բարձր խավուն:



Նկ. 36. Կավե կնքադրոշմներ: Կենտրոնական թաղամաս, IX դ.:


IX դարի շերտերում գտնված հնագիտական նյութերի քննությունը երևան է բերում մի շարք գծեր, որոնք պարտադիր են այդ ժամանակաշրջանի համար: Այսպես, ջնարակած տեղական և ներմուծված խեցեղեն անոթները, մասնավորապես թասերն ունեն լայն օղակավոր նստուկ, որը հետագուս դարերում աստիճանաբար փոփոխության է ենթարկվում: Թասերը խորը չեն. ունեն քիչ ներձկված պսակներ: Ջնարակը հիմնականում եռագույն է (կանաչ, դեղին և դարչնագույն, ադ. XLII, գունավոր ներդիր N 3): Ավելի վաղ տիպերը անզոր չունեն: Կճուճներն ունեն ցայտերով արված զարդեր, որոնք չեն հանդիպում հետագուս դարերում: Ջնարակած անոթների զարդերը նույնպես բնորոշ են IX դարի համար: Անոթները նկարագարող են: Իսպառ ռացակայուն է փորագիր զարդը (տարածվում է XI դարից): Ջարդը հիմնականում բուսական և երկրաչափական է: Երևան են գալիս կաղապարի մեջ ճնշման եղանակով հարդարված անոթները, որոնք մի քանի բնորոշ օրինակներ միևնույն զարդերի կրկնությամբ տարրեր անոթների վրա հանդիպում է Դվինի կենտրոնական թաղամասում:

IX դարում վերելք է ապրում ապակեգործությունը: Մեծ թիվ են կազմում տարբեր երանգներով տեղական և ներմուծված հաստ, ինչպես նաև բարակ պատերով բաժակները, կանելյուրազարդ թասերը և դամպարները, որոնք գտնվում են եկեղեցուն ամմիջապես կից, IX դ. շինությունների երեքում: Հորերի մնացորդներ ռացվել են նաև կաթոդիկե եկեղեցու հյուսիսային և հարավարևելյան հատվածում պեղվող հելլենիստական շերտերում:

Քաղաքի միջնադարյան շերտագրության համար կարևոր նշանակություն ունեն միջնաբերդի հարավային աշտարակներից մեկի ներսի հատվածում կատարվող պեղումները մոտ 625 քառ. մետր տարածքով (-y-z-a' -b'-c'-5-9 քառակուսիներ) (Նկ. 12):

1961-1963 թթ. միջնաբերդի պարսպի այս հատվածում կատարված պեղումների ժամանակ բացվել էր մի մեծ աշտարակ 38,7 մ պարագծով և պարսպի մի հատվածը: Այդ պեղումների ժամանակ հայտնաբերվել էր նաև մի փոքր բուրգ, որը հետագա վերանո-

րոգության արդյունք էր (Ղաֆադարյան 4.9., 1982, էջ 64, 68, 109-110): 1977 թ. սկսած պեղումները նպատակ էին հետապնդում պարզել միջնաբերդի ներսի շինությունների և րերդապարիսպի միջև եղած կապը, այդ հատվածում մեծ տարածքով կատարել շերտագրական կտրվածք, լուծել պարսպի թվագրության, ետմոնղոլական Դվինի գոյության ժամանակագրական հարցերը:



Նկ. 12. Հատակագիծ հարավային բուրգի պեղավայրի: 1977-1980 թթ. պեղումներ: XI-XIII դդ.: Միջնաբերդ:

Պեղվող հատվածի ստորին հորիզոնում, անմիջապես աշտարակի ներսի մասում, մոտ 2,5 մ խորության վրա բացվում է մոնումենտալ ինչ որ շինության լայն պատ, որն արտաքուստ ունի կրաշաղախ ողորկ ավաղ, շարված է անկանոն տաշվածքով տարրեր քարերով, ամուր կրաշաղախ հիմքով: Պատի լայնությունը մոտ 2,5 մ է, բարձրությունը տեղ-տեղ 4,0: Բացված պատի երկարությունը 47 մ, որից շուրջ 20-ը թեքվում է դեպի հյուսիս (աղ. XX): Դժվար է առայժմ պարզել շենքի ֆունկցիոնալ նշանակությունը. պեղումները դեռևս նախնական վիճակում են: Պատերը շարունակվում են երկու ուղղությամբ և գտնվում են հողի ստվար շերտի տակ: Նախնական տեսակետը, թե այն կարող է հին պարիսպ լինել, չի համոզում: Հյուսիսային մասում պատը շատ է մխրճվում միջ-

նաբերդի հարավային տարածքի մեջ: Առայժմ կարելի է միայն ենթադրել, որ անմիջապես պարսպին կից այդ կառույցը կարող էր մաքսատան, կալսագործի կամ մեկ այլ ուրիշ հասարակական շինության դեր ունենալ: Շինության պատերը պեղելու ժամանակ փոսի միջից դուրս էր գալիս IX դարի նյութեր, որոնք իրենց նմանակներն ունեն կենտրոնական թաղամասի նյութերում (ապակի, խեցեղեն): Այս նյութերը ցույց են տալիս, որ տվյալ շինությունը VIII-IX դդ. կանգուն էր: Շինության վերին հորիզոնում արդեն նկատելի են X- XI դդ. կառույցների հետքեր, որոնք ենթադրում են այդ շրջանում արդեն շինության ավերման մասին:

Հետաքրքիրն այն է, որ աշտարակը և պարսպապատի մի հատվածը կառուցված է շինության պատի, իսկ աշտարակի նորահայտ ներսի կոր հատվածը անմիջապես դրված է XI դարի շերտի վիա: Եթե թվում է, որ ուշ սասանյան շրջանում՝ պարսպին անմիջապես կից կառուցվում է ինչ որ մի մոնումենտալ շինություն, որի առկայությունը կապված էր պաշտպանական նպատակների հետ: Բացառված չէ, որ այստեղ կարող է հետագայում բացվել նաև մուտքի հետքեր, չնայած դրա արտաքին նշանները բացակայում են: IX դարի վերջերին և X դարի սկզբներին Դվինը մեծ հարվածներ է ստանում բնական աղետից և օտար նվաճողներից: Հավանաբար այդ ժամանակ էլ, բազմաթիվ շինությունների հետ միասին, ավերվում է նաև հիշյալ կառույցը պարսպայների հետ մեկտեղ. Դվինի միջնաբերդի պարսպապատի հարավային հատվածը աշտարակով ստույգ կառուցված է XI դարից հետո: Այդ են ապացուցում շերտագրական հավաստի տվյալները: Ինչպես տեսանք պարսպի այս հատվածում, դեռ նախորդ տարիների պեղումների ժամանակ նկատելի էր բարեփոխումների հետքեր: Պեղումների տվյալ աստիճանում լուրջ դժվարություններ է հարուցվում որոշելու քաղաքի միջնաբերդի պարսպի և նրա փոփոխությունների հարցերը:

Փլուզված հաստ պատի և նրան հարակից տարածքում, գետնի մակերևույթից մոտ 2,0 մ խորության վիա բացվում է ոչ հզոր մի շերտ, որը իյիստ ավերված է հետագա կառուցումների հետևանքով (աղ. XVIII, XIX): Այն տալիս է հետաքրքիր խեցեղեն, որը չի հանդիպում կենտրոնական թաղամասի նյութերում և իսպառ բացակայում է միջնաբերդե արևմտյան ստորին հատվածում: Դեռևս նախորդ տարիների պեղումներից ենթադրվում էր, որ անգործով նկարագարողված ջնարակած խեցեղենը թվագրվում է X-XI դդ., որ այն նոր երևույթ է ջնարակած խեցեղենի արտադրանքում: Այդ խեցեղենը Դվինում հայտնի է հորերի նյութերում և կան ամբողջական օրինակներ (*Ղաֆաղարյան Կ.Գ.*, 1982, տախտ. XXI, 1-2, 4-5): Սակայն այդ ժամանակաշրջանի համար հստակ շերտի առկայությունը Դվինում դիտվում է առաջին անգամ: Շերտում ճարտարապետական կառույցներ գրեթե բացակայում են, եթե հաշվի չառնենք սրբատաշ քարերով (երկոորդական օգտագործմամբ) պատի առկայությունը, որը ցայտուն կերպով ցույց է տալիս, որ այն շինվել է քաղաքի ավերված շինություններից բերված քարերով: Շերտում մեծ քանակությամբ գտնվել են անգործով նկարագարողված կանաչ, դարչնագույն, սպիտակ երանգով և տարբեր գույնի ֆոնով թասերի բեկորներ: Այդ թասերն իրենց ձևերով մերձենում են IX դարի անոթներին սակայն նստուկների և պսակների մեջ նկատվում են որոշակի տարբերություններ:

Գտնվել են նաև ոչ փորագիր, նկարագարող անոթների տիպեր, որոնք պատած են ջնարակով և պատրաստման հնարներով IX դ. անոթների անմիջական շարունակությամբ:

յունն են կազմում: Տարբերությունը, սակայն ջնարակի որակի և նկարի մեջ է: Շատ են ցայտերը, վարդյակները, բազմազանություն, որ բնորոշ է Դվենի այդ շրջանի խեցեղենին (*Ղաֆադարյան Կ. Գ., 1982, տախտ. XXII*):

Պարզվում է, որ պեղվող այդ փոքր հատվածը եղել է մառան, քանի որ պատեղ գտնվել է մի կարաս (1983 թ. նույն տեղում հայտնաբերվեց ևս երկու կարաս), որն իր ձևով նման է ավելի վաղ օբինակներին, սակայն չունի դրանց հատուկ զարդը և որոշ տարբերություններ նկատվում է հատակի և պսակի մասում:

X-XI դդ. շերտերում արդեն նկատելի է փորագրման տեխնիկայի կիրառումը ջնարակված անոթների արտադրանքում: Սակայն այդ փորագրությունը կատարվում է շատ թույլ, նկարի մեջ քիչ են տարբերությունները: Լայն տարածում է ստանում բազմազանությունը և զարդի վերացարկված ձևերը (ադ. XLIII, XLIV): Ըստ երևույթին այդ շրջանում էլ լայն կիրառություն է ստանում կապալառային ջնարակը, որը մի առանձին շուք էր հաղորդում անոթի մակերեսին և հայտնի էր կավի հետ իր կաչողական հատկություններով: IX-X դդ. ջնարակները կալաքառային են, շատ է պոտաշը, դրա համար էլ այն հողի մեջ երկար մնալուց հետո, երբ դուրս է բերվում, անմիջապես խամրում է: Բացի այդ, ջնարակած անոթների մեծ մասի մակերեսը թափվում է, որը հետևանք է թրծման ժամանակ պոտաշային ջնարակի վատ կաչելու հատկությամբ:

Հաջորդ հորիզոնը մոտ 1,20-1,50 մ հաստությամբ գտնվում է գետնի մակերևույթից 0,5-0,7 մ խորության վրա, հագեցված է ճարտարապետական կառույցներով և առատ հնադիտական նյութերով: XII-XIII դդ. թվագրվող այս շերտի վերին սահմանը ընդօգնված է մոնղոլների կողմից ավերված շինությունների մնացորդներով: Գտնված դբամները ելտկուզյան և վոացական են. թվագրվում են XII-XIII դդ.: Ջնարակած խեցեղենը հիմնականում միագույն կանաչ է, փորագիր զարդերի տարրեր ձևերով: Դրանք առատորեն հանդիպում են քաղաքի ողջ տարածքում. արտադրվում էին լայն սպառման համար:

XII-XIII դդ. խեցեղենը պատրաստվել էր ոչ միայն խոշոր մասնագիտացված արհեստանոցներում, այլև տնայնագործական եղանակով: Նկատելի է անոթների թրծման մասսայական ղեպեր ոչ մեծ թոնիրներում, որոնց մեջ գտնվել են խոտանված անոթների բեկորներ և եռոտանիներ: Այդ անոթներն աչքի են ընկնում իրենց ոչ գեղարվեստական արժանիքով և արտադրվել են ներքին պահանջները թավարարելու համար: Սակայն գտնվածների մեջ կան բավականին լավ պատրաստված ջնարակած թասեր, որոնք հավանաբար արտադրվել են մեծ արհեստանոցներում: Դրանք հիմնականում եղել են բազմազույն և մշակման մեջ պահանջել են վարսյետություն և աշխատանքի որոշ բարդություն:

XII-XIII դդ. ջնարակած անոթները բավականին զուսպ են իրենց նկարներով, զարդերով և զույներով: Անոթների ձևերը տարբերվում են նախորդ շրջանի ձևերից, ունեն կրունկ հիշեցնող բարձր նստուկ, ուղիղ կտրված պսակներ, որոնք բնորոշ են այդ շրջանի արտադրությանը (ադ. XLV, 3-6): Պեղավայրում շատ քիչ են հանդիպում հախճապակե թասերը, որը խոսում է քաղաքի այս մասում ապրող բնակիչների սոցիալական վիճակի մասին: Այդ անոթները բավական թանկ էին գնահատվել և դրանց ձեռք բերելը կապված էր որոշակի նյութական պայմանների հետ:

Նույն շերտի հորիզոններից, թերևս XII դ. սկզբներով թվագրվեղ նյութերի մեջ աչքի

են ընկնում վերացարկված զարդերով բազմագույն անոթները: Դա տեխնիկական մի ձև էր, որը գալիս էր նախորդ շրջանից և ըստ երևույթին բնորոշ էր այդ ժամանակաշրջանին, երբ խեցեղեն արտադրանքում նկատվում է զգալի առաջընթաց նախորդ դարաշրջանի հետ համեմատած:

Հասարակ խոհանոցային խեցեղենն աչքի է ընկնում մեծ մասամբ մրապատ կաթսաներով, կճուճներով, քրեղանների տարբեր ձևերով: Սակայն հանդիպում են նաև կարմրափայլ հիանալի սափորներ, որոնք պատրաստվել են մետաղական ձևերի ազդեցությամբ. գտնվել են դրոշմազարդ սափորների ռեկորդներ: Կան ճրագների, փոքր աղամանների տարբեր տեսակներ, մեծ կարասների ռեկորդներ և այլ անոթներ, որոնց ուսումնասիրությունը շատ հստակ երևան է բերում այդ շրջանի խեցեգործության մեջ տիրող հիմնական երևույթները: Զգալի քանակ են կազմում երկաթե աշխատանքային գործիքները, զենքերը, զարդերը և այլ իրերը:

Շերտի ճիշտ թվագրությունը կարևոր է XII-XIII դդ. ապակե անոթների ձևերի որոշման առումով: Այդ շրջանին բնորոշ են քիչ նեղացող հատակով և լայն բերանով բաժակները, անգույն, թափանցիկ, անզարդ ապակուց: Շատ են տարբեր ձևերի՝ հարթ, ոլորուն և տարբեր երանգների ապակե ապաբանջանների բեկորները: Այդ շերտում հատակագծային հետաքրքիր պատկեր են ստեղծում բացված շինությունները: Պեղսվայրի գրեթե կենտրոնական մասով անցնում է մի նեղ միջանցք, թերևս փողոց, որի երկու կողմերից դրված են սենյակներ (նկ. 12): Պատերն իրենց հիմքում ունեն ռազմաթիվ վերանորոգումների հետքեր: Օգտագործվել են քարեր՝ ռեբված տարրեր շինություններից, ինչպես նաև թծած աղյուս, գետաքար և այլն: Ըստ երևույթին պատերի վերին մասերը շարված են եղել հուճ աղյուսներով: Պատերի լայնքը շատ կանոնիկ է՝ 0,5-0,7 մ, որը տարածված չափ է այդ շրջանի շրջանի ընկերի տների շինարարության մեջ: Կա հատակների մի քանի մակարդակ, որոնց մի մասը արվել է թծած աղյուսով: Այդ հատակների հատվածները պահպանվել են տեղում: Անոթներում շատ են թոնիրները և օջախները: Սուտքեր գրեթե չկան, որը ըստ երևույթին կապվում է բնակելի տան ձևի հետ: Տներն ունեցել են հավանաբար հարթ տանիքներ: Հազարաշենը բացակայել է: Ամբողջ տարածքում չկա սյան և խարիսխի որևէ նմուշ: Ինչ վերաբերում է լուսավորելուն, թերևս վերևում եղել է երդիկ:

Պեղումների ժամանակ գտնվել են լուսամուտի ապակու սկավառակների բեկորներ, բայց այնքան քիչ, որ դրանով համապատասխան եզրակացության չի կարելի հանգել: Այդ շինությունների վերջին վերակառուցումների ժամանակ որմերի մեջ դրվել են գերեզմանաքարեր, որոնցից մեկի վրա կա հայերեն արձանագրություն:

Հարավային հատվածում շինությունների մի մասը թաղված է կավե խոշոր գանգվածների մեջ: Հավարանար, դա փուլ եկած պարսպի և աշտարակի կավակերտ մասերն են, որոնք ծածկել են պատհիրը և հատակները: Այստեղ գտնվել են մեծ քանակությամբ ձիու գանգի և ոսկորների մնացորդներ:

Պեղվող հատվածի ամենավերին հորիզոնը, որն անմիջապես բացվում է 0,2-0,3 մ խորությունից իր մեջ ներառում է խիստ վատ, ռեկորային պահպանված, շատ րարակ պատհիրով հյուղակների մնացորդներ, որոնք երբեմն շարված են եղել ստորին՝ XII-XIII դդ. քանդված կառույցների պատերի վրա: Շինության այդ հետքերը տարածվում են

նաև մեծ աշտարակե և պարսպապասսի վրա: պարզ է, որ Ջալալ էդ-դինի (1225թ.) և մոնղոլների (1236թ.) կողմից Դվենին հասցրած ահավոր հարվածներից հետո, քաղաքի և միջնաբերդի պարիսպը դադարել է իր դերը կատարելուց և նրա փլատակների վրա միջնաբերդում որոշ շինարարական աշխատանքներ են կատարվել: 1977թ. այստեղ բացվել են հորեր. գտնվել է մեծ անոթ՝ կարմրափայլ, չորս կանթով և փոքր ծորակով (աղ. XXIX, 3): Հետաքրքիր են ջնարակած անոթների որոշ նմուշներ, որոնք չեն հանդիպում նախորդ դարերում և երբևէ բնորոշ չեն եղել Դվրնի արտադրությանը: Ջնարակած այդ անոթները թասեր են, որոնց նկարները շատ հստակ արված են փորագիր զարդին համապատասխան (աղ. XLV, 1, 2): Նման խեցեղենը զգալի քանակությամբ հայտնի է Անիի XIII-XIV դդ. շերտերից: Միայն այդ տեխնիկայով պատրաստված անոթներ են գտնվել Սպիտակի ժայռափոր բնակավայրում և թվագրվում են նույն ժամանակաշրջանով: Ջնարակած այս անոթները լայն տարածում ունեն Անդրկովկասյան տարբեր հնավայրերում (*Мушавбулу.М.Н.*, 1979):

Հետմոնղոլական շերտը շատ թույլ արտահայտվել է նաև միջնաբերդի արևմտյան ստորին հատվածում բացվեղ արևոտարհեստավորական թաղամասում: Այստեղ շինությունները գրեթե բացակայում են: Նյութեր սակավ են հանդիպում, սակայն գտնվել է վրացական մի դրամ, որը թվագրվում է XIII դ. 40-ական թվականներով և պասկանում է Դավիթ Ուլու թագավորին:


Պարզվում է, որ քաղաքը մոնղոլական հարվածներից հետո մոտ երկու-երեք տասնամյակ շարունակել է դեռևս իր գոյությունը և աստիճանաբար ասսլարեզից դուրս է եկել XIII դ. 50-60-ական թվականներին:

Քաղաքի գոյության վերջին հարյուրամյակի մշակույթի ուսումնասիրությունը, ժողովրդական բնակելի տան ձևերի, արհեստագործական արտադրանքի քննության և այլ հարցերի ըմբռնման տեսակետից հույժ կաբևոր նշանակություն է ստանում Դվրնի միջնաբերդի արևմտյան ստորին լանջի պեղումները: Մոտ 1500 քառ. մետր մակերեսով բացվել է փողոցի մի հատված, բնակելի ու արտադրական շենքերի մնացորդներով: Պեղավայրի խորությունը տատանվում է 1,0-1,5 մ, որը կապված է տեղանքի փոփոխության հետ (նկ. 13):

XII-XIII դդ. միջնաբերդի այս հատվածը խիտ կառուցապատվել է: Թեք լանջը հնարավորություն է տվել օգտագործել տեղանքը և տները դասավորել դասավանդներով: Վերին տան բակը ստորինի համար ծառայել է որպես տանիք: Շենքերը շարված են եղել հիմքում կլոր գետաքարերով և տեղական կոպտատաշ թերթաքարերով: Վերին մասում ունեցել են եում աղյուսե շարվածք: Կառույցների վրա նկատվում են բազմաթիվ վերանորոգումների հետքեր և հատակների երկու-երեք մակարդակ: Ժամանակագրական տեսակետից վերականգնել այդ հորիզոնը՝ դժվար է: Վերջին հարյուրամյակում Դվենը բազմաթիվ անգամ ավերվել է պատերազմական զործողությունների հետևանքով և կիկին վերականգնվել: Այդ տարածքում բացվել են չորս մեծ համալիրներ. երեքը բնակելի տներ են, իսկ մեկը՝ խեցեգործի արհեստանոց՝ թրծման հնոցի մնացորդներով:

Փողոցի հատվածը լցված է դարբնոցային խաբամով: այստեղ շատ են մետաղական իրերի մնացորդները: Ակներևաբար մոտակայքում եղել են դարբնոցներ, որտեղ պատրաստվում էին տարբեր գործիքներ, գենքեր և առօրյա կիրառության այլ առարկաներ:

Պեղումների ժամանակ տարբեր նշանակության երկաթե իրեր շատ են գտնվել (դանակ, նետասլաք, մկրատ, պայտ և այլն):



Նկ. 13. Հատակագիծ ստորին բերդի արհեստավորական թաղամասի.
1973-1980 թթ. պեղումներ: XII-XIII դդ.: Միջնաբերդ:

Գտնված իրերի մեջ մեծ թիվ են կազմում կավե անոթները: Դվինի արհեստների մեջ կարևոր տեղ է զբաղեցրել խեցեգործությունը, յուրաքանչյուր ժամանակահատվածի

համար բնորոշ առանձնահատկություններով և պատրաստման հնարների ու անոթների ձևերի ընդհանուր առաջնություններով: Պեղավայրից գտնված խեցեղենը խիստ բնորոշ է XII-XIII դդ. արտադրությունը և նման՝ հարավային աշտարակի հատվածի նույն շերտում գտնված խեցեղենին: Այստեղ ևս մեծ թիվ են կազմում միագույն կանաչ ջնարակով անոթները, որոնք մասսայական արտադրության արգասիք են և արտադրվում են շուկայի պահանջները բավարարելու համար: Ձարդերը շատ կանոնավոր են՝ եռանկյունաձև ծայրերով վարդյակներ, որոնք հանդիպում են Դվրնի քաղաքային մասում բացված արհեստանոցի նյութերում (*Калантарян А.А.*, 1974, с. 280-290): Ձարդամուտիվների մեջ մեծ տարածում ունեն տարբեր վարդյակները, որոնք արվում էին բազմագույն ջնարակած անոթների վրա: Ե՛վ գույնով և՛ փորագրությամբ զարդերը շատ զուսպ են, չնայած ստորին հատվածներում երբեմն գտնվում են ցրված գունային նկարով անկանոն զարդերով անոթներ:

Թաղամասից հայտնի են զգալի քանակությամբ հախճապակե անոթներ (թասեր, ընկույններ և այլն): Դրանք պատած են մուգ երկնագույն և ընկույն կանաչ ջնարակով: Բազմանիստ այս անոթները բնորոշ են XII-XIII դդ. համար և ուղղակի զուգահեռներ ունեն բյուզանդական և պարսկական նյութերում¹²: Բազմանիստ անոթներից մեկի ամրոջ մակերեսը պատած է դիմակներով և վարդյակներով (*ժամկոջան Ա.Ա.*, 1981 ա, էջ 207): Հարկ է նշել, որ դիմակազարդ անոթները զանգվածարար գտնվել են հայկական միջավայրում: Նյութի առատությունը արհեստագործական երկու խոշոր կենտրոններում, եուշում է առաջ քաշել այն տեսակետը, որ այդ անոթները Անդրկովկասում հիմնականում արտադրվում էին Անիում և Դվրնում: Հիշյալ անոթների շատ սակավաթիվ գյուտերը անդրկովկասյան այլ հուշարձաններում, հնարավոր ներմուծման արդյունք են կամ տեղում պատրաստված հայ վարպետների կողմից, որոնք ավանդաբար սերնդե-սերունդ փոխանցել են իրենց հնարները: Նման երևույթ ընդհանրապես դիտվում է խեցեղեն արտադրանքի մեջ: Կասկածից վեր է, որ նույն տեսակետը կարող է տարածվել նաև դրոշմազարդ կարասների արտադրության վրա, քանի որ և՛ անոթների ձևերը և՛ դրոշմված պատկերները կապվում են նաև տվյալ ժողովրդի հավատալիքների հետ: Կարևորն այն է, որ կարասների վրա հանդիպող պատկերների մեծ մասը կապված է քրիստոնեական սիմվոլիկայի հետ և ոչ մի առնչություն չի կարող ունենալ մուսուլմանական գաղափարախոսության հետ (*Чубинов Г.*, 1916, с. 33-35): Դվրնի արհեստավորական թաղամասում շատ են գտնվել դրոշմազարդ կարասի թեկորներ՝ ապացույց XII-XIII դդ. կենցաղում դրանց լայն օգտագործման մասին:

Քանի որ խոսքը վերաբերվում է փոխազդեցություններին խեցեղենի արտադրության մեջ, այստեղ կարևոր է նշել միջնադարյան գունազարդ խեցեղենի որոշ գյուտերի մասին: Ստորին բերդում գտնվել են խոհանոցային խեցեղենի բեկորներ, որոնք իրենց վրա կրում են կարմիր և մուգ դարչնագույն ներկով արված զարդեր: Դվրնում նախորդ տարիներին գտնվել են նման զարդերով անոթների երկու օրինակ (մեկը կարաս է՝ հարդարված թռչնազարդերով): Նման տեխնիկական հնարով պատրաստված անոթներ Դվրնի

¹² Դրանք հայտնի են Ռաքքայից (Սիրիա) և թվագրվում են XIII դ. կեսով. տե՛ս Geza Fehérvan. *Islamic Pottery*. London, 1973, էջ 110, աղ. 59, N 141.142:

խեցեգործությանը բնորոշ չեն: Վաղ միջնադարում դրանք հանդիպում են դուպտական մշակույթում: Ասկայն հիշյալ դարերում այս սիպի խեցեղենը լայն տարածում ուներ Վրաստանում (ժինվալի, Ռուսթավե և այլն):

Շատ է խոհանոցային հասարակ խեցեղենը (քրեղաններ, սափորներ, մրապատ կճուճներ, կարսրափայլ անոթներ և այլն): Անժ քանակությամբ գտնվում են պոչուկով ճրագներ, կարասների բեկորներ, խփեր:

Եվ վերջապես շերտը ստույգ թվագրվում է XII-XIII դդ. եյակուզյան և վոացական դրամներով: Դրանցից ամենավաղը՝ Աթաբեկ Ելտկուզի և սուլթան Արսլան իբն Տուղրուլի ժամանակ կտրված դրամներն (1136-1172թթ.), վիացական ամենավաղ դրամը հատված է 420 քրոնիկոնին (1200թ.)՝ Թամար-Դավիթ մակագրությամբ:


Թաղամասը մեր կողմից անվանվել է առևտրաարհեստավորական, ելնելով հետևյալ նկատառումներից. ա) բացվել է խեցեգործական արհեստանոց թրծման հնոցով և այլ պարագաներով; բ) բոլոր շինություններում գտնվել են խտանված իրեր (ջնառակած խեցեղեն), թրծման գլաններ, եռոտանիներ, իսկ առաջին շինությունում՝ քաղցր պատրաստված սրածայր գործիքներ (աղ. LXI, 12), որով արվել են փորագիր զարդերը: Երեք համալիրներում կան ուղղանկյուն, ոչ խորը փոսեր, որոնք արհեստավորական անկյուններ են (աղ. XVI, 1): Պիղումներով պարզվել է, որ մեծ թոնիրները օգտագործվել են կավե առարկաներ թրծելու համար (աղ. X, 2, XV, 2): Այդպիսիք բացվել են առաջին, չորրորդ շինությունում, որոնց շրջակայքը լցված էր մոխրով: Խտանված իրերով և թրծման ժամանակ օգտագործված պարագաներով: Ըստ երևույթին տեղում կազմակերպված է եղել արտադրություն, որն անմիջապես սպառվել է արտադրողի կողմից: Դա ապացուցվում է նաև դրամների առատությամբ:

Դվինի կենտրոնական թաղամասը երկրաչարժից հետո ըստ երևույթին վերածվել էր ավերակների, որի մեջ մեծ տեղ են գրավում կաթողիկե, միանավ բազիլիկ եկեղեցու և այլ շինությունների փլատակները: Այնուհանդերձ այստեղ ևս կյանքը շարունակվել է հետագա դարերում, որովհետև նկատելի են կառուցապատման հետքեր (նկ. 32): Կաթողիկե եկեղեցու հարավարևմտյան մասով ձգվում է մոտ 3,0 մ հաստությամբ մի պարսպ, որի հիմքերը շարված են փուլ եկած եկեղեցու կոաշաղախ զանգվածներով (*Քալան-թարյան Ա.Ա.*, 1976, էջ 22):

XII-XIII դդ. շինությունների հատվածների մեջ նկատելի են հողեր, որոնց բերանները 0,7-1,0 մ խորությամբ շարվել են աղյուսներով: Նման հորերը, որոնք կենտրոնական թաղամասում արդեն հայտնի են մոտ մեկ տասնյակե չափ, զուտ արտադրական նշանակություն ունեն, միացված են եղել առվակներով: Վրան դրվել է կավե խողովակ: Պեղավայրում գտնվել են ջնառակած և հասարակ խեցեղենի բազմաթիվ բեկորներ: Ջգալի թիվ են կազմում սելջուկյան, եյակուզյան դրամները: Կան առանձին թոնիրներ և աղյուսներով շարված թոնրափեր: XI-XII դդ. թաղումներ են կատարվել կաթողիկե եկեղեցու շրջապատում: Այդ գերեզմանները պատրաստված են եկեղեցու սրբատաշ քարերով: X-XIII դդ. շերտը մասսայաբար ավերվել է ուշ թաղումների հետևանքով, որոնք շատ իփոտ են թաղամասում: Այս հանգամանքը հնարվորություն չի ընձեռում պատշաճ մակարդով քննության առնել վերոհիշյալ ժամանակաշրջանի մշակույթը:

Դվենի տաղածքը բնակեցված է եղել նաև ավելի ուշ ժամանակաշրջանում և այդ

շրջանում էլ կենտրոնական թաղամասը վերածվել է գերեզմանոցի: Թաղումները թվագրվում են XV-XVIII դդ. Գտնվել է XVII-XVIII դդ. թվագրվող չորս պարսկական դրամ:



Նկ. 32. Շինության հետքեր թոնիրով: Կենտրոնական թաղամաս, XII-XIII դդ.:

Թաղումների կատարվել են մեծ մասամբ թրծած աղյուսից կամ տեղական թերթաքարից պատրաստված գերեզմանափոսերում (այդ աղյուսները վերցված են քաղաքը ավերված շինությունից), որոնք ծածկված են բարակ մեծ սալերով (աղ. II, 2): Ցավոք, գանգերի մարդաբանական ուսումնասիրությունը չի կատարված. թաղման ծեսը քրիստոնեական է: Թաղումների միջից նյութեր չեն եայտնարերվել, եթե չհաշվենք մի քանի զարդեր, այդ թվում և ըրոնգե մեկ ապարանջան:

Այսպիսով Դվինի վերջին տարիների ուսումնասիրության արդյունքներով քաղաքի շերտագրությունը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Մ.թ.ա. IX-VIII դդ., վաղ երկաթի շրջան: Միջնաբերդում և վենտրոնական թաղամասում պաշտամունքային ընկալվայր մեխյաններով և թուխ փայլեցրած փորագիր խեցեղեն, ճարտարապետական մնացորդներ:

Մ.թ.ա. VII-III դդ., ընդհատում:

Մ.թ.ա. II- մ.թ. I դդ., անտիկ մշակույթի շրջան, բնակավայր, խեցեղեն նյութեր, արտադրական նշանակության առարկաներ, կառույցներ, ճարտարապետական մանրամասներ, կարասային թաղումներ:

II-III դդ., ընդհատում:

IV-VI դդ., կենտրոնական թաղամաս, պալատական կառույց, նյութական մշակույթի մնացորդներ, կոնունալ կառույցներ, մենորիալ կառույցները մնացորդներ և այլն. միջնաբերդի հարավային թուրք, մոնումենտալ մեծ շինություն:

572-618 թթ., կենտրոնական թաղամաս, կաթողիկոսական պալատի վերին շերտ, խեցեղեն, մետաղ և ճարտարապետական ռեկորներ, ապակու արհեստանոց:

VIII դ. կերջ -893 թ. երկոաշարժը: Կենտրոնական թաղամաս, կավակերտ շինություններ, ճարտարապետական մանրամասներ, նյութական մշակույթի մնացորդներ, կնքադրոշմներ, դրամներ: Միջնաբերդի հարավային աշտարակի մոտ րացված մոնումենտալ շինություն:

X-XI դդ., միջնաբերդ, հարավային աշտարակ, խեցեղեն, ճարտարապետական մնացորդներ:

XII-XIII դդ., միջնաբերդ, հարավային աշտարակ և արևմտյան ստորին ռերդ, ճարտարապետական մնացորդներ, նյութական մշակույթ, դրամներ: Կենտրոնական թաղամաս՝ շենքերի առածին հատվածներ, դրամներ, խեցեղեն:

XIII դ, 30-60-ական թվականներ, միջնաբերդ հարավային աշտարակ, ճարտարապետական մնացորդներ. արևմտյան ստորին ռերդ, ջնարակած խեցեղեն, դրամ:

XV-XVIII դդ., թաղումներ կենտրոնական թաղամասում, դրամներ, զարդեր:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր Ո Ր Դ

V-VII ԴԱՐԵՐԻ ՊԱԼԱՏԸ

Վերջին տասը տարիների ընթացքում Դվինի Սր. Գրիգոր կաթողիկե եկեղեցուց 25-30 մ հարավ-արևմուտք թափվում է պալատական շինություն, որի պեղումներն ամբողջացնելու համար դեռևս տևական հետազոտական աշխատանք է պահանջվում: Մինչև այժմ պալատից պեղվել է կենտրոնական սյունազարդ դահլիճը, մասամբ՝ հարավային, հյուսիսային և արևելյան կից սենյակները, իսկ արևմտյան մասում՝ զրադաշտական մեհյանի մնացորդները (Ոկ. 10, աղ. I-IV): Սյս պալատի պեղումները շատ կարևոր են հայկական վաղմիջնադարյան աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրության առումով (*Калантарян А.А.*, 1978):

Մինչև քննվող պալատի հայտնաբերումը Հայաստանում հայտնի էին մի քանի պալատական կառույցներ Դվինում (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1952, էջ 110-122, *Հարությունյան Վ.Ս.*, 1950, էջ 56-80), Ջվարթնոցում (*Սնացականյան Ս.Խ.*, 1971), Արուճում (*Հարությունյան Վ.Ս.*, 1953), Ավանում (*Ճ' Օհոֆրսո Մ.*, 1978):

Գրեթե բոլոր պալատական շինություններն ունեն միևնույն հատակագծային հորինվածքը և տարրերվում են ծավալատարածական լուծումներով: Դրանց հիմքում ընկած է կենտրոնական պուամազարդ դահլիճը 3-4 զույգ սյուններով: Դահլիճներին կից երկու, երրեմե՝ երեք կողմերից հարում են ընկալելի և տնտեսական սենյակները, որոնք եատակագծային ամբողջական պատկեր են ստեղծում:


Դվինի նորահայտ պալատը ի տարրերություն վաղմիջնադարյան նույնատիպ կառույցների թավականին լավ է պահպանվել: Դահլիճի պատերը տեղ-տեղ ունեն 1,0 մ թարծրություն: Հիանալի պահպանված ամուր կավաշեն հատակը իր հիմքում ունի մանր քարեր: Սյունների իւարիսխները պահպանվել են յուրաքանչյուր շարքում՝ երեքական (աղ. I): Դրանցից մեկը շրջվել է դահլիճի ավերման ժամանակ. փորձ է արվել այն կեսել կենտրոնից: Սյունազարդ դահլիճը կից սենյակների հետ կապված է չորս մուտքով՝ երկուսը պահպանվել են հյուսիսային պատի մեջ (լայնությունը՝ 1,3 մ), իսկ երկուսը՝ արևելյան և արևմտյան պատերի անկյուններում (լայնությունը՝ 0,9 մ): Բացի այդ, արևելյան պատի հարավային անկյունում նկատվում են VI դ. թարեփոխված և հատակը թարծրացրած սենյակներից մեկի մեջ թափվող մուտքի հետքեր:

Դահլիճը չունի շքամուտք, ինչպես դս պարզ նկատվում է Մայր տաճարից հյուսիս տեղադրված երկրորդ պալատի (VII դ. սկիզբ) արևմտյան մասում: Ըստ երևույթին պալատի գլխավոր մուտքը պետք է լիներ արևելյանը, դեռևս չպեղված հատվածում՝ տաճարի դիմաց: 1954 թ. պալատի արևելյան եատվածում թափվել է մի սենյակ չորս ոչ մեծ կարասներով, (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1982, էջ 31, Ոկ. 13), որոնք ծածկված էին քարե

սալերով: Յետաքրքիրն այն է, որ այդ սենյակի պատերը նույն ժամանակում, ինչ սյունազարդ դահլիճում: Այդ ամենը ցույց է տալիս, որ այդ սենյակը եղել է պալատի տնտեսական հարկաբաժիններից, որը կառուցվել է պալատի հետ մասին:

Պեղումների ժամանակ գտնվել են առանձին ճարտարապետական մանրամասներ, որոնք պատկերացուս են տալիս պալատի ներքին հարդարանքի և ծածկի մասին: Պալատի պատերը շարված են սպիտակ ավազաքարի վատ մշակված քարերով, ունեն կավե հիմք: Դահլիճի և սենյակների պատերը կավով հարթ սվաղված են: Պատերի մեջ կան երկրորդական օգտագործման տուֆե և սպիտակ ավազաքարի լայլ տաշված քարեր, որոնց վերցված են Դվինի տարածքի նախորդ ժամանակների շինությունների վրայից: Նկատելի են թաղի առանձին քարեր: Դժվար է բացատրել, թե ինչու պալատի կառուցման ժամանակ օգտագործել է շինարարական այդ տեխնիկան, եթե եաշվր առնենք, որ այդ ժամանակ կանգուն միջնաբերդում և քաղաքային մասերում աշխարհիկ և պաշտամունքային մոնումենտալ շինությունները շարված էին հիանալի տաշված տուֆով և սպիտակ ավազաքարով:

Սյունազարդ դահլիճի պատերը բավականին հաստ են (լայնությունը 1,5 մ), որն արված էր ծանր ծածկը պահելու համար: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ սյունազարդ դահլիճն ունեցել է հարթ ծածկ, միջսյունային քառակուսիների վենտրոնում բացված երկու մեծ երդիկներով: Չնայած սյունների միջև եղած հեռավորությունը բավական մեծ է (լայնությունը 8, 05, երկարությունը՝ 8, 40 մ), այնուամենայնիվ դահլիճն ունեցել է փայտի ծածկ: Այրված գերանները, որոնք գտնվել են մեծ մասամբ խարիսխների մոտ, ունեն 15-20 սմ տրամագիծ: Բոլոր ղեպքերում, դժվար է վերջնական համարել ծածկը հարթ լինելը: Այլ խնդիր է, թե ինչպիսին է եղել սյունների, գերանների և ծածկի կառուցվածքային փոխհարաբերության հարցը: Խոյակների և սյունների բացակայությունը հնարավորություն չի բնծեռում ավելի հստակ պակերացնել այդ կառուցվածքը:



Նկ. 30. V դ. Կաթողիկոսական պալատի փուլ եկած ծածկի կավե զանգվածներ եղեգի մնացորդներով:

Պալատի տանիքը ծածկված է եղել եղեգի ստվար շերտով (մոտ 20 սմ), որն հի վրա կրել է շաղախված կավե զանգված: Պեղումների ժամանակ բազմիցս գտնվել են այրված ծածկը բեկորներ, որոնց մեջ կան եղեգի մնացորդներ (Նկ. 30):

Տուֆե զանգվածեղ խարիսխների առկայությունը ենթադրել է տալիս, որ դրանց վրա կանգնեցվել են տուֆե սյուներ, չնայած տեղում բեկորներ չեն հայտնաբերվել (հավանաբար դրանք կրկնակր օգտագործման են ենթարկվել): Սակայն մեր ուշադրությունը զրավեց Դվինի հնագիտական եանգրվանում պահվող, կենտրոնական թաղամասում նախորդ տարիներին գտնված սյան մի բեկոր, որի տրամագիծը համապատասխանում

եր հիշյալ խարիսխների վերնասալերի տրամագծերին: Ակներևաբար այդ բեկորը պատկանել է պալատի սյուներին:

Պալատի թվագրության և վաղմիջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության առումով: առանձնակի նշանակություն են ձեռք բերում պահպանված խարիսխները և դրանց հարդարանքը: Պալատի այս խարիսխներն իրենց չափերով վաղմիջնադարյան հայտնի օրինակներից ամենախոշորն են (ներքնասալի չափերը՝ 1, 05-1,11 մ), վերնասալի բարձրությունը՝ մինչև 0,3 մ. տրամագիծը՝ 82-89 սմ. խարիսխի բարձրությունը՝ 0,7 մ): Անկյուններում խարիսխներն ունեն ակոսավոր եռանկյունի ելուստներ (աղ. V, 2): խարիսխների այս տիպը բնորոշ է v-vi դարերին, թեև VI դարի խարիսխները փոքր-ինչ տարբերվում են V դարի օրինակներից: Հետագա դարերում հայկական ճարտարապետական հուշարձաններում դրանք չեն հանդիպում, հանդես են գալիս նոր ծևեր ավելի բարդ պրոֆիլներով: վերանում են նման ելուստները:

Դվրնի տարածքում հիշյալ հարդարանքով խարիսխներ հիմնականում հայտնի են քաղաքային թաղամասերից և պասկանել են պալատական շինությունների: Գրեթե նույն չափերով նման խարիսխներ գտնվել են Ջվարթնոցում (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1959, էջ 189: *Մնացականյան Ս.Խ.*, 1971, էջ 242) V-VI դդ. բազիլիկ եկեղեցու պեղումների ժամանակ: Ենթադրվում է, որ դրանք պասկանել են հնագույն պալատական շինություններին, որոնց տեղում VII դարում կառուցվում է մի նոր պալատ Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի կողմից: Նույն տիպի խարիսխներ (3 հատ) հայտնի են Աշտարակի շրջանի Ագարակ գյուղի IV-V դարերի բազիլիկ եկեղեցու հյուսիսային կողմում, որը չի բացառում այնտեղ ևս պալատական կառույցի գոյությունը: Երկու նմանաիսիպ խարիսխներ գտնվել են Եղվարդի գերեզմանատանը, որոնք հավանաբար XII-XIII դդ. տերլափոխվել են ինչ-որ քանդված շինությունից և վերածվել են խաչքարի պատվանդանի:

Սյունազարդ դահլիճի հատուկ արևելյան մասում, վերջին զույգ խարիսխների ուղղությամբ, մոտ 15-20 սմ բարձր է: Այդ հարթակի կենտրոնից ղեպի դահլիճ է ուղղված մի քառանկյուն ելուստ: Ակներևաբար դա բեմն է, որտեղ ընդունելությունների կամ ժողովների ժամանակ բազմում էին բարձրաստիճան հոգևոր և աշխարհիկ անձինք: Բացաված չէ, որ V դարի պալատի հենց այս սյունազարդ դահլիճում էլ տեղի են ունեցել Դվենի 506, 554 թթ. եկեղեցական ժողովները: Վաղմիջնադարյան պալատներում բեմերը հայտնի են Ջվարթնոցի ներսեսաշեն պալատի արևմտյան թևում (*Մնացականյան Ս.Խ.*, 1971, էջ 241), սակայն դրանք ունեն հատակագծային և ճարտարապետական այլ լուծումներ: Ամենայն հավանականությամբ բեմ է եղել նաև Դվրնի կաթողիկե եկեղեցու հյուսիսային մասում VII դ. կառուցված պալատի դահլիճում: Սյստեղ նույնպես արևելյան կողմում, երկու խարիսխների ուղղությամբ, կա մի սալահատակ, որն առանձնանում է սյունազարդ դահլիճի ետակեց ուղիղ գծով:

Պալատն ունեցել է շքեղ հարդարանք: Գտնվել են սվաղի առանձին բեկորներ կարմիր և կապույտ ներկի եետքերով: Արևելյան սենյակներում կան ժեփի բեկորներ, որոնց վրա փորագրված են եղել պաշտամունքային տեսարաններով զարդապատկերներ. հանդիպում են նաև հունարեն տառեր (աղ. LXI, 13):

Սյունազարդ դահլիճի հարավային պատի շարունակության վրա, ղեպի արևմուտք նկատվում են զույգ որմնախարիսխներ, որոնք հավաստում են տեղում ինչ-որ թաղական շենքի գոյությունը: Արշավախմբի ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանը գտնում

է. որ պալատի արևմտյան թևը ժամանակագրական տեսակետից պալատի հետ չի առնչվում, այն առանձին կառույց է, որը սակայն կից է պալատին: Այս տեսակետը առավել հիմնավորվեց, երբ այդ հատվածում բացվեցին զրադաշտական մեխյանի մնացորդներ, որոնք թվագրվում են VI դարով:

Դվինում հայտնաբերված այս պալատը V դարի կառույց է: Այդ են ապացուցում նաև գտնված հնագիտական նյութերը և տեղանքի շերտագրական կտրվածքը: **Ցավոք**, պալատի կառուցման վերաբերյալ գրավոր աղբյուրներում ոչ մի հիշատակություն չի պահպանվել: Հաշվի առնելով պալատի դիրքը կենտրոնական թաղամասում, մենք հակված ենք այն համարելու կաթողիկոսարան: Այսպիսի շքեղ շինության կառուցումը անմիջապես եկեղեցու կից խոսում է այն մասին, որ այն կապված էր ինչ-որ նշանավոր իրադարձության հետ: Չի բացառվում, որ այն անմիջական կապ ունենա Գյուտ կաթողիկոսի օրոք հոգևոր կենտրոնը Վաղարշապատից Դվեն տեղափոխելու ռետ: Այդ փաստը ավելի քան համոզիչ է դառնում, երբ տեսնում ենք նման երևույթ նաև Ավսնում, Արամուսում, Ձվարթնոցում: Հոգևորի կենտրոնը Դվին տեղափոխելը ուսումնասիրողների մեծ մասի կողմից վերագրվում է 460-470-ական թվականներին (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1952, էջ 115: *Հարությունյան Վ.Ս.*, 1950, էջ 87): Այդ տարիներին էլ տեղի է ունեցել կաթողիկոսական պալատի կառուցումը:

VII դարի սկզբներին պալատն արդեն ավերված և ծածկված էր այդ ժամանակ վերակառուցվող կաթողիկե եկեղեցու շինարարական աղբի և հիդեհի հետևանքով առաջացած մոխրի ստվար շերտով:

Արդ, ե՞րբ կարող է կործանված լինել այդ շինությունը: Հայ և օտար պատմիչները հետաքրքիր տեղեկություններ են պահպանել VI դ. 60-70-ական թվականներին Հայաստանում տիրող պատմաքաղաքական վիճակի մասին, կապված Վարդան (կոտսեր) Մամիկոնյանի պատմաբանության հետ: Այդ առումով առավել արժեքավոր են վեսությունները կապված Դվինի հետ, որոնց համաձայն պարսիկները Դվինում սույրում են եկեղեցին, իսկ ապստամբ հայերը՝ զրադաշտական մեխյանը և այլ շինություններ: Սերբոսը գրում է. «... *զեկեղեցի Սրբոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արարեալ համբարանոցս պարսիկքն, հարին հուր և այրեցին վասն որոյ եղև նոցա խռովութիւն մեծ*» (*Սերբոս*, 1979, էջ 68):

Կիրակոս Գանձակեցին հաղորդում է ապստամբների կողմից բարձրաստիճան պարսիկ պաշտոնյայի պալատի հրդեհելու մասին (*Կիրակոս Գանձակեցի*, 1961, էջ 41): Այսպիսով, Դվինի V դարի պալատը հրդեհվել, ավերակ է դարձել 572 թվականին:

Շուրջ 40 տարի Դվինի այդ թաղամասը փլատակների մեջ էր և չէր վերականգնվում: Այդ շրջանից մեզ է հասել կաթողիկոսի տեղապահ Վրթանես Զերթողի և րյուզանդական Հայաստանի կառավարիչ Սորմենի մամակագրությունը, որտեղ վերջինս մեղադրում է Վրթանեսին այն բանում, որ նրա թուլտվությամբ ոմն քերթող (խոսքը հայտնի գործիչ Պետրոս Այունեցու մասին է) նստել է ավերված Դվինում և նոր կոոն է քարոզում (*Գիրք թղթոց*, 1901, էջ 90, 93):

Սերբոս պատմիչը հայտնում է, որ 652 թ. բյուզանդական Կոնստանդին կայսրը այցելելով Դվին, իջևանում է կաթողիկոսական պալատում (*Սերբոս*, 1979, էջ 167): Հետևաբար VII դարում արդեն կար կաթողիկոսարանի նոր շենք, որը կառուցվել էր ավերվածի փոխարեն:

Կաթողիկե եկեղեցու հյուսիսային մասում 1937-1939 թթ. ռացվել է կինտրոնական սյունազարդ դահլիճով մի մեծ կառույց (*Ղաֆաղարյան Կ.Գ.*, 1952, էջ 110-122: *Չարությունյան Վ.Ս.*, 1959, էջ 56-80): Հավանաբար դա Սեբեոսի կողմից հիշատակված «տուն կաթողիկոսի» է: Այս պալատը մասնագետների մի մասի կողմից թվագրվում է V դարով և կապվում է հոգևոր կենտրոն Դվինի տեխնոլոգիայի հարցի հետ (*Ղաֆաղարյան Կ.Գ.*, 1952, էջ 118: *Չարությունյան Վ.Ս.*, 1950, էջ 57-58, *Халпахчьян О.Х.*, 1971, с. 93, *Д'Онофресо М.*, 1978, с. 5): Իրականում պալատը կառուցվել է VII դարի սկզբներին և կապվում է Սմբատ Բագրատունի մարզպանի շինարարական գործունեության հետ: Ի՞նչ կովաններ ունենք մենք այդ մասին:

1. Պալատը կառուցվել է նույն վարպետների ձեռքով, որոնք մասնակից են եղել կաթողիկեի վերակառուցմանը VII դարի առաջին երկու տասնամյակներում: Դա ապացուցվում է պալատի արևմտյան շքամուտքի քարերի վրա պահպանված վարպետների նշաններով:
2. Պալատի խարիսխների և խոյակների ձևերը չեն հանդիպում ավելի վաղ կառույցներում: Ընդհակառակը, դրանք շատ նման են Ձվարթնոցի տաճարի փոքր սյուների խարիսխներին և Արուճի պալատական համալիրի խարիսխներին, խոյակներին: Այս հանգամանքը խոսում է Դվինի պալատի հնարավոր ազդեցությունների մասին հիշյալ հուշարձանների առանձին մանրամասների ճարտարապետական ձևավորման վրա:
3. 1973-1974 թթ. Դվինի VII դարի պալատի արևելյան հատվածում կատարված պեղումները ցույց են տալիս, որ այստեղ VI դարում եղել է ինչ-որ տնտեսական շինություն՝ կարասներով (աղ. VI, 2): Դրանցից մեկի վրա պահպանվել է «Գրիգոր» անունը:

Դվինի երկիրը պալատի VII դարի թվագրության օգտին են խոսում նաև միևնույն շինքարի օգուագործումը պալատի կառուցման և եկեղեցու վերակառուցման ընթացքում: Սպիտակ ավազաքարը, որն այդքան տարածված էր վաղ կառույցներում, VII դարում արդեն չի հանդիպում:

Պալատը VII դարով են թվագրում ճարտարապետներ Ն.Մ. Տոկարսկին (*Токарский Н.М.*, 1961, с. 61-66) և Ա.Խ.Մնացականյանը (*Մնացականյան Ա.Խ.*, 1972, էջ 213-232), Դվինի 1937-1939 թթ. արշավախմբի այետ Ա.Վ.Տեր-Ավետիսյանը ուղղակի նշում է, որ «Կաթողիկոսի տունը... մի քանի տվյալներով պատկանում է VII դարի առաջին կեսին» (*Тер-Аветисян С.В.*, 1939, с. 10):

Շատ կարևոր է պալատների տեղադրության հարցը: Հայտնի է, որ կաթողիկե եկեղեցու հյուսիսային մասում կառուցված VII դարի պալատը մոնումենտալ շինություն լինելով հանդերձ, իցկված է շինությունների միջև: Երկու եկեղեցիների (երկիրը՝ V դարի միանավ սրահն է) հետ համեմետած, նրա հատակագծում նկատելի է որոշակի շեղում: Այս հանգամանքին առաջին անգամ ուշադրություն է րևեռել Ա.Մնացականյանը (*Մնացականյան Ա.Խ.*, 1972, էջ 222-225), որը մանրակիկիտ քննարկիլ է այդ հարցը:

Տեղանքի մանրագնին քննությունը ցույց է տալիս, որ VII դարում այս հատվածը միակ ազատ տարածքն էր իսկ կառուցապատված կինտրոնական թաղամասում, ռացառությամբ V դարի պալատի մասի: Դժվար է ասել, թե ինչու շինարարները և պատվի-

րատուները նոր պալատ կառուցելիս հրաժարվեցին ավերված հին պալատի վայրից: Ենթադրում ենք, որ VI դարի 60-ական թվականներին, ազգությամբ պարսիկ Սուրեն մարզպանի օրոք, V դ. պալատը խլվել է կաթողիկոսարանից և այնտեղ կառուցվել է զրադաշտական մեհյան, որը 572 թ. ապստամբության պատճառներից մեկն էր և որը ավերվում է ապստամբների կողմից¹³: Այս իմաստով մեծ արժեք է ձեռք բերում Արսեն Սափարեցու վեպալությունը. «Այս ժամանակից պարսից մարզպանները գրավեցին Հայքը (Սոմխեթը) և քրիստոնեական կարգն արհամարվեց ու եկեղեցական վարչապետությունը վերացավ. և ազատների հռչանությունը տապալվեց պարսից մարզպաններից... և եպիսկոպոսարանները դարձան կռատներ...: Այս (պատճառ)ով այս մեծ անպատվությունը չհանդուրժեց Վարդան Մամիկոնյանը (Մամկունենը), որը Չոքխ էր կիչվում, և նրա ազգական ուրիշ նախարարները, որոնց անպատվել էին, սպանեցին ոմն պարսիկ Սուրեն մարզպանին՝ նրա տունը կիակի ենթարկելով և ընտանիքով փախուստի դիմեցին դեպի Կոստանդնուպոլիս» (Սրսեն Սափարեցի, 1934, էջ 41-42):

Հետագայում, երբ խնդիր է դրվում նոր պալատի կառուցման մասին, բացառվում է նրա շինարարությունը պղծված վայրում: Վերջին տարիների պեղումները ավելի քան հաստատեցին մեր այս ենթադրությունը:

Պալատի սյունազարդ դահլիճի արևմտյան պատին կրց շրնության հատակը բարձր է մոտ 0,7 մ: Այն նույնպես կավով է ծեփած, սակայն տարբերվում է պալատի սենյակների և, հասկապես, սյունազարդ դահլիճի հատակներից: Դահլիճից 5,0 մ արևմուտք բացվել է տուֆե երեք մեծ քարերից պատրաստված մի քառակուսի հարթակ (1,5x 1,5x0,3 մ), որը ծածկված էր մոխրի ստվար շերտով: Քարերի արտաքին մակերեսները կոակրց ճաքճքված են: Հարթակի կողքին դրված էր մոխրով լի մեծ կարաս: Հարթակի կենտրոնում առկա է քառակուսի գոգավորություն (աղ. V, 1):

Շինության ներսում բացվել է մի խարիսխ¹⁴, որն իր ձևով քիչ է տարբերվում պունազարդ դահլիճի խարիսխներից: Խարիսխից հարավ՝ որոշակի հեռավորության վրա, դրված են երեք սալեր: Պետք է ենթադրել, որ շինությունը եղել է սյունազարդ, մյուս խարիսխները տեղահանված են, իսկ մի մասը թերևս կբացվո, որովհետև շարունակվում են այդ հատվածի պեղումները: Նյութերի և ճարտարապետական մանրամասների քննությունը ցույց է տալիս, որ բացվող շինությունը եղել է զրադաշտական մեհյան, իսկ հարթակը՝ ատրուշան: Վերջինիս կենտրոնի քառակուսի գոգավորությունը հուշում է, որ այստեղ կանգնեցվել է քառակող սյուն, որի վրա մետաղական հատուկ անոթի մեջ վառվել է

¹³ Ըստ երևույթին այդ պալատը տրվում է պարսից հարկահաններին, այսպես կոչված՝ համարակարին, որն ըստ «Սասանյան դատաստանագրքի» (Периханян А.Г., 1973), այդ ժամանակ համարվում էր րարձր պաշտոն պետական եկամտների և ծախսերի գծով: Կիրակոս Փանձակեցին նշում է, որ ապստամբության ժամանակ «...յոստանին Հայոց նշան սքանչելի եղև, զի հուր ըրորոքեալ այրեր զապարանսն համակարին պարսկի, որ վերակացու էր աշխարհիս» (Փանձակեցի, էջ 14):

Այս ամենով շատ հետաքրքիր է Սեբեոսի վկայությունը, որ «գեկեղեցի սրոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, ինն արարեալ համարաանոցս Պարսիկքն» (Սեբեոս, 1979, էջ 68): Պարզ է, որ համարակարը եկամտների պանթանման «համբարանոցները» պետք է ունենար իր նստոցին մոտ:

¹⁴ 1985 թ. IX դարի շինությունների պեղման ժամանակ պատի մեջ գտնվել է մեհյանի խարիսխներից մեկը երկրորդական օգտագործմամբ:

սրրազան կրսւլը: Այսպիսով, ատրուշանն ունեցել է այն հիմնական րադադրամասերը, որոնք հատուկ են եղել սասանյան նմանատիպ կառուցվածքներին՝ ստորին հարթակ, պուլն և կրակարան: Սասանյան դրամների հակառակ երեսներին պատկերված ատրուշաններն իրենց եռիմվածքով լինելով նույնը, տարրեր դարաշրջաններում որոշակիորեն տարրերվում են միմյանցից: Այս եանգամանքը ուշադրության է առել Կ.Վ. Տրևերը, դրամների վիրարեդյալ իր հոդվածներից մեկում (*Тревел К.В., 1938, с. 274*): Դվինում րացված ատրուշանը շատ ընդեանուր գծերով է մոտենում դրամների վիա պատկերված ատրուշանների ձևերին: Դա կարող էր ըրանել նրանից, որ դրամի փոքր մակերեսը հնարավիրութուն չի ընծեում պատկանել մասշտարները և առկա է որոշակի անհամամասնութուն:

Դվինի գրադաշտական մեիւանն ընդհանուր աղերսներ ունի սասանյան նմանատիպ կառույցների հետ, սակայն իր եաաակագծով տարրերվում է սասանյան դասական տաճարներից (*Schippman K., 1971*): Չարկ է նկատել, որ այստեղ հատուկ չի կառուցվել կրսակապաշտական տաճար, այլ պալատական եարկարաժիմներից մեկը հարմարեցվել է այդ նպատակին: Սասանյան մեծ և վոքր տաճարները կառուցվում էին հիմնականում ավանդարար միասնական հատակագծերով: Այդ տաճարների արտաքին և ներքին հարդարանքը շատ զուսպ էր, ոչ շքեղ: Տաճարի հիմնական շինութունը գմբեաւոր դահլիճն էր: Խորը որմնախորշում գտնվում էր ատրուշանը: Դահլիճն արտաքին աշխարհից անջատված էր հաստ պատերով: Գմբեթը հենվում էր չորս սյուների վիա (*Дорошенко Е.А., 1982, с. 32*): Դվինի մեիւանն իր եատակագծով մերծենում է տաճարների նման ձևերին զուտ ֆունկցիոնալ առումով: Սակայն մեիւանն այնպես է ավերված, որ դժվար է ստույգ ներկայացնել նրա հատակագծային պատկերը:

Սասանյանների ժամանակ գրադաշտականութունը պետական կրոն էր: Սասանյան գրադաշտականության ընորոշ կրղմերից էր նրա կրոնական անհանդուրժողականութունը այլադավանների, հասկապես՝ քրիստոնյաների նկատմամբ: Այդ քաղաքականութունը առումնապես հետևողականորեն էր կրրաովում Չայաստանում. այն քաղաքական և սոցիալական խորը հիմքերը ուներ: Չայերի պայքարը սասանյանների կրոնական անեանդուժողականության դեմ արվում էր քաղաքական ինքնուրույնության և ազգսպահպանության քողի տակ, քանի որ դավանափոխության գարաւարը սասանյանների կողմից առաջ էր քաշվում հայերի ծուլման նպատակով:

Դվինը, լինելով երկրի վարչական կենտրոնը, իր վիա էր կրում պայքարի ողջ ծանրութունը: Դվինում գրադաշտական մեիւան կառուցելու մասին հիշատակութունները ժամանակագրական տեսակետից րաժանվում են երվու խմբի: Պատմիչների մի մասը (*Չովհաննես Դրասխանակերտցի, 1912, էջ 59, Թոմվա Արծրունի, 1917, էջ 136-138: Վարդան Բարձրարերղցի, 1861, էջ 65*) մեզ անհայտ աղբյուրից վկայութուններ են բերում V դ. կառուցված մեիւանների մասին: Այդ ամրողջ պատմութունը պտտվում է անվանի նախարարներ Դվինցի Վնդոյի և Շավասպ Սրծրունու շուրջը: Ուսումնասիրողների մյուս մասը այս դեպքերը դիտում են որպես հայերի նախնիների հեթանոսական կրոնը վերականգնելու փաստ և դրան են վիրագրում Դվինի կաթողիկե եկեղեցու եեթանոսական ծագումը (*Ղաֆադարյան Կ.Գ., 1952, էջ 94-95, Թորամանյան Թ., 1942, էջ 214*):

Սակայն պատմիչների այդ վկայութունները երբեմն ժամանակավիեպ են, գործող անծերի եակասական ներկայացուցությամբ, որոնք մտածելու տեղիք են տալիս: Ըստ

երևույթին այդ դեպքերի նկարագրությունը աղավաղված, բանավոր հասել է ուշ շրջանի պատմիչներին և իրենց մեջ պարունակել են 560-570-ական թվականների դեպքերը: Մյուս կողմից թվում է, որ Դվինում, ընդհանրապես՝ Հայաստանում, վաղ միջնադարում մեհյանների կառուցումը աղերսվում է սասանյանների վարած քաղաքականության հետ և ոչ մի կապ չունի նախնյաց պաշտամունքի հետ: Թովմա Արծրունին Շավասպ Արծրունու մասին ուղղակի գրում է, որ նա «*յանձն առեալ ինքնական մուրորոթյամբ զօրէնս մազդեզանց մոխրաշերտ յամառութեանգ*» (Թովմա Արծրունի, 1917, էջ 135):

Աղբյուրների մյուս խումբը (Սերեոս, 1979, էջ 67: Միքայել Ասորի, 1871, էջ 260, 264: Հովհան Եփեսացի, 1976, էջ 388-390), որոնք առավել հավաստի են, փաստարկում են Դվրնում մեհյան կառուցելը Սուրեն մարզպանի օրոք (564-572 թթ.): VI դ. պալատական մի հարկաբաժնի վերածումը մեհյանի, որ ապացուցվում է նաև շերտագրական տվյալներով, ենթադրել է տալիս պալատը ըարծր պաշտոնյայի նստոց դարձնելու մասին: Դա կարող էր տեղի ունենալ միայն Սուրեն մարզպանի կրոնական և քաղաքական անհանդուրժողական քաղաքականության տարիներին:

Դվինի V դարի պալատը վաղմիջնադարյան հայկական աշխարհիկ ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից է: Դվրնի և այլ հուշարձանների պալատական կառույցների ճարտարապետական քննությունը ցույց է տալիս, որ դրանք վաղ միջնադարում ամենատարածված ճարտարապետական հորինվածքներն էին: Անշուշտ, V դարի Դվինի և Ջվարթնոցի պալատները իրենց դրոշմն են դրել VII դարի պալատական շինությունների վրա (Դվին, Արուծ), որն արտահայտվում էր հատակագծային հորինվածքում և ճարտարապետական առանձին մանրամասներում:

Հայկական վաղմիջնադարյան պալատական հորինվածքների ճարտարապետական ձևերի ծագման, դրանց ակունքների վերաբերյալ տարբեր կարծիքներ են հայտնվել: Դրանց մեջ ամենակարևորն այն է, որ ընդհանուր էլ հիմք են ընդունում տեղական ավանդակներ:

Ա. Անացականյանը գտնում է, որ ժողովրդական ճարտարապետության մեջ հայտնի ձևերի հիման վրա վաղմիջնադարյան հայկական ճարտարապետության մեջ մշակվում է աշխարհիկ պալատական կառուցվածքների մի ուշագրավ հորինվածք, որն իր որոշակի դրսևորումն է գտնում ամբողջ միջնադարի ընթացքում: Նա միաժամանակ ընդունում է, որ պալատների նման հորինվածքները իրենց ազդեցությունն են կրել իրանական՝ հասուկապես սասանյան նմանատիպ կառույցներից (Մնացականյան Ս.Խ., 1971, էջ 246-248): Նույն տեսակետը քերտորեն պաշտպանում է Դ՝ Օնոֆրիոն (Վ՝ Օնոֆրիոն (Վ՝ Օնոֆրիոն *М.*, 1978, էջ 16-20): Ա. Անացականյան իրանական և հայկական պալատական կառուցվածքների հորինվածքային ձևերի ընդհանրությունների ակունքները որոնում է հինարևելյան և ուրարտական ժամանակներում (Մնացականյան Ս.Խ., 1971, էջ 247): Կորյուն Ղաֆադարյանը ընդհանուր աղերսներ է տեսնում մի կողմից նման կառույցների և մյուս կողմից՝ ուրարտական պալատական շինությունների հատակագծային հորինվածքների միջև (Ղաֆադարյան Կ.Կ., 1984, էջ 80, 130): Վերջինս ուներ իր հիմքերը, քանի որ վաղմիջնադարյան հայկական պալատները իրականում սերտորեն կապվում են ուրարտական նմանատիպ շինությունների հետ (Հասանլու, Արզիշտիխիմիլի), (Dyson R.H., 1972, նկ. 9, *Мартуросян А.А.*, 1974, р.с. 30):

Մեզ թվում է, որ վաղմիջնադարյան աշխարհիկ պալատական ճարտարապետության

ծնավորման ժամանակ օգտագործել նաև ժողովրդական ճարտարապետության լավագույն ավանդույթները, այն ամենը, ինչ գալիս էր վաղնջական ժամանակներից. օգտագործելով նաև հարևան ժողովուրդների լավագույն նվաճումները: Այս առումով բացառված չէ, որ Դվինի V դարի սլավաթի վիա իր ազդեցությունը թողած լիներ նաև սասանյան և ասորական պալատական ճարտարապետությունը (Յաթրա, Սերվոստան, Դոմոգուս, Ֆիրուզաբադ), (*Strzygowski J.*, 1918, s. 267; *Якобсон А.А.*, 1950, с. 49, 51, *Мнацаканян С.Х.*, 1971 с. 247 և ուրիշներ):

Այսպիսով Դվինի պալատը կառուցվել է 470-ական թվականներին Գյուտ կաթողիկոսի օրոք, երբ Դվին է տեղափոխվում հոգևոր կենտրոնը: Վերջինս բազմիցս վեայել են պատմիչները և ընդունված է հայագետ-պատմաբանների կողմից: Պալատի կառուցման ժամանակաշրջանը ճշտվում է շերտագրական տվյալներով և հնագիտական նյութերով: Այն Դվինի կաթողիկոսարանի առաջին շենքն է:

560-ական թվականներին, Սուրեն մարզպանի օրոք երկոմուն ստեղծված քաղաքական և սոցիալական անբարենպաստ ժամանակաշրջանում պալատը իլվում է կաթողիկոսից և այն վերածվում է պարսիկ բարձրաստիճան պաշտոնյայի նստոցի: Այնտեղ կառուցվում է զրադաշտական մեհյան:

572 թ. ապստամբության ժամանակ պալատական շինությունը մեհյանով իրդեհվում և ավերվում է ապստամբների կողմից և այլևս չի վերականգնվում:

Դվինի կաթողիկե եկեղեցու հյուսիսային կողմում տեղադրված պալատը, ոչ թե կառուցվել է V դարում, այլ՝ VII դարի շինաընթացական գործունեության արդյունք է, ավարտվել է եկեղեցու վերակառուցման հետ մեկտեղ: Այն Դվինի կաթողիկոսարանի երկրորդ կառույցն է:

Գ Լ ՈՒ Խ Չ Ո Ր Ր Ո Ր Դ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Դվինը արհեստագործական խոշոր կենտրոն էր: Այստեղ մեծ զարգացում էին ապրում կավագործությունը, ապակեգործությունը, մետաղագործությունը և այլ արհեստները: Այդ են հավաստում քաղաքի ռազմամյա պեղումների ժամանակ գտնված նյութերը և արտադրական կառույցների հետքերը, աշխատանքային գործիքները, իստանը: Այս ամենը լրացվում են Դվինի արհեստային արտադրանքի գնահատմանը վերաբերող հայ և օտար պատմիչների թողած ռազմաթիվ վկայություններով:

1973-1980 թթ. սպեղումների ժամանակ ռացվիլ են մի շարք արհեստանոցներ, որոնք նոր լույս են սփռում միջնադարյան Հայաստանի արհեստների զարգացման հարցերին և մեծ նշանակություն են ձեռք բերում սոցիալ-տնտեսական իրողությունների ռացահայտման համար:

Ապակեգործական արհեստանոց. Հայկական միջնադարյան ապակեգործական արհեստը զարգանում էր անսիկ դարաշրջանի լավագույն ավանդույթներով: Դեռևս IV դարից մեզ է հասել վկայություն Հոփսիմյան կույսերի կողմից Վաղարշապատում ապակե ուլունքների տրտադրության մասին (*Ազաթանգեղոս*, 1914, էջ 150): Պեղումների առաջին տարիներին քննարկվող նյութի սակավությունից ելնելով որոշ եեղինակներ (*Шелковников Б.А.*, 1952; *Ղաֆադարյան Կ.Գ.*, 1975) կասկածի տակ են առել վստղմիջնադարյան ապակու արտադրությունը այնպիսի խոշոր կենտրոններից մեկում, ինչպիսին Դվինն էր: Վերջին տարիներին Հացավան, Դվին, Այգեվան և այլ հնավայրերում հայտնարիղված նյութերը շերտագրական ստույգ տվյալներով անառարկելիորեն հաստատում են տարատեսակ ապակե անոթների արտադրության փաստը Հայաստանում V-VIII դդ. (*Քալանթարյան Ա.Ա.*, 1980): Ընդհանրասպես Անդրկովկասում վաղմիջնադարյան տեղական հումքի վիա տպակու արտադրությունը հասել էր ռավական ռարծր մակարդակի: Այդ են վկայում Վրաստանի (*Մրելուձե Ի.Ի.*, 1967, *Կխաթարաշվիլի Մ.Ի.*, 1969, 1978) և Աղըրեջանի (*Կրպեթ Ա.Ե.*, 1966) ժամանակամերծ հուշարծաններից հայտնարերված ռազմաքանակ նյութերը (պատրաստի տրտադրանք, իստան, իարամ, չօգտագործված հումք):

Հայաստանում պեղվող և ոչ մի ռնակավայրում մինչև վիրքերս չէր ռացվիլ ապակեգործական արհեստանոց, որն ավկլի կոնկրետ պատասիյան տար տեղական ապակու առանձնահատկությունների, տրտադրանքի ռնորոշ կողմերի, հնոցների կառուցվածքի և այլ հարցերին: Ճիշտ է, Դվինի պեղումներից, տարրեր տարիներին գտնվիլ են խոտանի, մշակվող հումքի առանձին ռեկորներ, սակայն դրանք կոել են սոսկ ղիավսծային ռնույթ:

1973-74թ. Դվինի կենտրոնական թաղամասում V-VIդդ. կաթողիկոսական պալատի սյունագարդ դահլիճը ռացելու ժամանակ, եարավային կենարոնական խարսխի մոտ,

եատակի վրա ի հայտ են եկել թրժած աղյուսից պատերի հետքեր, որոնք ժամանակին ուժեղ կրակի մեջ են եղել և իրենց շրջապատում ունեին այրված փայտի, մոխրի մեծ կուտակումներ: Նույն տեղում գտնվեցին մեծ քանակությամբ ապակե անոթների խտտան, ապակե հարթ զանգվածների բեկորներ, վանակատի տծև կտորներ, լուսամուտի ապակիներ, սակավ՝ պատրաստի արտադրանք և այլ նյութեր, որոնք խոսում են ապակու արհեստանոցի և արտադրության առկայության մասին: Լկներևաբար այս հատվածում տեղադրված են եղել ապակու ծուլման հնոցներ. պահպանվել են միայն հիմնապատերի առանձին մասեր (աղ. XXVI-XXVII):

Մեզ եամար առաջին հերթին մեծ հետաքրքրություն են ներկայացնում վառարանների կառուցվածքի հարցերը: Ցավոք, տեղում շատ քիչ բան է պահպանվել, որը և հնարավորություն չի ընձեռում ներկայացնել հնոցների ձևերը: Բացված աղյուսե հիմնապատերը ցույց են տալիս, որ այստեղ եղել են երկու ուղղանկյունաձև երկարավուն օջախներ, որոնք դրված են եղել մեկը մյուսի հետևից: Առկա աղյուսների քանակությունը (չափերն են 23,5x23,5x4,5 սմ) թույլ է տալիս մոտավորապես վերականգնել այդ օջախների պատերը՝ երկարությունը մոտ 2,4-2,5 մ, լայնությունը 0,7 մ: Օջախների ներկա պահպանվածության պայմաններում դժվար է պատասխանել այն եարցին, թե դրանք ունեցել են արդյոք երկրորդ հարկ: Եթե հնոցները կրկնահարկ են եղել, ապա րացված պատերի մնացորդները վերաբերում են կրակարանին: Հնարավոր է և ավելի հավանական, որ հնոցը եղել է մեկ հարկանի, այսինքն՝ օջախատիպ, ունեցել է հատուկ հարմարանքներ հալոցները դսսավորելու համար: Պեղումների ժամանակ գտնվել են հալոցների բեկորներ: Դրանք բավականին հաստ պատերով կավե քրեղւսնատիսլ անոթներ են: Հալոցներից մեկը պատրաստված է սպիտակավուն կավից, սկներևաբար՝ կաոլինից: Հալոցների հատակներին բավականին հաստ շերտով պահպանվել է երբեմն երկշերտ ապակու զանգված: Բացի դրանից կան ապակու առանձին զանգվածներ, որոնց արտաքին տեսքը և գոգսվորությունը ցույց է տալիս, որ դրանք հալոցների մեջ են եղել և սառելուց հետո սյոկվել են:

Ապակու ծուլման հնոցի այս տիպը շատ նախնական է և պարզ: Դվինի այս արհեստանոցը և նրա արտադրական մասը, ըստ երևույթին, հիմնադրվել են ժամանակավոր և օգտագործվել են որոշակի ժամանակաշրջանում:

Հնավայրի շերտագրական դիտարկումներն ակնհայտորեն (*Քալանթարյան Ա.Ա.*, 1975) թույլ են տալիս համոզվելու այն բանում, որ VII դ. առաջին երկու տասնամյակներին, երբ Սմբատ Բագրատունի մարզպանի անմիջական նախաձեռնությամբ վերականգնվում է Դվենի կաթողիկեն, իսկ նրանից հյուսիս կառուցվում է նոր կաթողիկրսարանը, վեբջիններիս շատ մոտիկ հիմնադրվում է ապակու արհեստանոց՝ հատուկ պատվերով եկեղեցական սպասքի, լուսավորության միջոցների, շենքերի արտաքին ու ներքին հարդարանքի առարկաներ պատրաստելու համար:

Արհեստանոցից գտնված ապակու մի փոքր խումբ (11 նմուշ) ենթարկված է քիմիական անալիզի: Ինչ իոսք, նյութի սակավության պայմաններում դժվար է մեծ հետևություններ անել. սակայն բերված արդյունքներով կարելի է եանգել որոշ եզրակացությունների: Ինչպես երևում է աղյուսակում¹⁵ բերված տվյալներից Դվենի արհեստանոցի

¹⁵ Քիմիական անալիզները կատարել է Ա.Յ. Ավլարովան:

ԴՊԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ VII Դ. ՍԿԶԲԻ ԱՐՉԵՏԱՄԱՆՈՑԻ ԱՊԱԿՈՒ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆԱԼԻԶՆԵՐ

N°	Նմուշների անվանումը	SiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	TiO ₂	CaO	MgO	MnO	SO ₃	Na ₂ O	K ₂ O	Li ₂ O	PbO	գումարը %
1.	Վանակատ	75,22	13,76	1,01	0,14	1,11	-	0,14	0,82	4,01	4,11	-	-	100,4
2.	Մուգ գույնի ապակու տնն. գանգված	62,85	3,46	1,09	0,17	7,30	4,45	0,17	1,18	16,31	2,56	-	-	99,6
3.	Նույնը կանաչ գույնի	63,00	3,89	1,11	0,15	7,14	4,61	0,14	1,28	16,14	2,72	-	-	100,18
4.	խաղաղի գանգված	63,95	3,71	1,03	0,11	7,30	4,45	0,16	0,45	16,22	2,48	0,20	-	99,86
5.	Մուգ գույնի հարթ ապակի	62,62	3,98	1,03	0,09	7,80	4,65	0,13	0,46	16,80	2,28	0,28	-	99,8
6.	Նույնը կանաչ	63,20	3,40	1,25	0,09	6,90	6,03	0,12	0,51	14,63	4,25	0,20	-	100,4
7.	Զալամանի միջի երկշերտ ապակի, վերին մասը՝ կապույտ գույնի	71,60	1,89	0,53	0,15	5,83	0,88	0,60	0,48	16,0	1,16	0,27	-	- 99,6
8.	Նույնը, տակի մասը կանաչ	65,25	4,16	1,32	0,16	7,05	4,0	0,49	0,44	15,18	2,12	0,22	-	100,4
9.	Լուսամուտի դարչնագույն ապակի	62,48	3,67	1,03	0,15	7,60	4,65	0,15	0,54	17,51	2,12	0,26	-	100,16
10.	խճանկարի հատիկներ կանաչ գույնի	60,72	4,06	0,71	0,08	7,20	0,64	0,30	0,55	14,0	1,0	0,22	9,00	98,26
11.	Նույնը, նրկնագույն	66,77	3,93	0,63	0,11	8,23	0,65	0,35	0,62	15,33	1,13	0,20	-	97,75
12.	Նույնը թույլ կանաչ գույնի	67,62	2,65	1,08	0,12	7,41	0,88	1,35	0,71	17,20	0,75	0,20	-	100,39

գրեթե բոլոր մոլիբդենի համապատասխանում են $\text{Na}_2\text{O}-\text{CaO}-\text{MgO}-\text{Al}_2\text{O}_3-\text{SiO}_2$ ապակիների խմբին: №№ 2-6, 8-9 մոլիբդենի բաղադրությունը իրարից գրեթե չի տարբերվում: Իրենց բաղադրությամբ այս ապակիները մոտենում են վրացական և ադրբեջանական ժամանակամերձ նյութերին, որը խոսում է բաղադրամասերի մեջ եղած փոքր տարբերությունների մասին: Ինչպես ցույց են տալիս լուսամուտի ապակու, ապակեծածկ ալյուսների, հալոցների մեջ պահպանված մնացորդների և ապակե թափոնի քիմիական անալիզները, դրանք ունեն միևնույն բաղադրությունը: Տոկոսային հարաբերությամբ չնչին տատանումներ են տալիս և պատրաստված են միևնույն տեղում: Այս կարևոր փաստը ինքնին խոսում է արհեստանոցի ռեալ գոյության և նրա արտադրանքի տեսականու մասին:

Բերված բաղադրություններում առանձնանում են խճանկարային հատիկները, որոնք տարբերվում են արհեստանոցի շրջապատից գտնված ապակիների և խտտանի բաղադրությունից: Այստեղ SiO_2 , Fe_2O_3 , MgO , K_2O , տոկոսային հարաբերությունը տատանումներ է տալիս: Նմուշներից մեկում հայտնաբերվել է Pb -ի 9 տոկոս, որը բացատրվում է հիմնային օքսիդների համեմատաբար ցածր պարունակությամբ և հավանաբար կապալի օքսիդի այսպիսի քանակությունը տրված է ապակու հալելը բյուրացնելու համար: Al_2O_3 -ի պարունակությունը ապակու մեջ արդեն վկայում է, որ հումքի մեջ որպես լրացուցիչ տարր օգտագործվել է վանակատը: Ապակու բեկորների և խտտանի մեջ կան սպիտակ քափ, որոնք հետևանք են վանակատի տաքացման: Ակներևաբար բա տեխնոլոգիական միջոց էր վանակատը եեշտ մանրացնելու համար:

Անալիզի ենթարկված ապակիների խմբում $\text{CaO}:\text{MgO}$ հարաբերությունը շատ մոտ է դոլոմիտների հիշյալ տարրերի պարունակությանը, որը վեայում է նաև դոլոմիտների օգտագործման մասին վաղմիջնադարյան ապակեգործության մեջ: Հայտնի է, որ Դվին քաղաքից ոչ հեռու, ներկայիս Արարատի շրջանում հայտնաբերվել են դոլոմիտի հսկայական պաշարներ: Անեավանական չէ, որ միջին դարերում ապակեգործներին հայտնի է եղել եումքի այդ տեսակը:

Դվինի ապակու բաղադրության մեջ երկաթի համեմատաբար բարձր պարունակությունը նույնպես պայմանավորված է տեղական հումքի օգտագործմամբ:

Արհեստանոցում գտնված ապակե անոթների խտտանը և անոթների ձևավորման ժամանակ առաջացած ավելցուկ առկայությունը ցույց են տալիս, որ արտադրության մեջ բացառությամբ սառը մշակումից օգտագործվել են տեխնիկական հնարների գրեթե բոլոր ձևերը: Բացառիկ հետաքրքիր են խտտանի այն բեկորները, որոնք իրենց վրա կրում են ապակու փչելու խողովակների կլոր հետքերը:


Դրանք իրենց տրամագծով բավական փոքր են եղել: Փչելու խողովակների փաստն արդեն ինքնին խոսում է տեխնիկական առնվազն երկու եղանակների առկայության մասին՝ ազատ և կաղապարի մեջ փչելու եղանակների: Շատ են այն բեկորներ, որոնք ձգվել են ունելիներով: Կան կոսատ ձևավերված կանթեր:

Դվինի կենտրոնական թաղամասում րացված ապակու արհեստանոցի հետքերը կարևոր նշանակություն ունեն Հայաստանի վաղմիջնադարյան ապակեգործության ուսումնասիրության համար:

Կիր մարելու հնոց . – Կիրը զանգվածաբար օգտագործվել է միջնադարյան մոնումենտալ և աշխարհիկ ճարտարապետական հուշարձաններում, կոմունալ կառույցներում:

րում: Դեռևս վաղ միջնադարից Դվինում հայտնի են կրաշաղախ պատեր, հատակներ, շենքերի հարդարանքի մանրամասներ: Կիրը օգտագործվել է ջրամատակարարման ցանցի ամրացման և այլն նպատակներով:


Այս տեսակետից հետաքրքիր է կենտրոնական թաղամասում ընկած հնոցը, որը, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է կիր մարելու համար (Նկ. 14): Այն տեղադրված է կենտրոնական թաղամասի մուտքի հարավային մասում և անմիջապես փորված է թաղամասի պարսպապատի սեջ: Վառարանից պահպանվել են նրա ստորին մասը՝ 0,8 մ ընդհանուր բարձրությամբ և օդամուղ առավելը՝ 3,0 մ երկարությամբ: Հատակագծում այն ձևավորված է հատակը շարված է հրակայուն, թրծած աղյուսներով: Պատերը կավածեփ են, որոնք ուժեղ ջերմաստիճանի տակ հալվել են: Հատակի մասում պա օդի հոսանքի տարածման համար փորված երկու առվակ: Հնոցի ընդհանուր տեսքը վերականգնելը դժվար է: Պահպանված մասերն այդ հնարավորությունը չեն ընձեռում: Ներքուստ հողը մաքրելիս գտնվել են հանգած կրի խոշոր զանգվածներ, որոնք վկայում են հնոցի օգտագործման մասին: Հնոցի միջից գտնվել են IX դ. խեցեղենի ռեկորներ խիստ այրված վիճակում: Մեզ թվում է, որ արտադրական այս համալիրը կառուցվել է 893 թ. երկրաշարժից հետո, երբ ավերված քաղաքի համար, նոր շինարարություն կատարելու նպատակով կրի մեծ պահանջ է զգացվել:



Նկ. 14. Կիր հանգցնելու հնոցի հատակագիծը: 1979 թ. սլեզումներ: IX-X դդ.:
Կենտրոնական թաղամաս:

XII-XIII դդ. արտադրական համալիրները. – 1976 թվականին միջնաբերդի արևմտյան

ստորին հատվածում -f-g—23-24 քառակուսիներում ռացվեց երկու հատվածների բաժանված 8,50x7,25 մ չափսի մի կառույց: Տարբեր մակարդակների վրա տեղ-տեղ պահպանված բոնիրներով հատակների հետքերը ցույց են տալիս, որ կառույցը բազմիցս նորոգվել է: Վերակառուցումների հետքեր են կիսում նաև շինության պատերը: Սա խեցեգործական արհեստանոց է, որտեղ ռացակայում են ընակիլի սենյակները (նկ. 15, *Բարայան Ֆ.Ս.*, 1979):



Նկ. 15. Ստորին բերդի արհեստավորական թաղամասում բացված բրուտի արհեստանոցի հատակագիծը: 1976 թ. սյեղումներ: XII-XIII դդ.: Միջնաբերդ:

Արևմտյան սենյակի կիստրոնում, հատակի վրա ռացվել է 1,2 մ տրամագծով թրծման հնոցի կիսկարանը (աղ. X, 2): Հնոցն իր չափերով մեծ չէ: Օգտագործվել է տեղական կարիքների որոշ մասը հոգալու համար: Պարզ չէ, սակայն, թե ինչ առարկաներ են թրծել այդ արհեստանոցում: Գտնված գլանները և եռոտանիները (աղ. XLVI, 5, 6) ցույց են տալիս, որ այդտեղ թրծվել է նաև ջնարակած խեցեղեն: Կրակարանի օդամուղ առվակը թավականին երկար է. դուրս է գալիս արհեստանոցի հյուսիսային պատից: Հնոցի հատակն ունեցել է թրծած աղյուսից անջատիչներ՝ օդի հոսանքը ցրելու համար:

Արհեստանոցի շրջապատում գտնվել են ջնարակած խոտան իրեր (աղ. XLVI, 1-4, 7), որոնք իրենց ձևերով համապատասխանում են սելդավայրի շինություններից գտնված ջնարակած խեցեղենի մի խմբին՝ լրացուցիչ կովան այն մասին, որ տեղում պատրաստված խեցեղենի մի մասը օգտագործվել է սեփական կարիքների համար:

Հնոցին անմիջապես կից բացվել է ուղղանկյուն երկարավուն մի փոս (1,5x0,5 մ), որտեղ գտնվել են կավե տձև զանգվածներ: Ըստ երևույթին այստեղ պահվում էր հումքը, որը հետագայում մշակման էր ենթարկվում տեղում: Բացառված չէ, որ անոթները նույնպես պատրաստվում էին տեղում, չնայած ողջ թաղամասում մեզ հայտնի չէ դուրզի և ոչ մի նմուշ:

Ստորին բերդում բացված շինությունների առանձնահատկությունն այն է, որ այստեղ գրեթե բոլոր համալիրներում հանդիպում են արտադրական խոտան, թրծման գլաններ, եռոտանիներ և կավե անոթների հարդարման հետ կապված աշխատանքային գործիքներ: Սանրազննին ստուգումները ցույց են տալիս, որ խեցեղենը թրծվել է նաև մեծ թոնիրներում: Այդպիսիները բացվել են չորրորդ շինությունում, իսկ նախորդ տարիներին՝ արհեստանոցի հյուսիսարևելյան անկյունում: Այդ թոնիրներն ունեն բավականին հաստ շուրթ, երբեմն՝ բարդ օղսմուղ անցքեր փոսորակով (աղ. XV,2):

Պեղածո նյութերը հուշում են թաղամասի պատկերը, այն առևտրա-արհեստավորական է: Բացի խեցեղենի թրծման վառարաններից և թոնիրներից պատեղ բացվում են նաև աղյուսաշար փոքր միատիպ օջախներ, որոնց շրջապատում կան մոխրի, ածուխի մեծ կուտակումներ: Հասկապես այդ օջախների մոտերքից դուրս են գալիս բազմաթիվ երկաթե իրեր և խարամ: Այս ամենը ենթադրել է տալիս, որ այստեղ գոյություն է ունեցել երկաթի մշակման հետ կապված արտադրություն, ակներևաբար՝ բազմատեսակ արտադրությամբ դարբնոց:

Թաղամասի սենյակներում, որոնք ունեն օջախներ և թրծման թոնիրներ նույնպես հանդիպում են ուղղանկյուն փոսեր, ուր երկու անգամ հայտնաբերվել են դրամների գսնձեբ և հախճապակե բազմամիստ միատիպ անոթներ (մեկը դիմակներով): Այդ փոսերն ակներևաբար արհեստավորի անկյուններ են, որտեղ նստում էր արհեստավորը և կատարում իր գործը: Այդպիսի մի նկարագրություն պահպանվել է XI դարի բյուզանդական պատմիչ Թեոֆիլի մոտ, արվեստներին նվիրված իր հետաքրքիր աշխատությունում (*Теофил*, 1963, с. 117):

Արտադրական եամալիրների առկայությունը բերդապարիսպների և քաղաքի պաշտպանական պարսպապատերի մոտ նորոյթ չէ միջնադարյան քաղաքաշինության մեջ: Նման պատկերն իր ցայտուն դրսևորումն է գտնում անդրկովկասյան, միջինասիական և մերձավորարևելյան հուշարձաններում (*Минкевич-Мустафаева Н.В.*, 1959; *Якубовский А.Ю.*, 1940): Հավանաբար դա տնտեսական և կոմունալ տեսակետից ունեն որոշակե առավելություն, առաջին հերթին կապվելով ջրամատակարարման և ջրաբեռացման հետ: Դվոնի միջնաբերդի եամար այդ եարցերը ավելի ոյուրին էին լուծվում, քանի որ պարիսպների տակով անցնում էր ջրով մշտապես լցված խորր և լայն խրամատ: Նույն պատկերը, քիչ այլ պայմաններում դիտվել է նաև քաղաքի արևմտյան արհեստավորական թաղամասում (*Калантарян А.А.*, 1974):

Գ Լ ՈՒ Խ Յ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ
ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՀԱՍԱՐԱԿ ԽԵՑԵՂԵՆ

Պեղումներից գտնված հասաղակ խեցեղենը ներկայացված է հարուստ ժողովածու-
լով: Նյութերն աչքի են ընկնում պատրաստման տեխնիկայի ձևերի, զարդերի, բազմա-
զանությամբ, կիրառական տարրեր նշանակությամբ: Այդ խեցեղենը ստույգ թվագրված
է և իր վրա շատ հստակ կիում է: Երբեք դարաշրջանների համար բնորոշ առանձնա-
հատկություններ: Այդ զանգվածային նյութի մեջ մտնում են շինարարական խեցեղենը,
խոհանոցային սպասքը, տնտեսական նպատակներով օգտագործված անոթները և բազ-
մաթիվ այլ խմորեր, որոնք խեցեղեղծ վարպետների վառ երևակայության արդյունք են:
Անջնաղակ, այսպես կոչված, հասաղակ խեցեղենը բառիս թուն իմաստով ամենազանգ-
վածային արտադրության արգասիք է: Այն արտադրվել է շուկայական հարաճուն պա-
հանջմունքները բավարարելու և լայն սպառման նպատակով: Գտնված անոթները պատ-
րաստված են բացառապես դուրզի սկավառակի վրա: Դուրզերի գյուտեր չկան, բացի
մի փոքր բեկորից, որը գտնվել է VII դարի խճի միջից, կենտրոնական թաղամասում: Լկն
պատկանում է ձեռքի դուրզերի հայտնի օրինակներին և իր վրա ունի երկու փոքր անցք
(ադ. XXVIII, 2):

Կավր Դվինում լայն տարածում ունեն շինարարության մեջ: Կավրը պատրաստված
այսպես կոչված շինարարական խեցեղենը օգտագործվել է տարրեր բնագավառներում:
Ամենից ավելի հպտնարեղվում են աղյուսներ, որոնք կիրառվել են պատերի շարված-
քներում և հատակների սալարկման համար: Տարրեր շերտերում բացված կառույցնե-
րի մանրազնին քննությունը ցույց է տալիս, որ շենքերի պատերի շարվածքում թրծած
աղյուսը քիչ է օգտագործվել: Բայց կան վերանորոգումների հետքեր, պատերի առան-
ձին մասերի հարդարանք, որտեղ պարտադիր օգտագործվել է թրծած աղյուսը: Դա
շատ ցայտուն նկատվում է հասկապես ստորին բերդի արևմտյան թաղամասում: Թրծած
աղյուսները մասնավորապես գործածվել են XII-XIII դդ. թոնիքների շուրջը (թոնրափ)
սալարկելու նպատակով:


Տարբեր դարաշրջաններում աղյուսների արտադրանքում նկատվում է տարրերու-
յուններ չափերի մեջ: Շատ հազվադեպ են վաղմիջնադարյան աղյուսները (հաստ.
6-7 սմ), որոնք և աչքի են ընկնում իրենց կարմիր երանգով: Կենտրոնական թաղամասի
IX դ. շենքերում կան աղյուսաշար հատակով սենյակների մեծ հատվածներ: Աղյուսների
չափերը մոտենում են մոտավորապես այն չափանիշին, որը Դվենի համար պարտադիր
էր մինչև XIII դարը (20-23x20-23x5 սմ): Երբեմն հանդիպում են կիկնակի անգամ մեծա-
ցրած աղյուսներ: Աղյուսների մեջ հազվադեպ են միագույն կանաչ ջնարակով պատած
օրինակները, որոնցով հարդարվել են մեծաեարուստների տները:

Լայն տարածում ունեն ծասկի կղմինդրը: Նախորդ տարիներից հայտնի են կաթողիկեի շրջապատից գտնված VII դարի եկեղեցուն պատկանող օրինակներ, որոնք հիմնականում կրկնում են նույն դարաշրջանի հուշարձաններից (Չվարթնոց, Կարմրավոր) հայտնի կղմինդրների ձևերը և կոնստրուկտիվ առանձնահատկությունները (կարմրաներկ, ճակտոններ, ոչ բարձր եզրեր, թմբիկներ կիսաբլուր կղմինդրների վրա և այլն):

1971-1980 թթ. V-VI դդ. պալատական շինության պեղումների ժամանակ գտնվել են կղմինդրներ, որոնք անշուշտ պատկանել են կաթողիկե եկեղեցու վաղ կառուցման ժամկետին: Դրանք տարբերվում են VII դարի կղմինդրներից հիենց մեծ չափերով և կոպիտ մշակմամբ: Կիսակլոր կղմինդրները ավելի փոփոխված են, իսկ հաթ կղմինդրները ունեն ցածր հաստ կողեր: Վաղ կղմինդրների մեծ մասը դուրս է եկել V-VI դդ. պալատի արևելյան սենյակների եատակի տակից: Պալատի կառուցմանը զուգընթաց 470-ական թվականներին վերանորոգման աշխատանքներ են կատարվել նաև կաթողիկե եկեղեցու վրա, որի ժամանակ ըստ երևույթին փոխվել է ծածկը. կղմինդրները փոխվել են շրջակա տարածքի հատակների տակ:

Մեծ թիվ են կազմում ջրատար խողովակները: VII դարի սկզբներին, եկեղեցու և նրա շրջապատի բարեկարգման ժամանակ, անցկացվել են ջրատար նոր գծեր, որոնց մի եատվածը բացվել է եկեղեցու հարավարևելյան կողմում: Խողովակները միջին մեծության են, քիչ երկար և իրար միացած են կոշաղափոխով: Ջրատար այդ գիծը ըստ երևույթին գալիս է արևելյան կողմից, քաղաքը միջնաբերդի հետ կապող մուտքի տակով, որտեղ տարիներ առաջ ըացվել է ջրատարի հիմնական ուղին երկու ճյուղավորումներով:

Կենտրոնական թաղամասի արևմտյան եատվածում նույնպես նկատվում է ջրամատակարարման ցանցի առանձին հատվածների հետքեր: Դրանք բավական ուշ են կառուցված և իբեց ոբակով գիջում են VII դարի խողովակներին: Պետք է ասել, որ կավե խողովակները օգտագործվել են նաև այլ նպատակներով: Ուշագրավ են թոնրի ակերը, որոնք հանդիպում են ստորին ռեդրում և եարավային ռուրգի պեղավայրում: Դվինի ջրամատակարարման հարցերը մանրամասն քննարկված են: Ամեն մի նոր գյուտ միայն կարող է եարստացնել մեր պատկերացումները քաղաքի կոմունալ կառույցների մասին (Ерремян Р.В., 1975):



Նկ. 33. Կավե դրոշմագարդ սալիկ-հարդարանք: Կենտրոնական թաղամաս, IX դ.:

Կավոց պատրաստվում էին հարդարանքի հետ կապված այլ մանրամասներ: Այդ առումով հետաքրքիր են կավե սալիկները քիչ բարձրացրած կողերով, որոնց վրա քառակուսի դրոշմներով արված են բուսական գարդեր (Նկ. 33):

Գերազանցապես տնտեսական նպատակների եամար են օգտագործվել մեծ կարասները: Դվինում դրանք հայտնաբերվում են տարբեր շերտերում, որը հնաըավորություն է

ընձեռում հետևել վերջիններիս ձևերի զարգացմանը: Վաղմիջնադարյան կարասները եայտնաբերվել են կենտրոնական թաղամասում՝ կաթողիկեից հարավ VII դ. պալատի հատակի տակ: Դրանք եղևնազարդ գոտիներով, զրեթե գնդաձև իրանով մեծ անոթներ են, լայն պսակով: Երբեմն ունեն ելուստաձև հատակ: Որպես կանոն կարասներն արտաքուստ լավ մշակված են: Բաց դեղնավուն են, երբեմն փայլեցրած և ինչ որ տեղ հիշեցնում են անտիկ դարաշրջանի մմանօրինակ անոթները: Կարասները կանգնեցված են եղել ուղղահայաց դիրքով, կիսով չափ թաղված հողի մեջ և ծածկվել քարե կամ կավե կափարիչներով: Բեկորներից մեկը լայն պսակի վրա պատկանվել է հայերեն երկու տառ Ժ և Ը (աղ. XXIX, 2): Հնարավոր է, որ այն առնչվում է տարողության չափի հետ:

IX դ. շերտից հայտնի է ընդամենը մեկ ամբողջական կարաս (ՀՊՊԹ 2623/ 32): Այն փոքրադիր է, երկարավուն իրանով, տափակ, ոչ լայն հատակով: Կարասի իրանի վրա ծղվում է բավականին նեղ մի զարդագոտի, որը վաղմիջնադարյան եղևնազարդի ոճով է արված: Կարասների մյուս գյուտերը այս շերտում, բեկորային են:

Քաղաքի միջնաբերդի հարավային բուրգի շրջանում գտնվել են երկու ամբողջական կարաս, որոնք թվագրվում են X-XI դարերով: Դրանք քիչ ուռուցիկ են ստորին մասում ավելի նեղ և ունեն համեմատաբար ոչ լայն հատակ: Շատ քիչ ընդգծվում է վիզը: Պսակները փոքր են, ստորին մասում ունեն սեղմումով արված ալիքազարդեր: Կարասները զուրկ են հարդարանքից. ունեն երկու երեք ուռուցիկ գոտիներ, որոնք արդեն ընդորոշ են ինչպես այդ շրջանի, այնպես էլ XII-XIII դդ. անոթերի համար (ցուցադրվում են Դվինի թանգարանում, աղ. XXIX, 5,6)

XII-XIII դդ. կարասները նույնպես հանդիպում են ընդհանրապես, դրանց բնորոշ են քիչ ավելի սլացիկությունը (նեղ հատակ, հստակ ընդգծված վիզ, ոչ լայն բերանով և պսակով): Ձարդերից զուրկ են, երբեմն հանդիպում է պարանախյուսը: Այս շրջանի նյութերի մեջ րավականին մեծ քանակություն են կազմում կաբմիր փայլեցրած փոքրադիր կարասները: Դրանք ունեն երկուսից-չորս կանթ, բավականին լայն բերան, սեպաձև զարդ: Կարասների մի մասը, ինչպես կտեսնենք, ունի ելուղ կնիքներով արված դստնազարդ գոտիներ:

Շատ հետաքրքիր է հարավային բուրգի ամենավերին շերտում գտնված փոքր, լայն բերանով, հորիզոնական փոքր կանթերով և ծորակով կարասը: Իրանը պատած է կարմիր ներկով, փայլեցված է, ունի շուրջանակի զնացող ալիքաձև չորս զարդագոտի (աղ. XXIX, 3):

Հասարակ խեցեղենի խմբերում մեծ քանակ են կազմում կճուճները, որոնք իրենց ձևերով և հաբդարանքով բազմաբովանդակ են:

Կճուճների վաղ տիպերը գտնվել են կենտրոնական թաղամասում V-VI դ.դ. պալատական շինության պեղումներից: Ամենաբնորոշ ձևերն ունեն քիչ կիսաբոլոր հատակներ, գնդաձև իրան, կարծ վիզ և քիչ դուրս շեշտված պսակով լայն բերան: Ձարդը սանրաձև է, երբեմն հանդիպում են ալիքաձև: Վաղ կճուճների այս խումբը պսակների հարդարումով տալբերվում է ավելի ուշ օրինակներից: Պսակները քիչ դուրս են շեշտված և իրենց վիա կրում են ակոսներ, մի հանգամանք, որը շատ բնորոշ է այդ արտադրանքին (աղ. XXXI, 1): Հանդիպում են եռաստիճան կամ կլոր դուրս ծալված պսակներ:

Վաղմիջնադարյան կճուճների հետաքրքիր ձևեր են նկատվում VII դ. սկզբում պալա-



1



2



3



4



5




6



7





9



10.1




10.2



10.3





սի վրա առաջացած տուֆի տաշվածքի շերտում գտնված ռեկորների մեջ: Լլստեղ շատ են դուրս շեշտված պսակներով, խորը ակոսներով, երբեմն լայն զարդարուն գոգավորություններով ռեկորները: Կճուճները հիմնականում կանթ չունեն, ունեն լավ մշակում, պատրաստված են մանրահատիկ կավից: Հիմնականում հարդարված են ակոսազարդերով՝ ուղիղ և ալիքաձև, նկատվում է նաև ներկի օգտագործում: Հայտնի է վերադիր զարդերով մեկ նմուշ, որն իր ձևով շատ է նման նախորդ տարիներում գտնված ողկույզի զարդով անոթին (աղ. XXVIII, 1,3, *Ղաֆադարյան Կ.Գ.*, 1952, նկ. 173):

Կճուճների այս ձևերն իրենց հետագա զարգացումն են ապրում VIII-IX դարերում: Նույն թաղամասի այս շերտերում գտնվել են օրինակներ, որոնց պսակները կրկնում են VII դարի կճուճների պսակները, քոչ ավելի հստակ մշակումով: Կճուճները դեղին մանրահատիկ կավից են՝ քիչ գնդաձև իրանով և լայն հատակով ու ընդհանրով, IX դարի կճուճները կրկնում են նախորդ տարիներին գտնված ձևերը (*Քալանթարյան Ա.Ա.*, 1976, էջ 52-64), ունեն գնդաձև իրան, կարճ վիզ, քոչ դուրս ծավված պսակով, ականջ հիշեցնող հորիզոնական տեղադրված կանթեր և այլն (աղ. XXXII, 2,5, XXXIII): Հարկ է նշել, որ կճուճների այս ձևերը ընդհանրապես միայն IX , գուցե և X դարերին: Հանդիպում են նոր օրինակներ գնդաձև իրանով առանց վլի և հարթ պսակներով (աղ. XXX, 2,3,5,6): Բոլոր օրինակները մրապատ են, բացի լայն պսակ ունեցող օրինակներից, արտաքին հարդարումը զուսպ է՝ հիմնականում ակոսներ, մեկի վրա կա արարատառ փոքր արձանագրություն՝ «*բարաքաթ*» (ՀՊՊԹ 2755/100, աղ. XXX, 5): Իրենց ձևերով այս կճուճները ինչ որ մետաղալին ընդհանրապես կրում: Ձգացվում է մետաղի հետ կապված արհեստային արտադրանքի ազդեցությունը դրանց վրա: IX դ. կճուճների մի մասի վրա նկատվում է ընդհանրապես չափերի և բարձրությունների համապատասխանություն: Այս երևույթը նշվել է դեռ նախորդ պեղումների նյութերի քննության ժամանակ (*Քալանթարյան Ա.Ա.*, 1976, էջ 56): Նույն ընդհանրություն է նաև IX ապակու արտադրանքում, հատկապես գավաթ-րաժակների չափերում: Չափերի այս համապատասխանությունը պատահական լինելի կարող է: Ըստ երևույթին այդ շրջանում անոթների պատրաստման, նրանց տարողությունների ընտրության մեջ կային ինչ-որ սկզբունքներ, կապված ստանդարտիզացիայի հետ, որոնք մեզ համար դեռևս անհայտ են:

XI-XIII դդ. կճուճները, որոնք գտնվում են միջնարերդի ստորին հատվածներից և հարավային ռուրզի շրջանում, ոճական տեսակետից ոչ մի նորույթ չեն բերում: Մեծ մասամբ մրապատ այդ կճուճներին ընդհանրապես կավե ոչ մանրահատիկությունը, պատերի թափանցիկությունը, ցածրադիր լրնություն, ոչ լայն հատակները, ուղիղ, քոչ դուրս թեքված պսակները, կարճ վզերը (աղ. XXX, 1, XXXI, 3): Բոլոր անոթները կանթով են, որոնց հատուկ են ներձկված մասերը: Կան կանթերի ամրացման ձևերի և զարդերի տարատեսակներ, որոնք կապվում են տարրեր արհեստանոցների հետ: Երբեմն հանդիպում են ծորակով կճուճներ, որոնք որպես կանոն ունեն պսակո վրա ամրացված երիզոնական ելուստաձև կանթեր (աղ. XXXI, 4):

Շատ են սափորների գյուտերը: Իրենց ձևերով բազմազան են և հստակ տարրերով են ըստ ժամանակաշրջանների: Վաղմիջնադարյան սափորներ քիչ են գտնվել և հիմնականում ռեկորային են: Դրանց ընդհանրապես կավե ոչ մանրահատիկությունը, Իրանի հետ համեմատած վզերը բավականին լայն են: Սափորներ հաճախ են գտնվում կենտրոնական թաղամասի IX դ. շինություններում: Տարածված ձևերից են տանձաձև քիչ

երկարավուն իրանով: կարճ լայն վզով և լայն հատակով դեղնավուն սափորները (աղ. XXXV,3): Կանթերը վերին մասով միանում են ակրսավոր պսակրն: Այս սափորների լավագույն օրինակները հայտնի են նույն թաղամասի նախորդ գյուղերում (*Քալանթարյան Ա.Ա.*, 1976, էջ 49-52, նկ. 16,2): Նույն տիպը կրկնվում է նաև կանթ չունեցող օրինակներում: Ձարուը հիմնականում ակոսներ են, այն էլ արված անմիջապես վզի տակ: Կան նաև սափորների նոր սփայեր, որոնք աչքի են ընկնում վզերի, կանթերի պրոֆիլավորումով: Այդ սափորներն ունեն շեփորածև վիզ, շատ նուրբ կանթ ու քրչ դուրս փռված ակոսավոր պսակ: Գանվել է նաև շատ նուրբ պատերով: մանրահատիկ կավից պատրաստված սափորի մի ռեկոր՝ ձևավորված ռեբանով և կանթով: Այս տիպը նույնպես բնորոշ է IX դ. սափորներին և հայտնի է նույն թաղամասում գտնված իրերի մեջ (*Քալանթարյան Ա.Ա.*, 1976, նկ. 165):

Այս ժամանակաշրջանի համար բնորոշ են նաև մեծ, լայնարերան կժերը եռաուերև ռեբանով: Դրանք պատրաստվել են դեղնավուն մանրահատիկ կավից, ունեն յավթո՛վածք: Հարդարանքը միայն ալիքածև ակրսներն են (*Քալանթարյան Ա.Ա.*, 1976, էջ 49):

Ձևերի բազմազանությամբ են աչքի ընկնում XII-XIII դդ. սափորները: Լի մասն ունի գնդածև իրան և թույլ օղակածև նստուկ: Վզերը տարրեր են մեղ և լայն, իսկ կանթերը որպես պարտադիր կանոն միանում են վզերի կենտրոններին: Տարածված ձև է նաև սլացիկ երկսրավուն իրանով սափորները, ոչ լայն հարթ նստուկով: Երբեմն այս անոթները պատվում են կարմիր անգորի լայն ժապավեններով:

XII-XIII դարերում լայն տարածում են ստանում կարմրափայլ սափորները (աղ. XXXV, 1): Դրանք պատրաստված են մանրահատիկ կավից, ունեն շաա նուրբ, բարակ պատեր, կանթերի, վզերի և ռեբանների տարրեր ձևավորումներ, երբեմն կրում են փայլեցումով արված գիզգազածև գարդեր: Փայլաներկված պս անոթների իրենց ձևով տարրերվում են զանգվածարար արտադրված մյուս սափորներից և հավանաբար արդյունք են անհատական պատվերների: Ըստ երևույթին կարմրափայլ անոթների պատրաստման և հարդարման տեխնիկան ավելի բարդ էր և վստպեսփց պահանջում էր հատուկ մոտեցում:

Մասսայական գտածոներից են նաև թասերն ու քրեղանները (աղ. XXXVI, 1-3,5,6): IX դ. քրեղանները գերազանցապես խորն են, հաստ պատերով, ունեն հարթ հատակ: Պսակները լայն են և դուրս ծալված: Արտաքին մշակումը կատարյալ է, երբեմն փայլեցրած: Ուշագրավ են 1980թ. գտնված շուրջ մեկ տասնյակ անոթները, ըստ երևույթին միևնույն արհեստանոցի արտադրանք են: Քրեղաններից մեկի հատակը, դրսից փորված է խաչագարդ (աղ. XXXII, 1): Նվառելի է, որ IXդ. ջնարակած բազմատեսակ թասերի ձևերը չեն հանդիպում հասարակ խեցեղենի օրինակներում:

XI-XIII դարերի թասերն ունեն կլոր իրան. այն հենվում է օղակածև բարձր նստուկը վրա. պսակները հարթ են և լայն: Դրանց սր մասը դրսից և ներսից կիսով չափ լայն փայլաներկված են կարմրով: Ներկը արվում էր երբեմն նաև եատակի վրա, մնացած մասերը հարդարվում փայլեցումով արված գծիկներով: Թասերի այս տիպը լայն տարածում ունի XII-XIII դդ. և մեծ քանակությամբ գտնվել է միջնաբերդի ստորին հատվածում և հարավային բուրգի վերին շերտերում:

Դվինում և, մասնավորապես, Հայաստանում կաղապարով գարդարված կավանոթների վաղ նմուշները հայտնի են IX դարից: Դրանք գտնվիլ են քաղաքի կենտրոնական

թաղամասում (*Քաղանթարյան Ա.Ա.*, 1976, էջ 71, նկ. 25.): Հետագայում կաղապարի ճնշման եղանակով անոթների գյուտերը ավելի շատանում են: 1972-1980 թթ. Դվոնում գտնվել են բուսական միկոնոյն զարդերով հարդարված մեկ սափորի և 3 թասի բեկորներ, որոնք նույն վարպետի կամ արհեստանոցի արտադրանք են (աղ. XXXIV, 1 գունավոր ներդիր N3): Այս գյուտերը հավաստում են, որ հայ վարպետներն առաջին քայլերն են կատարում անոթների նման հարդսբման ճանապարհին, որը ուղի էր բացում հարդարման մյուս ձևի՝ դրոշմազարդման համար:

Մերձավոր Արևելքում այդ անոթները հանդես են գալիս արդեն VII դ. (*Pope A.U.* 1939, հ II, էջ 1471-1472, հ. V, 567, *Lane A.*, 1947, նկ. 4 c), հայտնի է Շոշից գտնված թասը նրան ծառի և պտուղների զարդերով (աղ. XXXIV, 2): Այդ խեցեղենը շատ է հանդիպում Սամառայում (*Sarre F.*, 1925, էջ 8-15, աղ. IV): Բ. Առաքելյանը ժամանակին, չնայած նյութի սակավությանը, ճիշտ է թվագրել հայկական ծագում ունեցող անոթները: Նրա կողմից ճիշտ կոահված է, որ դրոշմազարդը Հայաստանում հանդես է եկել XI դարում և այն հաջորդել է կաղապարով զարդարված խեցեղենին, որի վաղ նմուշները նկատել է Անիի ձվածն անոթների մեջ X-XI դդ. հետո (*Առաքելյան Բ.Ն.*, 1958, էջ 229):

Հիրավի, կարևապարի օգնությամբ հարդարված խեցեղենը Դվոնում զանգվածաբար հանդիպում է սկոած XI դարից: Դրանք հիմնականում դեղնավուն, մանրահատիկ խեցուց սափորներ են, որոնք ունեն գնդաձև իրան և երկար, լայն վեզ: Ջարդերը տեղադրված են իրանի վերին մասում մինչև վիզը: Դբանցում վերարտադրված են բուսական և երկրաչափական զարդատմոտիվներ. կենդանական զարդը քիչ է հանդիպում: Այդպիսի սափորների շատ բնորոշ մի օրինակ հայտնի է 1975թ. պեղումներից, ստորին բերդի առաջին շինությունից (ԳՊՊԹ 2660/43, աղ. XXXIV, 5), իսկ կենդանական պատկերներով սավորների բեկորներ գտնվել են հարավային բուրգի շրջանում XII-XIII դդ. շերտերում (աղ. XXXIV, 3,4): Ոչ մի կասկած չի հարուցում այս անոթների տեղական արտադրանքին պատկանելու հարցը: Սակայն երբեմն կան օրինակներ, ինչպես 1979թ. գտնված նմուշները, որոնք, իրականում խիստ տարբերվում են տեղական օրինակներից կավո որակով, կաղապարով, անոթների ձևերով: Անշուշտ, դրանք բերված են հարևան երկրներից, թեև դժվար է որոշել պատրաստման վայրը:

Կաղապարային ճնշումով հարդարված անոթները լայն տարածում ունեն մահմեդական աշխարհում: Դրանք մեծ քանակությամբ հայտնի են Միջին Ասիայում (*Пугаченкова Г.А.*, 1958, էջ 78-91), հանդիպում են նաև մոնղոլական հուշարձաններում (*Булатова Н.М.*, 1972): Կաղապարի օգնությամբ զարդարված անոթներ գտնվել են նաև Ադրբեջանի տարածքում՝ Օրեն-Կալայում, Բաքվում և այլուր (*Ахмедов Г.М.*, 1959; *Исмизаде О.Ш., Ибрагимов Ф.А.*, 1983):

XI-XII դդ. նյութերում շատ են հանդիպում սնդկամաններ, որոնք պատրաստված են կաղապարի մեջ:

Ատորին ընդի արհեստավորական թաղամասում շատ են ւրոշմազարդ, կարմրափայլ կարասների բեկորները, որոնք մեկ անգամ ևս հավաստում են դրանց պատկանելը XI-XII դդ.: Մյուս կողմից գյուտերը ցույց են տալիս, որ դրոշմազարդ կարասները լայն կիրառություն ունեին առևտրականների, արհեստավորների և այլ խավերի կենցաղում:

Դրոշմազարդ կարասները ուսումնասիրողներին բազմապիսի պրոբլեմների առջև են կանգնեցնել: Հետաքրքրությունը կարասների նկատմամբ առաջին հերթին վերաբերում

է դրանց կիրառական նշանակությամբ: Մյուս կողմից մանրագնին քննարկված է նման լրոշմների թեմատիկան (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1952, *Առաքելյան Բ.Ն.*, 1958: *Караханян Г.О.*, 1954, *Բարսյան Ֆ.Ս.*, 1981, *Ахмедов Г.М.*, 1959 և ուրիշներ): Սենք չենք ուզում նորից անդրադառնալ այդ հարցին և կրկնել, սակայն ընծեռած նյութի սահմաններում ցանկալի է մի քանի դիտողություններ անել այս խեցեղենի արտադրության հավանական կենտրոնների մասին:

Դվինը և Անին տվել են դրոշմազարդ կարասների ռազմաքանակ ժողովածու: Բացառված չէր, որ առաջին հերթին Արաղասոյան դաշտը և Շիրակը ապահովվեին Դվինի և Անիի արհեստային արտադրանքով: Դրոշմազարդ կարասներ գտնվել են նաև հայկական այլ հուշարձաններում, որոնք տեղում պատրաստված լինելով հանդերձ, զարդանուփվներով կրել են Դվինի և Անիի արտադրանքի անմիջական ազդեցությունը: Հնագիտական թուրք տվյալները վեայում են, որ այս տիպի կարասների արտադրության կենտրոնները եղել են Հայաստանում և հայկական տարր ունեցող անդրկովկասյան քաղաքներում: Դրանց թվոն կարելի էր դասել Բայլականը, Գանձակը, Դմանիսը և այլն: Եթե Բայլականում կան խաչի պատկերով դրոշմվածքներ, հետևարար այն կապվում է քրիստոնեական միջավայրի հետ (պետք է հասկանալ հայերի) ոչ թե ընդունել այն սխալ եետևությունը, թե իրր խաչը XII դարում կորցրել էր իր նախնական թովանդակությունը (*Ахмедов Г.М.*, 1959; 204):

Դվինում շատ են գտնվում դրոշմազարդ կափառիչներ, որոնք չափերով ռավակահին մեծ են. օգտագործվել են կարասները, թոնիրները ծածկելու համար: Դրոշմազարդ խփերի վրա երբեմն հանդիպում են նույն պատկերները, ինչ կարասների: Ասկայն մեծ մասամբ դրոշմները կլոր կամ քառակուսի մեդալյոններ են թուսական, երկրաչափական և շատ քիչ կենդանական զարդերով (սղ. XXXVII,7): Դրոշմազարդ խփեր չկան կենտրոնական թաղամասի IX դարի շերտում, դրանք շատ հազվագյուտ են ստորին ռերդի XII-XIII դդ. թաղամասի շինություններից: Դրոշմազարդ խփերը հավանաբար երևան են գալիս X-XI դդ. և վերջին շրջանում ըստ երևույթին դուրս են գալիս կիրառությունից:

Բնականաբար մեծ թիվ են կազմում լուսավորության միջոցները, որոնք յուրաքանչյուր դարաշրջանի համար ունեն շատ ստույգ, որոշակե ձևեր և դրա հետ միասին նաև առանձին շեղումներ: Վաղմիջնադարյան ճրագների համար հատուկ են թարծր հենակոտքով թաս հիշեցնող անոթները (սղ. XXXVII,2), որոնք գտնվում են կենտրոնական թաղամասի V-VII դդ. շերտերում: Դրանցից հայտնի են քիչ թերի երկու օրինակ և առանձին ռեկորներ: ճրագների այս ձևերն իրենց զոյությունը պահպանում են մինչև IX դարը և հետագայում գրեթե չեն հանդիպում: Նույն դարաշրջանի նյութերի մեջ պետք է նշել սաորին բերդի սենյակներից մեկում պատահական գտնված բյուզանդական տիպի նավակաձև զարդարուն ճրագի մի փեղկը: Դրանք հայտնի են նաև Դվենի նախորդ տարիների պեղումներից և շատ հազվադեպ են հանդիպում (Քալանթարյան Ա.Ա., 1970, սղ. XXXII, 1-4): Կենտրոնական թաղամասից գտնվել են փոքր կանթով միապատ անոթներ, որոնց ճրագ լինելու հանգամանքը չի ռացաովում:

IX-X դարերում գործածության մեջ են մտնում քթիկավոր ճրագները, որոնք հայտնի են նաև Վրաստանի և Ադրբեջանի հնավայրերից: Շատ հավանական է, որ այս ճրագները իրենց կերպավորումով ծագում են մետաղական նույնանման ձևերից, որոնք հայտնի են արարական աշխարհում: Դվինում այս տիպի ճրագները մեծ քանակությամբ դուրս

են գալիս կենտրոնական թաղամասի IX դարի հորերում, շերտում (աղ. XXXI, 1-4, XL, 2-4) և հայտնի են քաղաքի տարածքում պատահական գտնված նյութերում: Քթիկավոր ճրագների մեջ շատ հազվադեպ են միագույն կանաչ ջնարակով պատած օրինակները: ճրագներից մեկն ունի երկու փող (աղ. XLVII,6):

XI դարից լուսավորության միջոցների որպես հիմնական ձև հանդես են գալիս պոչուկավոր նավակաձև ճրագները, որոնք մեծ քանակությամբ հայտնի են ստորին ընդդի և հարավային ռուրգի պեղվող սենյակներից: Դրանք գերազանցակես ջնարակած են (կանաչ և երկնագույն) և հանդիպում են նաև հասարակ օրինակներ (աղ. XXXVII, 4, XL, 5,8,9): Այս տիպի ճրագների արտադրությունը կազմակերպվում էր խեցեգործության խոշոր արհեստանոցներում, որտեղ արտադրվող այլ տիպի տեսականու հետ պատրաստում և թծում էին նաև ճրագներ: Այս պատկերը շատ տպավորիչ նկատվել է 1968թ. Դվոնում պեղված մի արհեստանոցում (*Калантарян А.А., 1974*): Նավակաձև ճրագները նույնպես լայն տարածում ունեն Անդրկովկասում: XII-XIII դդ. շերտերում գտնվում են նաև այլ տիպի ճրագներ ոչ ընդհանուր ձևերով, երբեմն անհրապույր տեսքով, որոնք պատրաստվել են մասնագիտության մեջ չհմտացած վարպետի ձեռքով:

Խեցեղեն նյութերում թավակամին մեծ թիվ են կազմում այսպես կոչված սնդկամանները, որոնք հիմնականում գտնվում են միջնարեդի պեղավայրերում XII-XIII դդ. շերտերում: Անդկամանների հարցը մանրամասն լուսարանված է մասնագիտական գրականության մեջ: Դվինի և Անիի սնդկամանների վերաբերյալ գոյություն ունի հատուկ ուսումնասիրություն, որտեղ մանրագին քննարկված են այդ անոթների ձևերը, պատրաստման եղանակները, տրված է կիրառական նշանակությունը և տարածման շրջանակները (*Джанполадян Р.М., 1982*): Անդկամանները մանրահատիկ կավից պատրաստված և լավ թրծված հաստ պատերով անոթներ են, իրանի տարրեր ձևերով (գնդաձև, կոնաձև, կոսազնդաձև, երբեմն ռազմանիստ) և սրածայր հատակների տարրերակներով: Այդ անոթներին ընդհանուր է փոքր կարծ ընդհանրությունը, ետ ծաված շուրթերով և թավակամին նեղ անցքը: Այսպիսով, սնդկամանների ձևերը և պատրաստման տեխնոլոգիան ընդհանուր ուսումնասիրողներին ընդհանուր է այն մտքին, որ դրանք հատուկ կիրառության անոթներ են, որոնք օգտագործվել են տարրեր նպատակներով: Ներկայումս առավել ընդունելի այն տեսակետն է, ըստ որի դրանց մեջ պահպանվել են սնդիկի պարունակությամբ դեղանյութեր, օժանդակներ: Անոթի ձևը և հատկապես խցանման համար շատ պիտանի ընդհանրություն են, որ դրանցով տեղափոխվել են նյութեր և վաճառվել:

Դվոնում վերջին տարիներին գտնված սնդկամանները հիմնականում գորշ մոխրագույն են, սև և դեղնականաչավուն: Դրանք իրենց չափերով մեծ չեն (8-12 սմ ընդհանուրությամբ), իսկ մի մասը կրում է զարդեր՝ փորագիր և վերադիր նշան (աղ. XLI): Գրեթե ընդհանուր սնդկամաններն ունեն արձանագրություններ, որոնք արված են անոթները պատրաստելուց հետո՝ սուր գործիքով քերելու միջոցով: Դրանց մեծ մասը անուններ են կամ նշաններ: Մեզ հայտնի նյութերի մեջ մի սնդկամանի վրա արձանագրությունը փորագրված է մինչև թրծելը (ընթերցվում է «*Ֆայրուզ*», աղ. XLI,6): Ընդհանրապես դժվար է պարզել, թե ինչ նպատակով են արված սնդկամանների արձանագրությունները, թեև որոշ փորձեր կատարվել են այդ ուղղությամբ (*Гюзальян А. Т., 1959*):

Անդկամանների քննությունը շատ հետաքրքիր հարցերի պատասխան կարող է տալ:

Դվինի սնդկամանների հիմնական խումբը գորշ-մոխրագույն է և սակավ՝ դեղնականա-
չավուն: Անշուշտ, այդ անոթները տեղական արտադրանքի նմուշներ են: Դա ապացուց-
վում է նաև նախորդ ուսումնասիրություններից: Ուսկայն կան օրինակներ, որոնք իրենց
խեցու որակով և հատկապես գույնով ասարերվում են իրմնական խմբից: Դրանք ան-
շուշտ օժանելիք տեղափոխելու պատրվակով բերվել են դրաից, ըայց դժվար է որոշել
վերջիններիս արտադրության կենտրոնները: Քանի որ սնդկամաններով դեղանյութեր
են արտահանվել և ներմուծվել տարրեր քաղաքներ, ապա անշուշտ նույն ձևով Դվինի
անոթները կարող էին հայտնվել այլ երկրներում: Դվինին ընդորոշ չի եղել մեծ սնդկա-
մանների արտադրությունը և պեղումների ժամանակ մենք չունենք այդպիսի նշանա-
կալից գյուտեր: Ուսկայն կան միջնադարյա սնդկամանների առանձին բեկորներ, որոնք
բերվել են Անիից:

Շատ հետաքրքիր է սնդկամանների թվագրության եարցը: Դվինի շերտագրական
մանրազնին քննությունը հնարավորություն է ընձեռում ճշտումներ մտցնել նաև սնդկա-
մանների թվագրության մեջ: 1975թ. կենտրոնական թաղամասի հորերից մեկում, որը
տալիս էր IX դարով թվագրված նյութեր, գտնվեց նաև սի սնդկաման: Վերջինս գնդաձև է,
չունի արձանագրություն, բերանը կտրված է: Հետաքրքիր է, որ կենտրոնական թա-
ղամասի IX դ. շերտերում դրանք հանդիպում են առաջին անգամ (ՀԴՊԹ 2660/68,
աղ. XLI, 1):

Դվինի նյութերի քննությունը ցույց է տալիս, որ գնդաձև սնդկամանները քիչ են հայտ-
նաբերվում և դրանք դուրս են գալիս IX-X դդ. նյութերի հետ: Պարզվում է, որ սնդկա-
մանների արտադրությունը սկսվում է IX դարից և բուռն ծաղկում է ապրում XII-XIII
դարերում, կորցնելով իր նախնական գնդաձև տեսքը և ստանալով սրածայր նստված-
քով ըզվածաթիվ տարրերակներ:

Բազմազան են գտնված խփերը ինչպես իրենց կորառուսքյան տեսակետից, այնպես
էլ ժամանակագրական առումով: Քննարկվող ժողովածուի մեջ վաղսիջնադարյան խփեր
չեն մտնում: Միակ կավե օրինակը հայտնաբերվել է VII դարի կաթողիկոսարանի հյու-
սիսային թևում, կարասների շարքը պեղելու ժամանակ: Այն կարասի խուփ է, շատ զանգ-
վածեղ. իր տեսքով նման է վաղսիջնադարյան քարե խփերին (նղ. XXVIII, 4): Ունի շատ
լավ մշակում, փայլեցրած է: Ինչպես նշվել է, այդ խուփը մեծ արժեք ունի իր վրա եղած
արձանագրությամբ՝ «Գրիգոր»:

Կիրական տեսակետից խփերը դասակարգվում են՝ կարասների, թոնրի, խեանո-
ցային անոթների և հատուկ նպատակների համար օգտագործվողների շարքում: Ինչ-
պես մյուս անոթներին, այնպես էլ խփերին յուրաքանչյուր դարաշրջանի համար ընդորոշ
են պարտադեր ձևեր, որոնք կապվում են ճաշակի, վարպետի հնարամտության և ուրիշ
գործոնների հետ:

IX դարի համար որպես ընդորոշ ձև եանդես են գալիս այսպես կոչված սկավառա-
կաձև խփերը՝ կարճ, գեղեցիկ հարդարված ըռնակով (աղ. XXXVIII, 3, XXXIX, 5,6): Իրենց
վրա կրում են փորագիր տարրեր գարդեր՝ ալիքաձև, շրթայաձև և այլն: Դրանք իրմնա-
կանում կճուճների խփեր են՝ թեք կտրված եզրերով, անոթի բերանը լավ ծածկելու հա-
մար: Փոքր անոթների խփերը տարրեր են ձևերով, սակայն ըռնակները նույնն են: Այդ
խփերից մեկի բեկորի վրա նկատվում է արարատառ արձանագրության հետք
(աղ. XXXVIII, 1): IX դ. խփերի ձևերի մեջ հանդեսպում են որոշ շեղումներ, որոնք կապ-

վում են կիրառության հետ: Օրինակ, խփերից մեկն ունի հորիզոնական կանթ, որը դրված է անմիջապես եզրին, իսկ զարդերը բոլորովին տարբերվում են ընդունված զարդածներից (աղ. XXXIX, 7):

Չետաքրքիր են X-XI դդ. դրոշմազարդ խփերը, որոնք որպես կանոն մեծ են իրենց տրամագծով և հավանաբար օգտագործվել են միայն թոնիրները և կարասները ծածկելու համար: Դրանք իրենց վրա կրում են տարբեր բովանդակությամբ դրոշմազարդեր՝ հիմնականում մեդալյոններ, կենդանական, բուսական և երկրաչափական պատկերներով, երբեմն վարդյակներ:

XI դարում Դվրնում լայն տարածում են ստանում խփերի տեսակներ, որոնց ձևերը շատ են հանդիպում հայկական և անդրկովկասյան բոլոր հուշարձաններում: Դրանք սկավառակաձև խփեր են, կենտրոնում բարձր գմբեթավոր ընկածով՝ սրածայր գմբեթավոր (ֆալատիւ) և փոսիկավոր (աղ. XXXVII, 6, XXXVIII, 4-6): Խփերի այս տեսակները միայն խոհանոցային անոթների վրա են դրվել և իրենց տրամագծով համապատասխանում են այդ շրջանի կճուճների բերանների չափերին:

Բոնակների այդ ձևերն անշուշտ կապվում են պաշտամունքի, հավատալիքների հետ: Դեռևս XIX դ. նման խփերին որոշ ազգագրական շրջաններում անվանում են «մանչ» կամ «աղջիկ» (*Ղաֆադարյան Կ.Գ.*, 1952, էջ 198): Խփերի մեծ մասը զուսպ է հարդարանքում, սակայն ունի լավ կարմիր փայլաներկ: XII-XIII դդ. նյութերում, հատկապես սաորին բեռդի արհեստավորական թաղամասի պեղումներից շատ են թոնրի խփերը: Տրամագծերով դրանք թավականին մեծ են, ունեն զանգվածեղ հորիզոնական կանթեր և հաճախ ընդելուզված են հախճապակե մանր կտորներով:

Բազմազան են հասարակ խեցեղենի ձևերը: Բացի հիմնական այս խմբերից պեղումների ժամանակ գտնվել են նաև տարբեր կիրառության այլ անոթներ: Չետաքրքիր են IX դ. շերտերում գտնված ուղիղ պատերով կլոր անոթները: Դրանցից մեկի պասակ ճոխ հարդարված է սեղմունով և փորագիր արված զարդերով, իսկ իրանի կենտրոնում գնում է ալիքազարդը: Բավականին լայն տրամագծով (մոտ 25-30 սմ) և հաստ պատերով այդ անոթը միակն է իր ձևով (աղ. XXXII, 2): Նույն կառուցվածքն ունեցող մեկ այլ անոթ աչքի է ընկնում իր պատերի ճոխ զարդերով: Բարակապատ այս անոթը (բեկորային է) ունեցել է ելուստաձև հորիզոնական կանթեր:

Չանդիպում են նաև ծորակով, մեկ կանթանի կճուճ հիշեցնող անոթներ, բավականին հաստ պատերով և բնականաբար՝ մրապատ (աղ. XXXVII, 1):

Չետաքրքիր է քառակուր, չորս ոտքերի վրա հենվող անոթը, որը ընդունված է անվանել «թանաքաման» (աղ. XXXIV, 6): Այն իր վրա կրում է խորը փորագրությամբ եռանկյունիներ և շեղանկյուններ, որոնցով լցված են չորս պատերը և վերևի ազատ հարթակը: Գեղազարդման այս եղանակը շատ տարածված է ընդհանրապես IX դ. և մասնագետների կարծիքով այն անմիջապես կրում է փայտի զեղարվեստական փորագրության տեխնիկայի ազդեցությունը: Նման փորագրությամբ նույնատիպ անոթներ հայտնի են Դվինի նախորդ տարիների պեղումներից (*Калантарян А.А.*, 1974; рuc. 1₂, 1976, с. 68), ինչպես նաև Օրեն-Կալայի հասարակ և ջնարակած անոթների ժողովածուում (*Яковсон А.А.*, 1959; с. 282-286):

XII-XIII դդ. շերտերից հայտնի են դուրս փռված պատերով մեծ տաշտեր՝ ներմից ակոսազարդերով, գլանաձև երկարավուն անոթներ և այլն:

Բ. ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆ

Կենտրոնական թաղամասում V-VI դդ. պալատական շինության պեղումների ժամանակ գտնվել են ջնարակած անոթների չորս բեկոր (մեկը սափորի հատակ է, մյուսը՝ թասի շուրթ, երկուսը՝ անորոշ): Դրանք պատրաստված են մանրահատիկ դեղնավուն կավից և պատված են արծաթափայլ շղարշով, բաց երկնագույն, քիչ կանաչի խփող ջնարակով: Ջնարակի որակն այնպիսին է, որ ամուր չի կայուն խեցուն՝ պոկվում է: Դա բացատրվում է ջնարակի բաղադրությամբ և, առաջին հերթին անոթների վիա անգործի րացակայությամբ: Ընդհանրապես վաղմիջնադարյան ջնարակած անոթներ քիչ են հանդիպում Դվինում:

Հելլենիստական և անտիկ ընկալվալրերի պեղումները Հայաստանում վերջին տասնամյակներում տվել են ջնարակած խեցեղենի հիանալի նմուշներ և բավականին շատ (*Խաչատրյան Ժ.Դ.*, 1977): Ըստ երևույթին ջնարակման անտիկ ավանդույթները անցել են նաև միջնադարին: Ասկայն այդ անոթների արտադրությունը զգալի չափով նվազում է կապված հասարակական-տնտեսական այն իրավիճակի հետ, որը ստեղծվեց ֆեոդալական հարաբերությունների ձևավորման սկզբնական շրջանում: Հայաստանում այդ բարդ իրավիճակին նպաստեց նաև քաղաքակուսն ասպարեզում տերի ունեցող խառնաշփոթ իրադրությունը:

Վաղմիջնադարյան Դվինի և ընդհանրապես Հայաստանի ջնարակած խեցեղենի արտադրության վիա իր ազդեցությունն է ունեցել նաև սասանյան մշակույթը, որը տվել է ջնարակած անոթների հետաքրքիր օրինակներ: Բացառված չէ. որ դրանք պատրաստված լինեին տեղում:

Ջնարակած խեցեղենի զանգվածային արտադրության նոր էտապը սկսվում է IX դարում: Դա թուլրոմլին ուրիշ որակ է, որը կապված էր տաբբեր երևույթների հետ: Մասնագետները այն կապում են սասանյան արծաթե սպասքի արտադրության ընդհատման հետ, որի հետևանքով անիրաժեշտություն էր ծագել գտնել նոր ձևեր, որոնք կարող էին փոխարինել արծաթե սպասքին: Ասկայն որպես ընդհանուր երևույթ, որը և ընդունելի է շատերի կողմից, այն է, որ ջնարակման նոր փուլը կապվում է արտադրողական ուժերի հետագուս զարգացման, առաջին հերթին՝ քաղաքային կյանքի վերելքի հետ միջին դարերում (*Якобсон А.А.*, 1978): Ժամանակագրական տեսակետից այն սկսվում է IX դարում և Արևելքի գրեթե թուլր երկրներում (Անդրկովկաս, Աերծավոր և Միջին Արևելք, Միջին Ասիա և այլն): Անդրկովկասյան ջնարակած անոթների թվագրման փորձերը ավելի վաղ ժամանակաշրջանով, առայժմ չունեն հաստատուն կռվաններ (*Левинтов В.Н.*, 1946, с. 36-48; *Гзелишвили И., Ткешелашвили О.*, 1961): Հայաստանի, մասնավորապես Դվինի ջնարակած խեցեղենի վերաբերյալ կան բավարար թվով աշխատանքներ (*Ղաֆաղարյան Կ.Գ.*, 1952, 1982, *Առաքելյան Բ.Ն.*, 1958, *Քալանթարյան Ա.Ա.*, 1976, *Шелковников Б.А.*, 1952 և ուրիշներ), որտեղ ի մի են ըերված նախորդ տարիների պեղումներից գտնված նյութերը: Վերջին տարիների ջնարակած խեցեղենը, որը ներկայացվում է ստրբև, քննարկված և հիմնավորված է շերտագրական հաղուստ տվյալներով, որը հնարավորություն է ընձեռել՝ ստեղծել ժամանակագրական կուռ սխեմա, որի մեջ իր արտահայտությունն է գտել յուրաքանչյուր դարաշրջանի համար արտադրության հատկանշական կողմերը:

Դվինի IX դ. ջնարակած խեցեղենը դուրս է գալիս հիմնականում կենտրոնական թաղամասի այն շինությունների միջից, որոնք ավերվել են 893 թ. երկիաշարժի ժամանակ: Դրանք հիմնականում բաժանվում են երկու մեծ խմբի՝ բազմագույն և միագույն: Ողջ խեցեղենը նկարագարող է, առանց փորագրության, որը IX դ. ջնարակած խեցեղենի հատկանշական կողմերից մեկն է:

Բազմագույն ջնարակած անոթների համար իշխող են երեք գույները՝ դեղին, կանաչ և դարչնագույն (ադ. XLII, 1-5, գունավոր ներդիր N° 3): Ջարդը շատ հստակ է, հիմնականում երկրաչափական և բուսական: Առաջնային նշանակություն են ծեռք բերում կետագարդը, տարբեր տեսակի ծաղիկները և տերևները, սյուքի ձև ունեցող զարդը և այլն: Վաղ անոթները չունեն անգոբած մակերեսներ, զարդը ներկով ուղղակի արված է խեցու վրա, որ պատված է թափանցիկ, անգույն կամ քիչ դեղնավուն ջնարակով: IX դ. ջնարակած խեցեղենին ընդոռչ է նաև արծաթագույն պատվածքը, որը արդյունք է ջնարակի մեջ մտնող քիմիական ռադադոթյան:

Ջնարակած վաղ անոթների տեխնոլոգիական խնդիրներին չենք ծանրանում, քանի որ դրանք բավարար չափով քննարկված են մասնագետների կողմից (*Кверфельдт Э.К., 1947; Саїко Э.В., 1966, ս ճթ.*):


Բազմագույն ջնարակած խեցեղենը ներկայացված է դուրս փոված և ներձևված սլասկ ունեցող տարրեր չափերի թասերով: որոնք ունեն ոչ բարձ օղակածև նստուկ-հատակներ (նկ 16_{3,6,7}): Փոքր չափսի թասերին հատուկ են հարթ հատակները: Հայտնի են նաև բազմագույն ջնարակով արված փոքր կճուճների ռեկորներ, որոնց իրանի ողջ մակորեսը ծածկված է մեծ պուտերով:

Այսպիսի միասեռ նյութի առատությունը Դվինի կենտրոնական թաղամասում, որի ժամանակագրական պատկերը ստույգ է, ոչ մի կասկած չի հարուցում, որ ջնարակած խեցեղենի նախնական տիպերը նկարագարող բազմագույն անոթներն են, որոնք թվագրվում են IX դարով:


Նույն դարաշրջանի համար ընդորոշ են միագույն կանաչ ջնարակով պատված անոթները: Կանաչը եղել է Դվինի խեցեգործ-վարվետների ամենաընդունելի երանգներից մեկը: Միագույն կանաչ անոթները արտադրվիլ են մինչև XIII դարը: Լևկայն ի տարբերություն ուշ շրջանի նյութերի, որոնց հատուկ են կանաչի ավիլի վճիտ և վառ երանգները, IX դ. ջնարակը քիչ խամրած է և արծաթափայլ: Ըստ երևույթին այստեղ ևս նույն քրմիական ռադադոթյունն է, ինչ բազմագույն անոթների ջնարակինը, չհաշված մետաղական օքսիդները, որոնք տալիս են համապատասխան գունային երանգ: Կանաչ ջնարակով նյութերը հիմնականում ռեկորային են՝ կճուճների առանձին մասեր, թասերի շրթնամասեր և այլն: Հետաքրքիր են գույգ ծորակներով անոթի բեկորը, ինչպես նաև փոքր քթիկով ջնարակված ծիթածրագը, որը շատ հազվադեպ է հանդիպում (ադ. XLVII, 6):

Ջնարակած նկարագարող խեցեղեն գանգվածարար հայտնաբերվում է Ջվարթնոց տաճարի հարավարևելյան կողմում կատարված պեղումներից¹⁶: Երկար ժամանակ Ջվարթնոցի թանգարանում ցուցադրված խեցեղենը վիճելի առարկա էր: Թվիւմ էր, որ այդ նյութերը խաչիկ Դադյանի կողմից ռեքվիլ են Դվինից: Վերջին գյուտերը թույլ են


¹⁶ Վարդան Հարությունյանի պեղումները, նյութերը հրատարակված չեն:




1




5




2




6




3




7



4



8



9



Նկ. 16. Ջնարակած թասերի տիպաբանական աղյուսակ:
3-5-7. IX-X դդ., 1, 2, 4, 8, 9. - XII-XIII դդ.:
Կենտրոնական թաղամաս և միջնաբերդ:

տալիս ասելու, որ IX դ. Ջվարթնոցում եղել է տեղական արտադրություն (ոխտվում են նույնիսկ գունային տարրերություններ), որն իր որակով չի գիջում Դվինի արտադրանքին:

IX դ. ջնարակած անոթների ռեկորներ մեծ քանակությամբ հայտնի են Ջրահովտի ռազմաշերտ հուշարձանի միջնադարյան շերտերում¹⁷: Սակայն այստեղ, ի տարրերություն Ջվարթնոցի, նյութերը ռեպվել են հավանաբար Դվինից (Ջրահովտը գտնվում է Դվինից 10 կմ հս-ամ), քանի որ դրանք իրենց արտաքին հատկանիշներով միևնույն կենտրոնի արգասիք են:

Ջնարակած խեցեղենի վաղ տիպերի թվագրությունը ավելի քան ամրապնդվում ոչ հայկական այլ հուշարձանների պեղումներից հայտնաբերված նույնատիպ նյութերով: Այս նույն խեցեղենը անդրկովկասյան հուշարձաններում մեծ քանակությամբ գտնվում է Օրեն-կալայում և, սակավ, վիացական միջնադարյան ընկալվալներում: Եթե այդ խեցեղենի թվագրության հարցում մեր տեսակետները հարևան հանրապետությունների մասնագետների հետ համընկնում է, ապա տեխնոլոգիական հարցերում կան որոշ տարրերություններ: Վրաստանում և Ադրբեջանում վաղ ջնարակած խեցեղենի սկզբնական տեսակները համարում են (*Муцашвили М.Н.*, 1969, 1979; *Яковсон А.А.*, 1959; с. 231-232; *Бабаян И.А.*, 1964) անգորով նկարագարված անոթները, իսկ ռազմագույն նկարագարող խեցեղենը, որի զարդերը արված է տարրեր ներկերով և պատած ջնարակով: համարվում է ջնարակե զարգացման հետագա էտապը: Դվենի պեղումներն այս տեսակետից տալիս են թուլորովին հակառակ պատկերը: Այստեղ IX դ. շերտերում անգորով նկարագարված խեցեղենը իսպառ ռացակայում է: Այն հանդես է գալիս միայն 893 թ. երկուշարժից հետո կառուցված շինություններում: Դվինն այն քաղաքներից էր, որը ի սկզբանե սերտ կապերի մեջ էր մերձավորարևելյան և իրանական խեցեգործական կենտրոնների հետ և առաջինն էր յուրացնում տեխնոլոգիական ռարդ պոռցեսները:

Ջնարակման նախնական էտապը, որը համարվում է հեղուշրջում խեցեղենի արտադրության մեջ, համընդհանուր երևույթ էր ողջ Արևելքի համար և ուներ իր ակունքները: Համենայն դեպս Անդրկովկասում այն առաջացել է մերձավորարևելյան կենտրոնների ազդեցության տակ և տեխնոլոգիական նորամուծությունները, նրանց հաջորդականությունը պարտադիր էր թուլոր կենտրոններին: Այս առումով դժվար թե ստեղծվեր պնապիսի վեճակ, որ անգորսպատ խեցեղենը եթե լիներ IX դ. համար ընդորշ, հանդես չգար Դվինում:

Դվինում պեղումների ժամանակ գտնված նյութերը ցույց են տալիս, որ X դ. ջնարակած խեցեղենը եանդես է գալիս մի քանի ձևերով: Դրանց մեծ մասը թասեր են, որոնք պսակե և հատակե ձևավորումով գրեթե չեն տարրերվում IX դ. անոթների ձևերից: Անոթներն ավելի խորն են, պսակները շեշտված դուրս են փռված, նկատվում է կրունկածև նստուկների քոշ ավելի կոպտացում (նկ. 16₉): Շարունակվում են նախորդ դարաշրջանի արտադրության լավագույն ավանդույթները: Բազմագույն նկարագարող խեցեղենի նմուշների վրա նկատվում է հստակ զարդե աստրժանարար վերացում, հանդես են գալիս

¹⁷ Էմմա Խանգադյանի պեղումները, նյութերը հրատարակված են:

լայն ցայտերը (աղ. XLII, 6): Վերջինիս արտադրության մեջ դեռևս օգտագործվում են նույն՝ դեղին, կանաչ և շագանակագույն երանգները, սակայն արդեն տեղ են բռնում և այլ գունային երանգները: Սկսում է լայն տարածում ստանալ վաբոյակազարդը:

X դարից մասայական արտադրվում է անգորով նկարազարդված խեցեղենը (գունավոր ներդիր № 4): Այն հատկապես շատ է հանդիպում միջնաբերդի հարավային բուրգի պեղումային ստորին շերտերում, որոնք անմիջապես նախորդում են XII-XIII դդ. հորիզոններին: Այդ խեցեղենի հիմնալի օրինակներ վաղուց հայտնի են Դվինի պեղումներից (*Ղաֆաղարյան 4.9.*, 1982, աղ. 11_{1,2,3}) և ժամանակեն ճիշտ թվագույնել են: Անոթների զարդերը արված են սպիտակ անգորով: անմիջապես թաց խեցու վրա, դիմնականում բուսական և երկրաչափական են: Ողջ մակերեսը պատված է միագույն կանաչ, բաց դեղնավուն կամ դաբչնագույն ջնարակով: Երբեմն նկատվում են ներկով արված ցրված զարդեր, որոնք ավելի հարստացնում են անոթի մակերեսը: Անգորազարդ խեցեղենը բնորոշ է X դարին և իր կայուն տեղն է զբաղեցնում IX դարի արտադրությունից դուրս եկած խեցեղենի փոխաբեմ: Այն հավանաբար շարունակվում է նաև XI դարի սկզբներին:

Ակներևաբար X դ. վերջում և XI դարի սկզբներին ջնարակած անոթների արտադրության մեջ եանդես է գալիս փորագրության տեխնիկան: Սկզբնական շրջանում գծագիր զարդը շատ թույլ է եղել, եագիվ նշմարելի: Այդ անոթների մակերեսներն անգոր ունեն, որի վրա նախքան ջնարակումը արվել է փորագրություն, տարբեր տիպե ալիքների, ցանցերի ձևերով և նկարների եզրագծով (աղ. XLIII): XI դարի փորագիր ջնարակված խեցեղենը դիմնականում բազմագույն է: Այդ խեցեղենին հատուկ է նկարի նկատմամբ գույնի ոչ համապատասխանությունը, մի երևույթ, որն ավելի շատ տարածում է ստանում XII դարում: XI-XII դդ. ավելի բազմագան են դառնում ջնարակած անոթները և՛ զարդերով և՛ ձևերով: Այդ անցումը պատարվում է շատ աննկատ : Ձարդարման երկու տիպերը՝ նկարազարդումը և փորագրությունը գոյություն են ունեցել միաժամանակ, սակայն XI դարի կեսերից ըստ երևույթին նկարազարդումը դուրս է մղվում արտադրությունից: Գերիշխուր է դառնում փորագրման տեխնիկան բազմաթիվ տարբերակներով (աղ. XLIV):

Փոփոխություններ շատ կտրուկ նկատվում է նաև անոթների ձևերում: Կրունկը ձև ունեցող ցածր նստուկներին գալիս են փոխարինելու բարձր օղակաձև նստուկները, թասերի պատերը ավելի ուղիղ են, առանց շեշտված պսակների: Փորագիր զարդերը դառնում են ավելի հարուստ, երևան են գալիս տարբեր վարդյակներ, երկրաչափական զարդեր: Լեռաջին անգամ սկսում է հանդիպել կենդանական զարդը և մարդու պատկերի վերարտադրությունը թասերի վրա: Ջնարակը գույների մեջ չկա որոշակի հստակություն, գունային զարդը հասցված է արստրահման, որն ավելի քան շքեղացնում է անոթների արտաքին տեսքը:

Այդ շրջանում երևան են գալիս ջնարակած անոթների հարդարման նոր ձևեր: Դա առաջին հերթին անգորի հեռացումով ստացվող զարդերն են: Այդպիսի զարդեր հիմնականում կրում են թասերը: Մեծ մասամբ դրանք միագույն են պատված են թույլ դեղին թափանցիկ ջնարակով: Երբեմն ընդհանուր ֆոնի վրա կան կանաչ ցայտեր, որոնք հարստացնում են նկարը: Լճգորի ֆոնի հեռացումով ստացվող զարդերով անոթները լայն տարածում ունեն XII դարում: Այս տեխնիկայով պատրաստված շատ եետաքրքիր մի

անոթ գնտվել է 1973թ. միջնարեդրում: Պահպանված ընկորի վոա վերարտադրված է մարդու պատկերը դաշույնը ձեռքին (*Բարայան Ֆ.Ս.*, 1981, էջ 70): Լսվ նկատելի են հագուստի մանրամասները: Պահպանվել է նաև գլխի մի մասը գլխազարդով (աղ. XLIV, 1): Անոթի վոա կա արարատառ արձանագոություն, որը կարդացվում է «*Ամայ Այուք*» (ընթերցումը Յ.Ջիդդիր): Մարդկանց և կենդանիների պատկերներով անոթները Դվինում շատ հազվագյուտ են, եղածների մի մասն էլ ոճավորված է և միմվոլիկ նշանակությամբ է հանդես գալիս:

XI-XII դդ. ջնարակած անոթների արտադրության մեջ նկատելի են արդեն ձևերի և զարդերի ողող միատիպություն, որը պայմանավորված էր շուկայական ոլորտով: Անոթների միատիպությունը ավելի խորանում է XII դ. կեսից XIII դարում: Այս շրջանում փոխվում են անոթների ձևերը: Ջնարակած խեցեղենի շատ օրինակներ են գտնվել միջնարեդրի ստորին ընդհանուր արհեստավորական թաղամասում, որը թվագրվում է XII դ. 2-րդ կեսից մինչև XIII դ. 30-40-ականն թթ.: Արտաքին տեսքով անոթները տարրերվում են XI-XII դդ. օրինակներից: Թասերը և քրեղանները ունեն քիչ բարձր պատեր, որոնք մոտ 120° թեքվում են դեպի պսակը (նկ. 16_{1,2,4,8,9}): Օղակաձև նստուկները ավելի բարձրանում են, զարդի մեջ ընդունվել է խորը փորագրությունը: Ջարդերն արվում են երբեմն ողջ մակերեսով և բարձր պսակի եզրով, կամ միայն հատակները և եզրերը: Նախորդ շրջանի պես լայն տարածում ունեն տարրեր վարդյակները, ծաղեազարդերը, բուսական այլ մոտիվներ: Երկոսաչափական զարդերը ներկայացված են աստղե, եռանկյան, ռոմբի, շրջանի և այլ զարդապատկերներով (աղ. XLV, 3-6):

XII-XIII դդ. լայն տարածում է ստանում միագույն ջնարակը, հիննականում կանաչ և դեղին երանգներով: Այս շրջանում առաջին անգամ հանդիպում են երկնագույն, իհրուզագույն ջնարակով անոթները, ընդ որում բավականին մեծ քանակությամբ: Շրջանառությունից դուրս են գալիս արստրահված գունային զարդերը: Դրա իմոխարեն նորից վերականգնվում է հստակ զարդը, որը բազմագույն ջնարակած օրինակներում արվում է փորագրության համապատասխան և գունային երանգներն ընտրվում են ըստ զարդերի:

Շուկայական հարաճուն պատանջները Դվենի խեցեգործ վարպետներին ստիպում են գտնել նոր միջոցներ անոթների արտադրությունն առավել չափով կազմակերպելու համար: Այս տեսակետից հետաքրքիր է, որ միատիպությունը գնում է ոչ միայն անոթների ձևերի ուղղությամբ, այլ նաև զարդի միատիպությամբ: Այս շրջանի ամենատարածված զարդը, դա անփույթ ձևով արված ոչ ուղիղ գծերով եռանկյունին է, որը երբեմն վերածվում է բուսական զարդի (աղ. XLV, 3): Այդ զարդը կոող թասերը պատված են միագույն դեղին և կանաչ ջնարակով: Այդ անոթները տարրեր արհեստանոցների արտադրանք են: Դրանցից շատ է գտնվել 1968թ. Դվենի քաղաքային թաղամասերից մեկում բացված արհեստանոցում (*Калантарян А.А.*, 1974), ինչպես նաև 1973-1980 թթ. միջնարեդրում՝ ստորին ընդհանուր բացված արհեստանոցներում և թրժման վառարանների շրջակայքում:

Ջանգվածային արտադրության արդյունք է նաև միագույն անզարդ անոթների առատությունը: Միագույն անոթները երբեմն հատակներին կոող են փոքր ծաղկազարդեր կամ ցանցեր:

XII-XIII դդ. համար խիստ ընդունվել է փոքր աղամանների և պոչուկավոր ձիթածրագնե-

րի առատությունը (աղ. XI.VII, 1-3,5): Որպես կանոն դրանք միագույն կանաչ են, երբեմն հանդիպում են նաև դարչնագույն օրինակներ: IX դարի քթիկավոր ճրագները դուրս են մղվում արտադրությունից և հավանաբար XI դարից սկսում են երևան գալ նոր ախպի ճրագներ: Դրանք հաճախ են հանդիպում և լուսավորության միջոցների ամենատարածված ձևն են:

Շաա են միագույն (հաակապես կանաչ) սափորների բեկորները, երբեմն հանդիպում են ծորակով անոթներ: Այդպիսի անոթերից մեկն ունի բավականին լայն բերան, կարճ ծորակ և ջնարակված է միայն ներքուստ, որը նման անոթների մեջ հազվադեպ է հանդիպում (աղ. XI.VII, 4):

Վերջին տարիներս Դվոնի ամենավերին շերտերում գտնվում են ջնարակած անոթների բեկորներ, որոնք իրենց պատրաստման տեխնիկայով և զարդով տարբերվում են Դվինի զանգվածային արտադրությունից և, ընդհակառակը, մեծ քանակությամբ հայտնի են Հայաստանի և Վրաստանի համաժամանակյա որոշ հուշարձաններում (Մուսաբախ.Մ.Ի., 1979): Այդ խեցեղենը մեծ քանակությամբ դուրս է գալիս Լևիտակի վեմափոր բնակավայրերից: Դա փորագիր զարդով հստակ նկարազարդված բազմագույն խեցեղեն է, որը Դվինում արտադրվել է ետմոնղոլական շրջանում և այլ նյութերի եետ միասին հավաստում է քաղաքում կյանքի շարունակությունը նաև այդ շրջանում: Այս տիպի ջնակած խեցեղեն անոթները կրկնում են XII-XIII դդ. լայն տարածում ստացած ձևերին: Տարբերությունը միայն զարդի պարզության, հստակ գծերի մեջ է (աղ. XLV, 1,2):

Գ. ՀԱԽՏԱՊՊԱԿԻ

Պեղումների ժամանակ գտնված հախճապակու վաղ տիպերը հայտնի են Դվինի կենտրոնական թաղամասի IX դարի շերտերում: Դրանք Մերձավոր Արևելքի կենտրոններից ներմուծված հիանալի թասեր են, որոնք Դվինում հայտնվել են առևտրական ճանապարհներով: Իրենց ձևերով և զարդերով այդ անոթները տարբեր են և հավանաբար պատկանել են տարբեր արտադրական կենտրոնների: Հիմնականում դրանք միագույն են, սպիտակ անթափանց ջնարակի տարբեր երանգավորումներով, որոնք ստացվել են կապարի օքսիդից: Այդ թասերը կոբալտով (կապույտ) նկարազարդված են, որոնք արտահայտված են տարբեր բուսական զարդերի ձևով (ծաղիկներ, տերևներ, կետազարդեր, կոսաշրջաններ և այլն): Երբեմն օգտագործվել է կանաչ գույնը աղմծի օքսիդի կիրառումից: Անոթները պատրաստված են ռաց դեղնավուն փափուկ խեցուց, որը ուսումնասիրողներին եբբեմն կասկածի տակ է դրել վերջիններիս հախճապակու արտադրանքին վերագրելը (Якобсон А.А., 1959, с. 245-246; табл. XIX, *Քայանթարյան Ա.Ա.*, 1971):

Իրենց արտաքին հատկանիշներով այդ անոթները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ մտնում են այն անոթները, որոնց ջնարակը վճիտ է ամուր կպած է խեցուն և անոթների պատերը քիչ ավելի եաստ են: Երկրորդ խմբի մեջ կարելի է դասել այն օրինակները, որոնք ունեն ոչ այնքան մաքուր արտաքին մակերես, սսլիտակ ֆոնն իր մեջ ունի մոխրագույն երանգներ: Այս տիպի անոթների ջնարակը որպես կանոն թույլ

է կպչում խեցուն և հաճախ թափված վիճակում է: Որպես կանոն դրանց մեծ մասը միագույն է, շատ հազվագյուտ են հանդիպում և չունեն նկարագաղղում:

Հախճապակե այս անոթների տարբերությունը գալիս է դրանց տարբեր արտադրական կենտրոններին պատկանելուց (մերձավորարևելյան և պարսկական) (*ժամկոչյան Ա.Ա.*, 1981, էջ 89-91): Պարզ է, որ հիմնական խումբը ծագում է Ամառահից, որի հետ Դվինն ուներ քաղաքական, տնտեսական և առևտրական կապեր: Ասկայն որոշակի զատել հախճապակին ըստ արտադրանքի կենտրոնների նկատելի դժվարություն է հաբուցում:

Նույն վեճակում են նաև IX դ. շրջում խեցեղենի արտադրության հավանական կենտրոնները որոշելու խնդիրը (*ժամկոչյան Ա.Ա.*, 1981, էջ 92-96): Պետք է ասել, որ այստեղ շրջանակները տարածքի առումով ավելի ընդարձակ են (Եգիպտոս, Աիրիա, Միջագետք, Պարսկաստան):

Դվինի պեղումների նախորդ տարիների նյութերում վաղ շրջում խեցեղենը շատ է հանդիպում և ուսումնասիրողների կողմից այն թվագրվում է IX-X դդ. (*Շեևկովնիկով Ե.Ա.*, 1952, *Քալանթարյան Ա.Ա.*, 1971): Կենտրոնական թաղամասում այս խեցեղենը համեմատաբար քիչ է: Շոդյուն անոթների պատերը ավելի բարակ են, այսինքն թասերը շատ նուրբ են, խեցին գոթե ենույն է, բայց ասես քիչ ավելի կարծր նախորդ սիպերից: Շոդյուն խեցեղենի մի հիանալի թաս գտնվել է 1979թ. (աղ. XLVIII, 1, գունավոր ներդիր № 5): Չարդը արված է վերջնարակային եղանակով: Վերջինս կարելի է դասել տվյալ արտադրանքի լավագույն օրինակների խմբին: Այս սիպի թասերը հանդիպում են Աամառա հնավայրում, սակայն նրանց արտադրության հավանական կենտրոններից է նաև Ասորիքը (Անտիոք, Ռաքքա և այլն): Դվինում գտնված շոդյուն հախճապակու մի խումբը համարվել է տեղական (*ժամկոչյան Ա.Ա.*, 1982):

Դվինում արտադրված տեղական հախճապակուն հիմնականում գտնվում է միջնաբերդի XII-XIII դդ. շերտերում: Դրանք առավելապես կոբալտից ստացված միագույն, կապույտ կամ երկնագույն թասերի բեկորներ են, որոնք լայն տարածում են գտել Դվինի նախորդ ժողովածուներում:

Ցանցկնն հախճապակն թասերի բացակայությունը տվյալ շերտի նյութերում ցույց է տալիս, որ դրանք մեծ տարածում են ունեցել XI-XII դդ. և եավանաբար հետագայում դուրս են եկել արտադրության ոլորտից: Միագույն թասերն իրենց ձևերով զրեթե կրկնում են ջնարակած անոթների ձևերը, փորագիր զարդերը նույնատիպ են ջնարակած անոթների զարդերին: Ատվար թիվ են կազմում վերադիր զարդերով անոթները, որոնց մեջ շատ հետաքրքիր են դիմակազարդ բեկորները: Հատկապես ուշադրության է արժանի ստորին ընդդում գտնված բազմանիստ բարձր սկահակը, որի վրա որոշակի համաչափություններով տեղադրված են դիմակներ և վերադիր վարդյակներ, վերցված ուղղահայաց փորագիր ակոսների և վերադիր վարդյակների մեջ (գունավոր ներդիր № 6):

Անզարդ նույնատիպ մեկ այլ անոթ գտնվել է նույն վայրից, բայց ավելի մուգ երանգներով (աղ. XLVIII, 3, գունավոր ներդիր № 7): Երկու անոթների գտնելու հանգամանքը գոթե ենույն են: Վերջինի բեկորները դուրս են եկել առևտրա-արհեստավորական թաղամասի 1-ին շինության սենյակներից մեկում բացված արեեստավորական անկյունից՝ 44 դրամներից բաղկացած մի գամձի հետ: Դիմակներով անոթը նույնպես գտնվել է նույնատիպ հորից՝ 9 դրամի հետ միասին կավագործի արհեստանոցի և 3-րդ շինության

միջև ռացված փողոցի հատվածում: Ինչպես նշվեց, նման անոթների արտադրությունը ընդհատվել է եղել ոչ միայն Հայաստանին, այլև Պարսկաստանի և Մերձավոր Արևելքի կենտրոններին (*Fehérvári G*, 1973, էջ 110, ադ. 59, № 141, 142):

Միջնաբերդի հրշյալ տեղամասերի պեղումները շատ քիչ քանակությամբ ռազմագույն, մասնավորապես շոշյուն հախճապակե նյութեր են տալիս: Գտնված օրինակներն էլ ընկողներ են և ոչ սր պատկերացում չեն ստեղծում զարդի և անոթների ձևերի վերաբերյալ (ադ. XLIX):

Ջուտ արտաքին տվյալներով և զարդի ոճական առանձնահատկություններով դրանց մեջ կարելի է առանձնացնել տեղական օրինակները: Համեմատական կարգով ստվար են ներմուծված, հատկապես պարթևական կենտրոններից շոշյուն օրինակները, ոճավորված գրերով: Րուսական զարդերով: Ուշադրության արժանի են սկիտակ ֆոնի վոս կապույտ ակոսներով անոթների ընկիրները, որոնք ընդհանուր են պարսկական հախճապակուն:

Հախճապակե շքեր անոթների սակավությունը հարավային Րուրդի պեղավայրում և ստորին ընդհանուր, ըստ երևույթին, առաջին եերթին պայմանավորված էր այն զրադեցնող քաղաքային ընկալության սոցիալական դրությամբ: Շինությունների մնացորդները և գտնված նյութերը տեղում վաստակարկում են առևտրա-արհեստավորական միջակ կարողության տեր խակի ասկայություն, որն իր գոյությունը հիմնականում պահպանում էր համեստ արտադրանքով և տեղում այն հրացնելով:

Դ. ԱՊԱԿԻ

Դկինում վաղմիջնադարյան ժամանակաշրջանում ապակեգործության առկայության փաստը հաստատվում է շերտում գտնված նյութերով և, հատկապես, 1973-1974 թթ. ռացված, հողեհված պալաաի պունագարդ դաիլիծում ապակու արհեստանոցի գյուտով (*Костянин К.А., Калантарян А.А., 1977*), որը ինչպես տեսանք, գործում էր VII դարի սկզբներից և հր արտադրանքով: ամենայն հավանականությամբ, սպասարկում էր վերակառուցվող կաթողիկե եկեղեցուն և նորակառույց կաթողիկոսարանին: Արհեստանոցը փոքր լինելով եանդերծ արտադրում էր ռազմածև և ռազմագույն ապակի, լուսամուտի կլոր սկավառակներ, խճանկարի հատիկներ և այլն (ադ. XXVI-XXVII): Գտնված նյութերը ցույց են տալիս, որ պատրաստման հնարները նույնպես տարրեր էին (ազատ փչման ելանակ, կարլապարի մեջ փչելու եղանակ և այլն): Լևառը մշակման ելանակով պատրաստված, կլոր օղակներով գնդածև թասերը շատ քիչ են հանդիպում, որը խոսում է արտադրական ավելի ռարդ պրոցեսների մասին և դրանք, ակներևարար, պատրաստվում էին ավելի ռարծր մասնագիտացված արհեստանոցներում: Կլոր օղակներով տաշված ասակիները գտնվել են խիստ ընկորային և վաստարկված են V դարի պալատի հատակին և միջնաբերդի գագաթի վաղմիջնադարյան շերտերում (ադ. L,3): Դրանք հաստապատ կիսագնդածև թասեր են, դեղնավուն և ռաց կանաչ երանգներով: Այդ ապակու մի մասը, մասնավորապես, քիչ դեղնավուն վճիտ ապակուց պատրաստված օրինակները Դվոն են ներմուծվել պարսկական և միջագետքյան կենտրոններից: Ընդհանրապես վորագիր ասակիների վերաբերյալ առկա է հարուստ գրականություն, որը

հստակ պատկերացում է տալիս այդ ապակիների պատրաստման հնարների և արտադրության հավանական կենտրոնների մասին:

Հայաստանից, մասնավորապես Դվինից և Հացավան ամրոցից գտնված տաշված ապակիները ուսումնասիրված են և հրատարակված (*Տիրացյան Գ.Ա.*, 1968, *Ջանկո-լադյան Գ. Մ.*, 1974, *Քալանթարյան Ա.Ա.*, 1980 և ուրիշներ):

Վաղմիջնադարյան ապակիների մեջ լայն տարածում ունեն ազատ փչման եղանակով պատրաստված գնդաձև հաստապատ սրվակները: Լյո սրվակները ունեն կաթճ վիզ և դուրս փռված պսակներ: Իրենց արտաքին տեսքով դրանք շատ նման են IX դարի կավե սնդկամաններին: Նման սրվակների բեկորներ գտնվել են հրդեհված պալատի այլուճազարդ դահլիճի մոխրի շերտում և կոակից խիստ ծմռված են: Կիսատ մի սրվակ հայտնի է պալատի արևելյան սենյակներից մեկում (ԳՊՊԹ 2614/66, ադ. Լ, 7) և թվագրվում է VI դարով: Կարելի է ենթադրել, որ այս անոթները օգտագործվել են պատերազմական գործողությունների ժամանակ, լցվելով նավթով և ծծումբով: Հետաքրքիր է թուվմա Արժրունու վկայությունը արաբների կողմից ապակե անոթների նման կիրառության վերաբերյալ: «Այլ հուր և ծծումբ նաթիւ բարձեալ ի գործ պատերազմին, եւ զլոյծ բնութիւնս յսնօթս ապակէդէնս եղեալ, և մանր ծծումբն ընդ նմին խառնեալ, եղեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցաւն» (Թովմա Արժրունի, 1917, էջ 119-120):

Ի հարկե, չի բացառվում, որ այս սրվակները օգտագործվեին նաև այլ նպատակների համար, ինչպիսին էր օժանելիքի պահպանումը և տեղափոխումը: Լյո սրվակների բեկորներից հայտնի են նաև Դվինի նախորդ տարիների պեղումներից և գտնվել են նույնպես հրդեհված սենյակներում: Իր ձևով և չավտով նույնանման մի սրվակ հայտնի է Ուրբնիսիի մյուսերում և գտնվել է VI-VII դդ. շերտում (պահպանվում է Վրաստանի պետական պատմական թանգարանում, N 1-62-4038):

Պալատի սենյակներում գտնվել են նաև մուգ դարչնագույն ապակուց, հաստապատ անզարդ բաժակների բեկորներ (պահպանված հատակի տրամագծերը 10-12 սմ): Ընդհանրապես վաղմիջնադարյան ապակին բնորոշ են կանաչ և դարչնագույն երանգները, որոնք հավանաբար տվյալ շրջանում տեղական ապակեգործության մեջ օգտագործվող բարլադրության առանձնահատկությունից է: VI-VII դդ. շերտերում գտնվել են նաև մուգ կանաչ ապակից հենակիվ ըմպանակների բեկորներ (ադ. Լ, 2):

Միջնաբերդի ստորին շերտերում գտնվել են ապակե երկու դրամաչափ-կշռաչափի մուշներ խաչազարդ դրոշմվածքով (նկ. 29₁₇): Դրանք լալ պահպանված 2,5-2,6 սմ տրամագծով (քաշը՝ 4,52, 4,40 գ) կլոր սկավառակներ են, մեկը մուգ կապույտ, մյուսը՝ դարչնագույն: Խաչերի թևերի ծայրին նշված են եունական *N* և *ε* տառերը, որոնք համապատասխանում են նոմիսմա-էքզագիոն համարժեք միավորների առաջին տառերին (*Վարդանյան Ռ. Գ.*, *Քալանթարյան Ա.Ա.*, 1983): V-VII դդ. այս չափանմուշները տարածված էին րյուզանդական աշխարհում և օգտագործվել են ոսկե դրամի կշիռը ստուգելու, ինչպես նաև ծառայել են որպես կշռի միավորներ (*Schlumberger G.*, 1895, *Smith R.W.*, 1957):

Խաչերի ծայրերին արված են նաև առանձին սիմվոլներ, որոնք հաճախ են հանդիպում քրիստոնեական պատկերազրության մեջ: Նման նշաններով մեդալիոններ քանդակված են Ջվարթնոցի տաճարի կողովածև խոյակների վրա, Ներսես կաթողիկոսի ան-

վան և կոչման հունարեն սկզբնատառերով: Անհավանական չպետք է համարել, որ դա կարող է լինել Ներսես Տայեցու կնիքի վերարտադրությունը:

Էքզագիտնների գյուտերը Դվինում կարևոր նշանակություն են ձեռք բերում առևտրատնտեսական հարարերությունների իմաստով: Այս նույն երևույթը շարունակվել է նաև արաբների օրոք: Գրեթե նույն սփյառված ակավառակ արաբներն մակագրությամբ գտնվել է Դվինի քաղաքային թաղամասում (քաշը՝ 4,25 գր.):

Վաղ ապակիների խմբին կարելի է դասել մոզախին թասերը, որոնցից մեկը գտնվել է Դվինի կենտրոնական թաղամասում՝ IX դ. հորերից մեկում: Թասի դարչնագույն միասնական ֆոնի վրա արված են խառը դասավորությամբ սովորական գծիմներ, որոնք անոթին շքեղ տեսք են տալիս: Իր ձևով թասը մերձենում է Դվինում նախորդ տարիներից գտնված մոզայիկ թասի մեկ այլ նմուշին (*Ջանփուլադյան Գ.Ս.*, 1974, էջ 24, N 10) և հավանաբար, դրանք միևնույն կենտրոնի արտադրանք են (ԳՊՊԹ 2614/62, աղ. L, 1):

Մոզախին թասերի արտադրության անտին ավանդույթները շարունակվել են մերձավորարևելյան և րյուզանդական ապակեգործական կենտրոններում, որտեղ դրանք հայտնի են զգալի քանակությամբ: Թվում է, որ Դվինի մոզախին ապակրները անմիջապես ներմուծվել են փոքրասիական որևէ կենտրոնից, անշուշտ, վաղ ապակրներ են, սակայն որոշել դրանց ժամանակագրական սանձանները խիստ դժվար է:

Նույն տեխնիկայով են պատրաստված նաև որգածև փոքր առարկաները, որոնք հավանաբար կշռաքարեր են (աղ. L, 4): Դրանցից Դվինում հայտնի է մի քանի տասնյակ նախորդ պեղումներից (*Քալանթարյան Ա.Ա.*, 1970, աղ. XXIV, 2-5; *Ջանփուլադյան Գ.Ս.*, 1974, էջ 70, N^o 131):

Դվինում IX դարում ապակեգործությունն աննախորձաց վերելք է ապրում: Դա կապված էր երկրի տնտեսական կյանքի, քաղաքների և արհեստների զարգացման նոր էտապի հետ, մի երևույթ, որը դիտվում է ողջ Անդրկովեասում արաբական լուծը թոթափելուց հետո: Դվինի IX դ. ապակրն կարելի է համարել լավագույն ժողովածուներից մեկը Մերձավոր Արևելքում: Ձևերի և հարդարման բազմազանությունը, բազմերանգությունը, ապակրների վճիտությունը վկայում է հայ ապակեգործ-վարվետների մասնադիտական բարձր մակարդակի մասին:

1973-1980 թթ. պեղումների ժամանակ IX դարի ապակրների գրեթե ամբողջ հավաքածուն գտնվել է կենտրոնական թաղամասում: Շատ քիչ քանակությամբ ապակե անոթներ եայտնի են միջնաբերդի հարավային բուրգի հատվածում, որտեղ կրաշարախա պատերով մեծ շինության պատերի արտաքին երեսը թացելու ժամանակ 3,5-4,0 մ խորությունից դուրս են գալիս շեղ ակրներով թասերի բեկորներ, նման կենտրոնական թաղամասի օրինակներին:

Կաթողիկե եկեղեցու շրջակա տարածքում կառուցված IX դ. շինությունների միջից, որոնք ավերվել են 893թ. երկրաշարժի ժամանակ, գտնվել են ապակե անոթների բազմաթիվ նմուշներ, որոնց թվում առանձին խումբ են կազմում *դամպարները*:

Դրանք տարրեր երանգավորումներով, կանթերի և պսակների բազմազան ձևերով ու հարդարումով պատրաստված թասեր են, բարակ, վճիտ ապավուց: Թասերը դրվել են ջահերի և այլ տիպի լուսավորության միջոցների մեաաղե ճրագակալների մեջ, հարմարվելով չափերի տարրերություններով: Նման դամպարների օգտագործումը նկատելի է դեռևս հոռմեական ժամանակաշրջանում: Որոշակի փոփոխություններ կրելով իրենց

ձևերում, ապակե թասիկ-ճրագներն օգտագործվում են նաև վաղ միջնադարում, հատկապես Մերձավոր Արևելքում: Ըստ երևույթին Դվինում VII-VIII դդ. ևս եղել է ճրագների և դամպարների արտադրություն, քանի որ մի քանի բեկորներ մեզ հայտնի է պալատի մեջ բացված արհեստանոցի խոտանի մեջ:

Մեծ քանակությամբ դամպարներ հայտնի են Դվինի նախորդ պեղումներից, հատկապես 1964-1972 թթ. կենտրոնական թաղամասի պեղումներից գտնված նյութերում: Դրանք ուսումնասիրված են (*Джанполадян Р.М.*, 1969; *Քալանթարյան Ա.Ա.*, 1976, էջ 102-104) և նոր նյութերը հիմնականում կիկնում են հմերին իրենց ձևերով ու կատարման հնարքներով, Ղամպարները կանաչավուն և անգույն թափանցիկ ապակուց թասեր են, նեղ և լայն շեղ ակոսներով, դուբս ծալված պսակներով, հանդիպում են երբեմն մուգ դարչնագույն օրինակներ, իսկ մեկ այլ դեպքում՝ քիչ հաստ ապակուց կաթնավուն օրինակներ: Չափերը գրեթե նույնն են՝ բարձրությունը 3,0-6,0 սմ, բերանի տրամագծերը 10,0-11,0 սմ, հատակի տրամագիծը՝ 7,0-8,0 սմ: Թեք մասնեքները ստացվել են անոթը ազատ փչման ժամանակ ոլորելուց, իսկ մի մասը փչվել է կարլապարի մեջ, որի հետևանքով հատակների և իրանի վրա ստացվել են ըջջաջև զարդեր (նկ. 17₂₋₇₋₉, 18₇, աղ. LI, 2,5, LII, 2,4-6):


Ղամպարների մյուս ինչումը զարդից զուրկ է: պատերը հարթ են, քիչ ներս թեքված պսակներով (աղ. LII, 1,3): Ղամպարների մի մասն ունի փոքր կանթեր, կախելու համար: Գտնվում են ցածրադիր նստվածքով, ներձկված կողերով և ռավականին մեծ տրամագծով անոթներ, որոնք ջահերի կենտրոնական մեծ դամպարներն են եղել: Վերջիններս քիչ են գտնվում և առայժմ փաստարկված են միայն Դվինի նյութերում (աղ. LIII, 3, LIV, 10):

Ապակե անոթների հաջորդ խումբը ներկայացված է *գավաթ-բաժակներով*, որոնք հայտնի են ամբողջական օրինակներով և բազմաթիվ բեկորներով (աղ. LI, 1,3,6, LIII, 2,5): Մեծ գավաթ-բաժակների հիմնական մասն անգույն և կապտականաչավուն թափանցիկ ապակուց է, ուղիղ պատերով, ներձկված եատակով և հաստ պսակներով:


Գավաթները մեծ մասամբ անզարդ են: Մի մասն ունի շեղ թույլ ակոսներ, մի քանի անոթներ կիում են վերադիր բարակ ապակեթելեր, ունելիով սեղմված զարդեր (նկ. 17₄₋₅): Բաժակների մի մասն ունի օղակաձև նստուկ: Այդպիսի անոթները եզակի են Դվինի ապակու ժողովածուում և առաջին անգամ հայտնի դարձան 1976թ. պեղումների ընթացքում: Բաժակներից մեկը ստորին մասում կրում է վերադիր հաստ թելերով արված իրար հատուլ զարդեր: Օղակաձև նստուկով բաժակները կանաչավուն բարակ ապակուց են խիստ իրիզացիայի ենթարկված (աղ. LIII, 1,4):

Շքեղ տեսք ունեն նույն խմբի զունավիր ապակուց բաժակները: Դրանք կոում են շեղ ակոսներ և ուռուցիկ բջջավոր զարդեր: Հիմնականում մուգ դեղին ու դարչնագույն են: Փոքր գավաթ-բաժակները իրենց ձևով և զարդերով կոկնում են մեծերին և էական տարբերություններ չկան դրանց պատրաստման տեխնիկայում:


Գավաթ-բաժակների խմբում հատուկ ուշադրության է արժանի 1975թ. գտնված անոթը, որը հիմնականում կոելով նույն ձևը, իր զարդով հանդիպում է առաջին անգամ: Ապակին ռավականին հաստ է, թափանցիկ: Անոթի ողջ մակերեսը կոում է ուռուցիկ եղևնազարդ, որն արված է կապույտ գույնով (նկ. 19₁, աղ. LV,4, գունավոր ներդիր № 10.): Նման անոթներ Դվինում չեն հանդիպում և հավանաբար դրանք սերում են ասորական




Նկ. 17. Ապակե անոթներ: Կենտրոնական թաղամաս, IX դ.:




Նկ. 18. Ապակե անոթներ: Կենտրոնական թաղամաս, IX դ.:





1




2




Նկ. 19. 1. Կապույտ վերադիր թելերով բաժակ: 2. Փորագիր զարդերով բաժակ կանաչ ապլիկացիայով: IX դ.: Կենտրոնական թաղամաս:



Նկ. 20. 1-6. Փորագիր զարդերով հաստ ապակուց բաժակներ,
7. Ապակե անոթ, վերադիր լայն գոտիով: Կենտրոնական թաղամաս, IX դ.:





1



2

Ն4. 21. Փորագիր ապակե հաստ բաժանկների գաղտնի բացվածքներ: Կենտրոնական թաղանթ, IX դ.:

Նկ. 22 Փոսպիտ ապակե հաստ բաժակների զարդերի բացվածքներ: Կենտրոնական բաղաձայն, IX դ.:



կենտրոններից (*Джанполадян Р.М., Калантарян А.А., 1976, с. 508*): 1980թ. կենտրոնական թաղամասում գտնվել է մի մեծ զավաթ հենակով, որն ունի ուժեղ պատվածք: Վերջինս նույնպես կիում է հիշյալ եղևնագարդը և շատ է նման վորոհիշյալ զավաթի զարդին: Ակներեևաբար դրանք պատրաստվել են միևնույն արհեստանոցում (աղ. LV,5, գունավոր ներդիր № 9):

Գավաթ-բաժակների այս խումբը հիմնականում պատրաստված է ազատ փչման եղանակով, որը պարզ երևում է հատակների ձևերում և թեք ակոսներից: Կան նաև կաղապարի մեջ վիչված օրինակներ: Անոթների զանգվածայնությունը, ձևերի և զարդերի միատաբերությունը թույլ են տալիս հավաստել, որ դրանք պատրաստվել են Դվինում, թեև միևնույն արհեստանոցում, միևնույն կիրառական նպատակների համար: Այդ անոթների մեծ կուտակումները Դվինի մայր տաճարի և կաթողիկոսարանի շրջակայքում, ենթադրել են աալիս դրանց եկեղեցական սպասքին վերագրելու մասին (*Джанполадян Р.М., с. 28*): Գտնվել է բաժակի մի բեկոր, որի վրա հավասարաթև խաչ է պատկերված:

Այսօրինակ զավաթ-բաժակների նման անոթների մի մեծ ժողովածու հայտնի է հյուսիսային Կովկասից, համարվում են ասորական (*Уварова П.С., 1900; Крупнов Е.И., 1960, с. 116-117*):

Բացառված չէ, որ դրանք տաբված լինեն Դվինից, քանի որ այդ շրջանում Դվինը առևտրական մայրուղիներով կապված էր նաև հյուսիսային Կովկասի հետ: Նույն տեխնիկայով պատրաստված զավաթների արտադրությունը բավականին լայն ծավալ ունեցր Մերձավոր Արևելքում, Եգիպտոսում և այլուր: Բջջավոր զարդերով անոթների հատակներ, որոնք շատ նման են Դվինի օրինակներին, հայտնի են Ֆուստատից (Եգիպտոս) և թվագրվում են VIII-IX դդ. (*Lamm C.J., 1929-30, էջ 50-56, աղ. IX*): Պաղեստինից գտնված նույն տեսակի բաժակները թվագրվում են VIII դ. (*Bulletin des..., 1965-1966, էջ 117*):

IX դ. ժողովածուում բավականին մեծ թիվ են կազմում հասա, ուղիղ պատերով, տափակ հատակներով *գլանաձև իրանով բաժակները*, որոնց մի մասը նույնպես պատրաստված է Դվինի ապակեգործական արհեստանոցներում (նկ. 20_{5,8}, աղ. LIII, 5): Այդ բաժակները հիմնականում անգույն ապակուց են և պատված դեղնակաճաճավուն փառով: Դրանց մեջ հանդիպում են օրինակներ, որոնք արտաքին հարդարանքով անրկնելի են: Այս տեսակետից ուշագրավ են 1976 թ. գտնված երկու բաժակները, որոնց վրա արված են ոճավորված թռչնակնրա զարդեր, կտուցների մոտ 3-ական բլթակներ և բարդ երկրաչափական պատկերներ, սլաքներով (նկ. 20_{2,3}, 21): Ջարդարուն այս բաժակները պատրաստված են կաղապարների մեջ, այսպես կոչված, հանդարտ վիչելու եղանակով: Այս եղանակով պատրաստված անոթները լայն տարածում ունեին Մերձավոր Արևելքում: Լամմը շատ ճիշտ է նկատել է, որ դրանք «աբբասյան» ապակեգործական արհեստանոցների ամենասիրված ձևերից են եղել (*Lamm C.J., 1941, էջ 9*): Նույնպիսի բաժակներ հայտնի են Լամառայից (*Lamm C.J., 1928, աղ. V*), դրանք պատրաստվել են նաև Իրանի (Շոշ) և Եգիպտոսի ապակեգործական կենտրոններում (*Pinder-Wilson R., 1963, էջ 36, նկ. XVII*):

Գլանաձև բաժակների խմբում առանձնանում են բաց դեղնավուն, կիսաթավանցիկ ապակուց, մուգ դարչնագույն պատվածքով բաժակներ: Գտնված օրինակները հիմնականում անզարդ են, միայն մեկ օրինակի վրա, որը պատկանվել է կիսով, կենտրոնում ունի արաբաառա արձանագրության հատված (ցուցադրվում է Դվինի թանգարանում, նկ. 18₅, 20₆, աղ. LVI, 3):

Այս խմբի մեջ են մտնում բյուրեղապակյա վճիտությամբ հաստ ապակուց բաժակները, որոնք հարդարված են ուռուցիկ փորագիր զարդերով: Բաժակներից մեկը վրա ուղղահայաց զույգ գծերով ուղջ մակերեսը բաժանված է չորս մասի, որոնց մեջ տեղադրված են մեկընդմեջ կրկնվող երկու գարդամուտիվ: Նեղ եատվածները ներկված են կանաչ գույնով: Այս բաժակները Դվրնում հանդիպում են առաջին անգամ և անշուշտ ներմուծված են (*Джанполадян Р.М., Калантарян А.А., 1976, с. 508-509*): Նման երկրորդ բաժակը ապակու որակով և գարդով քիչ ավելի պարզունակ է, այն հավանաբար տեղական շատ հաջողված ընդօրինակություն է, որը խոսում է Դվինի վարպետների մասնագիտական բարձր կարողությունների մասին (նկ.19₂, 20₁, 22, աղ. LVI, 1,2, գունավոր ներդիր № 10_{2,3}):

Գլանաձև բաժակների չափերը՝ բարձրությունը, բերանի և հատակի տրամագծերը 8,0-11,0 սմ է. այս համամասնությունը նկատելի է նաև Մերձավոր Արևելքի կենտրոններում առտադրված անոթների վրա: Չափերի համամասնության քննությունը կարող է շատ հետաքրքիր հարցերի պատասխան տալ: Ըստ երևույթին դա կապված է բաժակների կրթառական, գեղարվեստական և գեղագիտական հարցերի հետ և լայնորեն տարածված է եղել IX դ. ապակեգործական արեստանոցներում:

Դվինում գտնված IX դարի ապակու անոթների մեջ, բացի թասի ձև ունեցող դամպարներից, բափականին ստվար են կրթառական այլ նշանակությամբ թասերը, որոնք ապակու որակով, ձևով և զարդերով տաքատեսակ են: Մեծ մասամբ հայտնի են գլանաձև իրանով, հարթ հատակով անգույն թափանցիկ ապակուց նմուշները, որոնք ունեն մոխրագույն պատվածք: Դրանք հիմնականում անգարոյ են, բացի մեկ թասից, որը փչվել է զարդարուն կաղապարի մեջ և հատակը ու իրանի ստորին մասում ունի վարդյակաձև զարդ (աղ. LV, 2): Նման մի թաս հայտնի է 1937թ. պեղումներից և հավանաբար նույն վարպետի պատրաստածն է (պահպանվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի Ֆոնդերում):

Հիշյալ խմբի թասերը լայն տարածում ունեն ամբողջ Մերձավոր Արևելքում և Միջին Ասիայում (Սամառա, Խուլբուկ, Աֆրասիար), (*Lamm C.J., 1928, N 13, 14, 17, 18, Гулямова Э., 1961, с. 15*):

Ժողովածուի մեջ են մտնում նաև քիչ կանաչավուն թափանցիկ հաստ ապակուց թասերը, որոնք երբեմն իրենց վրա ունեն խորը ակոսներ: Կա մի եետաքրքիր թաս, խորը, իրանի վրա ունի վերադիր շուրջանակի գնացող հաստ թել (ՉՊՊԹ 2614/72, նկ. 20₇): 1974թ. պեղումների ժամանակ Դվրնի կենտրոնական թաղամասում գտնվել են կրկնակր թասի բեկրներ: Այն ունի բարձր օղակաձև ոտք: Արտաքին թասի պատերը դեղնավուն թափանցիկ ապակուց է. ունի թեք ակրսներ: Ներսի թասի պատերը կանաչավուն ապակուց են պատված են մոխրագույն փառով: Նման կրկնակր անոթներ շատ քիչ են եանդեպում և դժվար է իրանել դրանց կրթառության մասին: Հայտնի է, որ այդ տեխնիկայով արված մի անոթ՝ կրկնակր սափոր գտնվել է Գառնիում:

IX դարի ապակեգործությանը ընդհանրապես է նաև տարբեր չափերի սրվակների և սափորների արտադրությունը: Համեմատած մյուս անոթների հետ, սրանք քանակապես ավելի քիչ են. եայտնի են առայժմ մի քանի տասնյակ օրինակով: Փոքր սրվակները, որոնք կապույտ և թույլ դեղին ապակուց են, եիմնականում ունեն պատվածք (բարձր. մինչև 6,0 սմ): Հետաքրքիրն այն է, որ այս սրվակների հատակները կլոր են և դրանք ուղղա-

հայաց դիրքով առանց հենակի չեն կարող կանգնել (աղ. LIV, 5): Թվում է, որ դրանք կարող էին օգտագործվել ալքիմիական փորձերի ժամանակ կամ ինչ որ պահպանակներում կարող էին դրվել, իրենց մեջ ունենալով կոսմետիկական նյութեր: Բոլորովին այլ նպատակով են օգտագործվել գնդաձև իրանով: Լայն վզով և ռեղանով սրվակները, որոնք պատրաստված են թափանցիկ ապակուց, ըստ ունեն նույնպես պատվածք (աղ. L, 11, LIV, 1,2): Պարզված է, որ ապակե իրեր պատրաստելու ժամանակ վարպետները առաջնորդվել են տարրեր ռադադրանյութերով: Բանն այն է, որ լուսավիրության միջոցները և որոշ անոթներ դարեր շարունակ մնալով հողի մեջ, երրեք պատվածք չեն վերցրել իրենց վիա: Լկլ կիրառության անոթները և հատկապես հաստապատ ռաժակները կոում են իրիզացիայի հետքեր: Ըստ երևույթին վարպետները հնարավոր չափով աշխատել են առաջին իմրի անոթները պատրաստել իրենց եայտնի ռադադրություններով: որոնք ոչ մի արտաքին ազդեցություն չեն կրել: Այս առումով մեզ թվում է, շատ հետաքրքիր պատասխան կարող է տալ քիմիական անալիզը, որի ողոշ քայլերն արդեն արվել են: Համենայն դեպս պարզված է, որ հայկական ծագում ունեցող ապակիների մեջ այլումիսի պարունակությունը ընդհանուր առմամբ և կազմում, որը գալիս է տեղական հումքի առանձնահատկություններից: Նույնը չի կարելի ասել վիացական և մերձավորարևելյան ապակուների մասին:

Շատ հետաքրքիր են տանձաձև իրանով և երկար վզով ռադակապատ թափանցիկ ապակուց մեծ սրվակները (նկ. 18_{1,36}): Դրանք շատ են գտնվիլ Դվինի նախորդ տարիների պեղումներից: Դվինի պեղումներից շարունակվում են գտնվել նաև կապտավուն ռարակ ապակուց, երկար նեղ վզով փորձանոթները, որոնք նույնպես ունեցել են կլոր հատակ (*Քալանթարյան Ա.Ա.*, 1976, էջ 105, նկ. 31_{2,3}): Ալքիմիական փորձանոթների արտադրությունը Դվինում IX դարում ընդարձակվել է ընդհանուր առմամբ ընդարձակվել է եղել: Այս նույն սրվակների հետ գտնվել է նաև մեկ ամբողջական ալսամիսիկ (աղ. L, 6, LIV, 8,9):


IX դարի շերտերում հայտնվել են նաև ալսամիսիկ սրվակներ, ռաժակներ և լայն ռեղանով: երրեք վերադիր թելազարդերով: Քիչ են հաստ պատերով սրվակները: Հայտնի է մեկ օրինակ. կապտավուն ապակուց երկար վիզ է, լայն պսակ վիա կանաչ ապակուց վերադիր ինչ-որ անոթի ռեկորով (աղ. LIV, 3): Համեմատարար քիչ են սափորները: Դրանք պատրաստված են դեղնակապույտ ռարակ ապակուց, ունեն լայն վիզ և երկար կանթեր: Լկլ սափորները եայտնի էին նախորդ տարիների պեղումներից: Կան մեծ սափորներ, առանց կանթի, փչված միևնույն ապակուց (աղ. LIV, 7, 11): Հետաքրքիր տեսք ունի ձգված իրանով և վճիտ թափանցիկ ապակուց անոթը (աղ. LV, 3):

